Р.А. Геворкян, В.Г. Бардахчян ЧИСЛОВЫЕ ХАРАКТЕРИСТИКИ НЕЧЁТКИХ СЛУЧАЙНЫХ ВЕЛИЧИН

Представлены подходы к определению числовых характеристик нечётких случайных величин. Получены результаты, связывающие их с процессом дефазификации.

Ключевые слова: нечёткие случайные величины, оператор математического ожидания, дефазификация.

R.A. Gevorgyan, V.G. Bardakhchyan NUMERICAL CHARACTERISTICS OF FUZZY RANDOM VARIABLES

Some approaches to definition of expectation and variance of fuzzy random variables are represented. Results are derived, closely related to defuzzification process.

Keywords: fuzzy random variables, expectation of mathematical operator, defuzzification.

Գևորգյան Ռուբեն Ալբերտի - տնտեսագիտության գիտությունների դոկտոր, Երևանի պետական համալսարան

Բարդախչյան Վարդան Գևորգի – ասպիրանտ, Երևանի պետական համալսարան

ՀՏԴ 628.472.6.003.12

ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հ.Գ. Գևորգյան, Ա.Վ. Մուսաեյան

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՏԵԽՆԱԾԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ուսումնասիրվել են մետաղական տեխնածին պաշարների (թափոնների) առաջացման և դրանց տնտեսական գնահատման չափորոշիչները: Որոշված է տեխնածին պաշարներում պայմանական մետաղի (պղնձի) նվազագույն պարունակությունը, ինչպես նաև դրա սահմանային շուկայական գինը և ինքնարժեքը: Սահմանված է հումքի անհրաժեշտ (նվազագույն) քանակը: Հետազոտված է տեխնածին պաշարների յուրացման կախվածությունը լրացուցիչ ծախսերից (ներդրումներից) հանքաքարի կորզվող արժողության տարբեր արժեքների պարագայում:

Առանցքային բառեր. մետաղական տեխնածին պաշարներ, տնտեսական գնահատման չափորոշիչներ, օգտակար բաղադրիչի պայմանական նվազագույն պարունակություն, տեսակարար կորզվող արժողություն, պաշարների նվազագույն քանակ:

Մետաղական տեխնածին պաշարները Հայաստանում հսկայական են (մոտ 382 մլն մ³) և դրանց ներգրավումը տնտեսական շրջանառության մեջ ունի մեծ սոցիալ տնտեսական և բնապահպանական նշանակություն: Դրված խնդրի լուծման համար անհրաժեշտ է կատարել նշված պաշարների տնտեսական գնահատում և բազմակողմանի հիմնավորում: Մետաղական հանքային հումքի բնածին պաշարների տնտեսական հիմնավորման հարցերը բազմակողմանի ուսումնասիրված և հիմնավորված են մեծաթիվ անվանի գիտնականների կողմից [1-4]: Այդ հետազոտությունները հնարավորություն են տալիս ընդերքի հանքահումքային երկրաբանական (բնածին) պաշարները բաժանել երկու մասի՝ հաշվեկշռայինի և արտահաշվեկշռայինի: Առաջինը ենթակա է (տնտեսապես ձեռնարկելի և տեխնիկապես հնարավոր) անմիջական մշակման, իսկ երկրորդը համալրում է տեխնածին պաշարների ծավալները, որոնց հետագա օգտագործման ուղղությունները նշված են [5]: Միաժամանակ մետաղական հանքային հումքի հարստացման ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն չեն տալիս հանքաքարից լիարժեք կորզել բոլոր օգտակար բաղադրիչները: Որպես հետևանք՝ առաջանում են բազմաթիվ մետաղներով հարուստ և որոշակի արժեք ներկայացնող արդյունաբերական թափոնների հսկայական ծավալներ, որոնք կուտակվում են պոչամբարներում:

Մետաղական տեխնածին հանքավայրերի քանակական և որակական գնահատման համար առաջարկվում են հետևյալ չափորոշիչները՝ պայմանական օգտակար բաղադրիչի նվազագույն արդյունաբերական պարունակությունը, խտանյութում պայմանական օգտակար բաղադրիչի կորզման գործակիցը, տեխնածին պաշարների նվազագույն ծավալը, վերամշակող ձեռնարկության տարեկան արտադրողականությունը, ապրանքային արտադրանքի տարեկան քանակը՝ արտահայտված ֆիզիկական և արժեքային միավորներով, վերամշակման ինքնարժեքը, պայմանական մետաղի շուկայական գինը, տեխնածին պաշարների վերամշակման արդյունքում ակնկալվող շահույթն ու շահութաբերությունը, տեխնածին հանքավայրի յուրացման (շահագործման) համար անրաժեշտ կապիտալ ներդրումների գումարը և դրանց ետգնման ժամկետը, նախագծի իրականացման բնապահպանական ծախսերը:

Նշված համակարգում առաջնային դեր է խաղում պայմանական օգտակար բաղադրիչի նվազագույն պարունակությունը ($\alpha_{\min}$) [6]: Այն որոշվում է ծախսերի (ինքնարժեքը կազմող) և եկամուտների (հասույթի, կորզվող արժողության) հավասարեցման միջոցով, որը վերջնական տեսքով արտահայտվում է՝

$$\alpha_{\min} \geq (C_1 + C_2 + C_3)100 / (K_1 K_2)(1 - \rho)P, \% , \quad (1)$$

որտեղ C_1 -ը պոչամբարից մինչև հարստացուցիչ ֆաբրիկա տեխնածին պաշարի մշակման (բարձման և փոխադրման) ինքնարժեքն է ($\eta_{\text{մլ/տ}}$), C_2 -ը միավոր տեխնածին պաշարի վերամշակման (հանքահարստացման) ինքնարժեքը ($\eta_{\text{մլ/տ}}$), C_3 -ը խտանյութից մետաղի ստացման ինքնարժեքն է ($\eta_{\text{մլ/տ}}$), K_1 -ը թափոններից հանքահարստացման գործընթացում օգտակար բաղադրիչի կորզման գործակիցը, K_2 -ը՝ խտանյութից մետաղի կորզման գործակիցը, ρ - ն՝ տեխնածին ռեսուրսի որակի կորուստի գործակիցն է, P - ն՝ համապատասխան մետաղի շուկայական գինը ($\eta_{\text{մլ/տ}}$):

Եթե վերջնարդյունքը խտանյութ է, բերված (1) բանաձևը արտահայտվում է առանց C_2 և K_2 բաղադրիչների, իսկ P - ն մետաղի շուկայական գինն է խտանյութում ($\eta\mu\lambda/տ$): Հետևաբար այն կունենա հետևյալ տեսքը՝

$$\alpha_{\min} \geq (C_1 + C_2)100/(K_1(1 - \rho)P),\%: \quad (2)$$

Տեխնածին հումքը կհամարվի կոնդիցիոն և կարող են ենթարկվել վերամշակման ապրանքային արտադրանքի ստացման նպատակով, եթե նրանում օգտակար բաղադրիչի փաստացի պարունակությունը մեծ է նվազագույն արդյունաբերական պարունակությունից: Քանի որ իրականում թե՛ բնածին և թե՛ տեխնածին պաշարները բազմամետաղ են, ապա տնտեսական հաշվարկների պարզեցման համար նպատակահարմար է օգտակար բաղադրիչների պարունակությունը արտահայտել մեկ մետաղով՝ բերման գործակցի միջոցով: Այս դեպքում բերված մետաղը կոչվում է «պայմանական»: Պայմանական օգտակար բաղադրիչի պարունակության որոշման մեթոդիկան «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ օրինակով բերված է [6]: Ժամանակակից տեխնիկատեխնոլոգիական և փոխարժեքային պայմաններին համապատասխան որոշում ենք պայմանական օգտակար բաղադրիչի պարունակությունը կազմակերպության պոչամբարներում կուտակված տեխնածին պաշարների համար (միջին տվյալներով)՝

ըստ պղնձի՝

$$C_{Cu}^{\text{պ.}} = 0,05 * 1,0 + 0,008 * 3,18 \approx 0,080 (\%), \quad (3)$$

ըստ մոլիբդենի՝

$$C_{Mo}^{\text{պ.}} = 0,05 * 0,31 + 0,008 * 1,0 \approx 0,023 (\%): \quad (4)$$

Պղնձի շուկայական արժեքը տեղադրելով (2) բանաձևում՝ կստանանք պայմանական օգտակար բաղադրիչի նվազագույն պարունակությունը տեխնածին պաշարներում՝

$$\alpha_{\min Cu} \geq 0,10\%: \quad (5)$$

Ստացված արդյունքը համեմատելով «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ պոչամբարների փաստացի տվյալների հետ՝ կարող ենք եզրակացնել, որ տեխնածին պաշարներում պայմանական պղնձի փաստացի պարունակությունը մետաղների ներկայիս գների և վերամշակման ինքնարժեքների դեպքում որոշակի չափով չի բավարարում կոնդիցիայի պահանջներին ($0,08 < 0,10$) [7]: Հետևաբար, գոյություն ունեցող տեխնոլոգիաներով, մետաղների (պղնձի և մոլիբդենի) պարունակություններով և շուկայական գներով տեխնածին պաշարների վերամշակումը դեռևս տնտեսապես ձեռնտու չէ:

Այլ հավասար պայմանների համար (2) արտահայտությունից որոշենք մետաղների այն սահմանային գինը, որի պարագայում տեխնածին պաշարները կունենան արդյունաբերական նշանակություն՝

$$P \geq (C_1 + C_2)100/(\alpha_{\min} K_1(1 - \rho)), \eta\mu\lambda/տ \quad (6)$$

Տեղադրելով գործնական տվյալները (Cu -ի համար) կստանանք.

$$P \geq (4,0 \cdot 100)/(0,08 \cdot 0,8 \cdot 0,92) \approx 6800, \eta\mu\lambda/տ: \quad (7)$$

Այսպիսով, մեր կողմից հետազոտվող տեխնածին պաշարները ավանդական տեխնոլոգիայով կարելի է վերամշակել միայն այն դեպքում, երբ պղնձի մեկ տոննայի միջազգային գինը դառնա ավելի քան 6800 դոլար (ԱՄՆ) [8]:

Նույն (2) արտահայտությունից կարելի է որոշել նաև վերամշակման սահմանային ինքնարժեքը (C_0), որի դեպքում տեխնածին պաշարները կունենան արդյունաբերական նշանակություն՝

$$C_0 = C_1 + C_2 \leq (\alpha_{\min} K_1(1 - \rho)P)/100 = 3,4, \eta\mu\lambda/տ: \quad (8)$$

Ստացված ինքնարժեքը ($3,4 \eta\mu\lambda/տ$) մոտ ապագայում իրատեսական չէ, քանի որ ներկայումս այն կազմում է մոտ $4,0 \eta\mu\lambda/տ$: Տեխնածին պաշարների տնտեսական հիմնավորման և արդյունաբերական յուրացման համար կարևոր նշանակություն ունի հումքի նվազագույն քանակի որոշման հարցը, որն առաջարկվում է լուծել՝ ելնելով որոշակի տեխնածին պաշարների (թափոնների, հարստապոչների) յուրացման համար անհրաժեշտ լրացուցիչ ծախսերի ($C_{\text{լր}}$, մլն դոլ) պարտադիր ետգնման (վերադրաձման) պայմանից հետևյալ արտահայտությամբ.

$$C_{\text{լր}} \leq Q_{\min}(U - C_0)K_{\text{գ}}(1 - \rho_{\text{գ}}), \quad (9)$$

երբ՝ $U > C_0$,

որտեղ $Q_{\min}$ -ը մշակման ենթակա պաշարների նվազագույն քանակն է (*մլն. տոննա*),

U -ն միավոր (տոննա) պաշարի կորզվող արժողությունն է ($\eta\mu\lambda/տ$), որը որոշվում է հայտնի եղանակով [4].

C_0 –ն միավոր պաշարի մշակման (բարձրման) փոխադրման և վերամշակման (հարստացման) լրիվ ինքնարժեքն է ($\eta\mu\lambda/տ$), K_{α} –ն պաշարների կորզման գործակիցն է, որը հաշվի է առնում հիմնականում նորմերը գերազանցող (չնախատեսված) կորուստները: Եթե կորուստները կազմում են 10 %, ապա՝ $K_{\alpha} = 1-0,1=0,9$: ρ_{α} –ն պաշարների որակի փոփոխման գործակիցն է, որը հաշվի է առնում հանքաքարի լրացուցիչ (չնախատեսված) աղքատացումը՝ որակի կորուստը տեխնաձին պաշարներում: Եթե աղքատացումը 5 % է, ապա $\rho_{\alpha} = 1-0,05=0,95$:

Վերը բերված (9) արտահայտությամբ կարելի է որոշել տեխնաձին պաշարների նվազագույն քանակը՝

$$Q_{\min} \geq C_{\text{լր}} / ((U - C_0) K_{\alpha} (1 - \rho_{\alpha})), \text{ մլն տոննա:} \quad (10)$$


Որքան փաստացի պաշարները գերազանցեն $Q_{\min}$ -ին, այնքան ավելի վստահ կարելի է պնդել, որ կատարված լրացուցիչ ծախսերը ($C_{\text{լր}}$) կվերադարձվեն շահույթի ձևով: Տեսական և գործնական նշանակություն ունի պաշարների նվազագույն ծավալի ($Q_{\min}$) գրաֆիկական կախվածությունը դրանց արդյունաբերական յուրացման լրացուցիչ ծախսերից ($C_{\text{լր}}$) հանքաքարի տարբեր կորզվող արժողությունների (U) դեպքում (նկ.):

Գրաֆիկը կառուցված է գործնական տվյալների հիման վրա դուրս բերված հետևյալ բանաձևին համապատասխան՝

$$Q_{\min} = C_{\text{լր}} / A, \text{ մլն տոննա,} \quad (11)$$

որտեղ A -ն հաստատուն թիվ է, որը կախված է U -ից (տես՝ աղ.):

Աղյուսակ A հաստատուն թվի արժեքները՝ կախված հանքաքարի տեսակարար կորզվող արժողությունից (U)	
U-ի արժեքը ($\eta\mu\lambda/տ$)	A-ի արժեքները
4,5	0,38
5,0	0,76
5,5	1,14
6,0	1,52
6,5	1,90
7,0	2,28



Նկ. Տեխնաձին պաշարների
նվազագույն քանակի ($Q_{\min}$)
կախվածությունը դրանց
յուրացման լրացուցիչ ծախսերից
($C_{\text{լր}}$)՝ հանքաքարի տարբեր
կորզվող արժողությունների (U)
դեպքում

Ինչպես երևում է բերված գծագրից (նկ.) նշված կախվածությունները ուղիղ գծային են: Ըստ որում, նույն (հաստատուն) ինքնարժեքի դեպքում որքան աճում է միավոր հանքաքարի կորզվող արժողու-

թյունը (Մ), այնքան ուղիղը (կորը) մոտենում է ծախսերի առանցքին՝ փոքրացնելով α անկյունը: Դա նշանակում է, որ հանքաքարի կորզվող արժողության աճին համեմատական նվազում է պաշարների անհրաժեշտ (նվազագույն) քանակը: Այսինքն՝ որքան «հարուստ» տեխնածին պաշար ենք վերամշակում մետաղի բարձր գնով և ինովացիոն տեխնոլոգիայով, այնքան քիչ պաշար է անհրաժեշտ լրացուցիչ ծախսերը (ներդրումները) արդարացնելու համար:

Նշենք, որ նույն մոտեցումով կարելի է որոշել նաև բնածին հանքավայրի նվազագույն պաշարները:

Գրականություն

1. **Агошков М.И., Терпегосов З.А., Шитарев В.Г.** Параметры кондиций на полезные ископаемые в процессе разработки месторождений // Горный журнал. -1982. - №7. - С. 38-40.
2. **Каплунов Д.Р., Радченко Д.Н.** Обоснование полного цикла комплексного освоения недр при разработке месторождений твердых полезных ископаемых. – Отд. вып. №1 // Тр. научн. симп. “Неделя горняка – 2011”. – ГИАБ, 2011. - С.447-455.
3. Комплексное освоение месторождений и глубокая переработка минерального сырья / Ин-т проблем комплексного освоения недр РАН / **К.Н. Трубецкой, В.А. Чантурия, Д.Р. Каплунов** и др.–М.: Наука, 2010. – 437 с.
4. **Агабян Ю.А.** Общая теория оптимального освоения недр (твердые полезные ископаемые). - Ереван: ЗАО «Гракан Айреник» (изд-во “Айастан”), 2014. - 288 с.
5. **Գևորգյան Հ.Գ., Մուսաելյան Ա.Վ.** ՀՀ տեխնածին հանքավայրերի կադաստրավորման ընդհանուր հարցերը / ՀՀ ԳԱԱ Մ. Քոթայանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Գիտական հոդվածների ժողովածու.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016. - էջ 234-238:
6. **Մուսաելյան Ա.Վ.** Տեխնածին պաշարների տնտեսական գնահատման պարամետրերը // Ֆինանսներ և էկոնոմիկա. - ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016.- 9-10 (193-194). - էջ 105-113:
7. **«Զանգեզուրի»** պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, հաշվետվություն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման. – Քաջարան, 2016.-257 էջ:
8. <http://metal4u.ru/lme/>

10.01.2017.

Г.Г. Геворгян, А.В. Мусаелян

ЭКОНОМИЧЕСКАЯ ОЦЕНКА МЕТАЛЛИЧЕСКИХ ТЕХНОГЕННЫХ ЗАПАСОВ

Изучены направления образования и использования металлических техногенных запасов (отходов), а также параметры их экономической оценки. Определены минимальное содержание условного металла (меди) в техногенных запасах, а также его предельная рыночная стоимость и себестоимость. Установлен необходимый (минимальный) объем запасов сырья. Исследована зависимость освоения техногенных запасов от суммы дополнительных затрат (вложений) при различных значениях извлекаемой ценности руды.

Ключевые слова: металлические техногенные запасы, критерии экономической оценки, условное минимальное содержание полезного компонента, удельная извлекаемая ценность, минимальное количество запасов.

H.G. Gevorgyan, A.V. Musaelyan

ECONOMIC EVALUATION OF METAL TECHNOGENIC RESOURCES

The directions of education and use of metal technogenic resources (wastes), and also parameters of their economic evaluation are studied. Minimum content of conditional metal (copper) in technogenic resources, and also its ceiling market value and cost value are determined. A necessary (minimum) inventory quantity of raw materials is established. Dependence of conversion of technogenic resources from an additional cost amount (investments) is researched in case of various values of the extracted ore value.

Keywords: metal technogenic resources, criteria of an economic evaluation, conditional minimum content of a useful component, specific taken value, minimum quantity of inventories.

Գևորգյան Հրաչիկ Գարսևանի - տ.գ.թ., դոցենտ (ՀԱՊՀ)

Մուսաելյան Արփինե Վալերիի – դասախոս (ՀԱՊՀ)


Ա.Գ. Գևորգյան

ԱՎԱՆԴԱՅԻՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԸ


Կատարվել է առևտրային բանկի ֆինանսական ժամանակային շարքերի պատճառահետևանքային կապի ստուգում: Նշված ժամանակային շարքերի համար կիրառվել է մոտարկում եռանկյունաչափական տրենդի միջոցով: Գրենջերի թեստը կիրառվել է սկզբնական ժամանակային շարքերի և մոտարկված ժամանակային շարքերի համար:

Առանցքային բառեր. բանկում տրամադրված վարկեր, բանկում ներգրավված ավանդներ, եռանկյունաչափական տրենդով մոտարկում, Գրենջերի թեստ:

Տվյալները: Որպես տվյալներ ուսումնասիրվել են Պրոմեթեյ բանկի վարկերի, ավանդների 2013-2014 թթ. օրական ժամանակային շարքերը, որոնց գրաֆիկները տրված են նկ. 1 և 2-ում [1]:



Նկ. 1. Բանկում տրամադրված վարկերի ժամանակային շարքը



Նկ. 2. Բանկում ներգրավված ավանդների ժամանակային շարքը

Ֆինանսական ժամանակային շարքերի պատճառահետևանքային կապի ստուգում: Ժամանակային շարքերի միջև պատճառահետևանքային կապի բացահայտումը կարևոր նշանակություն ունի այդ շարքերի փոխկապվածությունների բացահայտման և մի շարքը մյուսի միջոցով կանխատեսելու համար: Ավանդային և վարկային պորտֆելների միջև պատճառահետևանքային կապի ստուգումը իրականացվել է Գրենջերի թեստի կիրառմամբ [2]: Տե՛ս աղյ. 1:

Աղյուսակ 1

Թեստի կիրառման արդյունքում ստացվել է հետևյալ արդյունքը

Pairwise Granger Causality Tests

Date: 01/26/17 Time: 00:58

Sample: 1/01/2013 12/31/2014

Lags: 2

Null Hypothesis:	Obs	F-Statistic	Probability
VARK does not Granger Cause AVAND	728	1.19684	0.30274
AVAND does not Granger Cause VARK		1.84167	0.15929

Թեստում զրոյական վարկածն այն է, որ վարկերի և ավանդների շարքերի միջև պատճառահետևանքային կապը բացակայում է: Քանի, որ Probability-ն մեծ է 0.05-ից, 5% արժեքականության մակարդակում զրոյական վարկածն ընդունում ենք: Թեստի արդյունքը ցույց է տալիս, որ ավանդների և վարկերի պորտֆելների միջև պատճառահետևանքային կապը բացակայում է [3]:

Ավանդների և վարկերի պորտֆելների մոտարկումը եռանկյունաչափական տրենդի միջոցով:
 Ավանդների և վարկերի պորտֆելների եռանկյունաչափական տրենդի միջոցով մոտարկումը իրականացվել է հետևյալ բանաձևի միջոցով, որտեղ k հաճախականությունները ընտրվել են էմպիրիկ ձևով՝ $k_1=0.15$, $k_2=2$ [4]: Ժամանակային շարքը՝ $C(1) + C(2)*\sin 2\pi k_1 t/s + C(3)*\cos 2\pi k_2 t/s$:

Մոտարկման համար կառուցված ռեգրեսիոն հավասարումները ներկայացված են աղյ. 2 և 3-ում:

Աղյուսակ 2

Dependent Variable: AVAND				
Method: Least Squares				
Date: 01/26/17 Time: 00:52				
Sample: 1/01/2013 12/31/2014				
Included observations: 730				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	9903367.	120847.4	81.94936	0.0000
SIN2Pk1t/S	10816668	242689.1	44.57005	0.0000
COS2Pk2t/S	-783149.0	81494.16	-9.609879	0.0000
R-squared	0.741918	Mean dependent var		14638640
Adjusted R-squared	0.741209	S.D. dependent var		3059520.
S.E. of regression	1556425.	Akaike info criterion		31.35778
Sum squared resid	1.76E+15	Schwarz criterion		31.37666
Log likelihood	-11442.59	F-statistic		1044.970
Durbin-Watson stat	0.033832	Prob(F-statistic)		0.000000

Աղյուսակ 3

Dependent Variable: VARK				
Method: Least Squares				
Date: 01/26/17 Time: 00:53				
Sample: 1/01/2013 12/31/2014				
Included observations: 730				
Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	23608196	86558.44	272.7428	0.0000
SIN2Pk1t/S	4073406.	173829.1	23.43340	0.0000
COS2Pk2t/S	-563620.4	58371.20	-9.655796	0.0000
R-squared	0.471331	Mean dependent var		25391570
Adjusted R-squared	0.469876	S.D. dependent var		1531129.
S.E. of regression	1114809.	Akaike info criterion		30.69037
Sum squared resid	9.04E+14	Schwarz criterion		30.70924
Log likelihood	-11198.98	F-statistic		324.0751
Durbin-Watson stat	0.029934	Prob(F-statistic)		0.000000

Գնահատման արդյունքները՝ F-վիճականին, t-վիճականին, ցույց են տալիս, որ մոդելները ընդհանուր առմամբ վիճակագրորեն նշանակալի են: Ճշգրտված դետերմինացիայի գործակիցները ցույց են տալիս, որ ավանդային պորտֆելը գրեթե 74%-ով, իսկ վարկային պորտֆելը՝ 47%-ով, բացատրվում են եռանկյունաչափական տրենդի միջոցով:

Այնուհետև մոտարկման արդյունքում ստացված վարկային և ավանդային պորտֆելների համար ևս մեկ անգամ կիրառվել է Գրենջերի պատճառահետևանքային կապի ստուգման թեստը [5]: Արդյունքները ներկայացված են աղյ. 4-ում:

Աղյուսակ 4

Pairwise Granger Causality Tests			
Date: 01/26/17 Time: 00:59			
Sample: 1/01/2013 12/31/2014			
Lags: 2			
Null Hypothesis:	Obs	F-Statistic	Probability
VARKMOTARKAC does not Granger Cause AVANDMOTARKAC	728	1.6E+12	0.00000
AVANDMOTARKAC does not Granger Cause VARKMOTARKAC		8.5E+09	0.00000

Թեստում գրոյական վարկածը մոտարկած վարկային պորտֆելի և մոտարկած ավանդային պորտֆելի միջև պատճառահետևանքային կապի բացակայությունն է: Քանի որ Probability-ները փոքր են 0.05-ից, 5 % սխալվելու հավանականությամբ գրոյական վարկածը կմերժենք: Թեստի արդյունքները ցույց են տալիս, որ նշված ժամանակային շարքերի միջև գոյություն ունի պատճառահետևանքային կապ:

Եզրակացություն: Կատարելով վարկերի և ավանդների պորտֆելների պատճառահետևանքային կապի ստուգում սկզբնական և մոտարկած շարքերի համար՝ պարզվել է, որ թեստը տարբեր արդյունքներ է ցույց տալիս: Ստացվել է, որ շարքերից առանձնացնելով եռանկյունաչափական տրենդը, շարքերի միջև պատճառահետևանքային կապը ուժեղացել է: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ժամանակային շարքերը, որոնց միջև տեսականորեն պետք է լինեին պատճառահետևանքային կապ, առանց մոտարկման կարող են այդ արդյունքը ցույց չտալ: Մոտարկումը թույլ է տալիս շարքերից առանձնացնել եռանկյունաչափական տրենդը և տեսնել, թե արդյոք այդ կապը իրականում կա:

Հեղինակը շնորհակալություն է հայտնում պրոֆեսոր Արամ Առաքելյանին ուսումնասիրվող հիմնախնդրի ձևակերպման և հետազոտության ուղղությունը որոշելու համար:

Գրականություն

1. www.prometeybank.am
 2. **Engle R.F., Granger C.W.J.** Cointegration and Error Correction: Representation, Estimation, and Testing // *Econometrica*.- 1987.- V. 55, №2.
 3. **Nerlove M.** Spectral Analysis of Seasonal Adjustment Procedures // *Econometrica*.- 1964.- Vol. 32(3).- P. 241-286.
 4. **МИЭФ ГУ-ВШЭ** Пособие для студентов по курсу "Анализ временных рядов".- М., 2003.
 5. **Granger C.W.J.** Investigating Casual Relations by Econometric Mode Cross Spectral Methods // *Econometrica*.-1969.- Vol. 37(3). - P. 424-438.
- 26.01.2017.

А.Г. Геворгян

ПРИЧИННО-СЛЕДСТВЕННАЯ СВЯЗЬ КРЕДИТНОГО И ДЕПОЗИТНОГО ПОРТФЕЛЕЙ БАНКА

Проведен тест на причинно-следственную связь финансовых временных рядов банка. Для данных временных рядов применена аппроксимация с тригонометрическим трендом. Тест Гренджера применен и для изначальных, и для приближенных временных рядов.

Ключевые слова: банковские кредиты, банковские депозиты, аппроксимация с тригонометрическим трендом, тест Гренджера.

A.G. Gevorgyan

CAUSALITY OF BANK CREDIT AND DEPOSIT PORTFOLIO

Causality test is carried out for the bank financial time-series. For these time-series an approximation with trigonometrical trend is done. Granger test is applied both for the actual time-series and the approximated time-series.

Keywords: bank loans, bank deposits, approximation with trigonometrical trend, Granger test.

Գևորգյան Աննա Գեղամի – տնտեսագիտական գիտությունների թեկնածու (ԵՊՀ)

Ն.Գ. Մնացականյան

**ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀՀ
ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄ**

Դիտարկվում են բյուջետային ավիաընկերությունների առանձնահատկությունները և տնտեսում ապահովող ուղիները: Բացահայտվել են ՀՀ-ում օդային փոխադրումների ոլորտում առկա խնդիրները և հիմնավորվել է հայկական բյուջետային ավիաընկերության ստեղծման անհրաժեշտությունը:

Առանցքային բառեր. *բյուջետային ավիաընկերություն, տնտեսում, օդանավ, օդային փոխադրումներ, չվացուցակ:*

Վերջին տարիներին աշխարհում լայն տարածում է գտել բյուջետային ավիաընկերության (լոուքոսթ) գաղափարը: Ներկայում միայն Եվրոպայում գործում է 45 բյուջետային ավիաընկերություն, որոնք սպասարկում են ավելի քան 3500 ուղղություն: Աշխարհի բյուջետային ավիաընկերություններն ապահովում են համաշխարհային օդային փոխադրումների շուրջ 25%-ը: Վերջին տասնամյակի՝ 2003-ից 2012 թթ. ընթացքում դրանց մասնաբաժինն ավելացել է 3 անգամ [1]:

Բյուջետային ավիաընկերությունները նոր տեսակի ավիաընկերություններ են: Դրանք օդային փոխադրումների ոլորտում նոր մոտեցումներ են դրսևորում, որոնք արտահայտվում են «քիչ ծախսեր, ցածր սակագներ, բարձր պահանջարկ, մեծ եկամուտ» ընդհանուր մոտեցմամբ: Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության որոշման համաձայն բյուջետային ավիաընկերությունը այն փոխադրողն է, որն այլ փոխադրողների համեմատ ապահովում է համեմատաբար քիչ ծախսեր և առաջարկում է ցածր սակագներ [1], սակայն չեն մատուցվում այլ չվերթների դեպքում սովորական դարձած ծառայությունները: Մասնավորապես, օդանավի սրահը չի բաժանվում դասերի, ավիաընկերությունը կիրառում է մեկ տիպի օդանավ, օդանավում բացակայում են լրացուցիչ սարքավորումները, կիրառվում է տոմսերի առցանց վաճառք, իրականացվում է աշխատակազմի թվի նվազեցում, ընտրվում է առավել շահավետ ժամանակահատված և օգտագործվում են թերթեռնված օդանավակայանները, տեղերը հստակ չեն սահմանվում, ուղևորները սննդով չեն ապահովվում, չվերթներն իրականացվում են ուղիղ և պարզեցված երթուղիներով, կրճատվում կամ հանվում են լրացուցիչ ծառայությունները, նաև ընկերությունը ստանում է լրացուցիչ հասույթ՝ օդանավում ապրանքների վաճառքից և այլն: Այս ամենի շնորհիվ հնարավորություն է ստեղծվում էապես կրճատել ավիաընկերության ծախսերը, հետևաբար և նվազեցնել տոմսի արժեքը:

Այսպիսով, բյուջետային ավիաընկերությունները գերադասում են չվերթների արդյունավետության բարձրացում՝ առանց միջնորդների ցածր սակագնով ավիատոմսերի վաճառքի և միայն ցանկացողներին առանձին վճարի դիմաց լրացուցիչ ծառայությունների տրամադրման միջոցով: Դրանք գրավիչ են ինչպես գործարար ուղևորների, այնպես էլ զբոսաշրջիկների համար՝ չվերթների բարձր հաճախականության և կիրառվող սակագների համեմատաբար ցածր մակարդակի շնորհիվ [2]:

Բյուջետային ավիաընկերություններին բնորոշ են նաև հետևյալ դրույթները.

- ավիատոմսի գնի բարձրացում ինքնաթիռի ծանրաբեռնվածությունից կախված՝ ուղևորների նախօրոք կատարվող ամրագրումները խրախուսելու նպատակով,

- նստեցման կտրոնների վրա նստատեղերի վերաբերյալ տեղեկության բացակայություն. այս հանգամանքը բյուջետային ավիաընկերություններն օգտագործում են ուղևորներին խրախուսելու համար՝ ավելի շուտ բարձրանալ ինքնաթիռ և զբաղեցնել նստատեղ: Երբեմն բյուջետային ավիաընկերությունները առանձին վճարների դիմաց վաճառում են նաև նստատեղը օդանավում,

- չվերթների իրականացում վաղ առավոտյան կամ ուշ երեկոյան ժամերին ավելի քիչ ծանրաբեռնված կամ երկրորդային օդանավակայաններում [3],

• օրվա ընթացքում մեկ ինքնաթիռով մի քանի չվերթների իրականացում, ընդ որում օդանավակայաններում 2 ժամից ոչ ավելի կանգառներով,

• բյուջետային ավիաընկերության աշխատակիցների կողմից միաժամանակ մի քանի պարտականությունների կատարում,

• եթե դասական ավիաընկերությունների մոտ ավիատոմսի գինը ներառում է նաև ձեռքի ուղեբեռ և մեկ կտոր գրանցված իր, ապա բյուջետայինների դեպքում կարելի է փոխադրել միայն ձեռքի իրեր: Վճարովի ուղեբեռի փոխադրումն իրականացվում է առանձին վճարի դիմաց, որը կարող է ավիատոմսի արժեքից ավելի թանկ լինել:

Տնտեսումը բյուջետային ավիաընկերություններում ապահովվում է հետևյալ հիմնական եղանակներով.

• օդանավերի լավագույն օգտագործում. քանի որ դրանք հիմնականում իրականացնում են կետից կետ չվերթներ, չունեն մեկնման և ժամանման ժամերի նախապատվություն, կարող են իրականացնել հաճախակի չվերթներ և նվազեցնել թռիչքի մեկ ժամի համար կատարվող ծախսերը,

• միևնույն տիպի օդանավի օգտագործում. (գործող բյուջետային ավիաընկերությունների 30 %-ը շահագործում է Airbus A320, իսկ 33 %-ը՝ Boeing B737) և հետևաբար տեխսպասարկման և անձնակազմի ուսուցման վրա կատարվող ավելի քիչ ծախսեր, անձնակազմի գործունեության ավելի բարձր արդյունավետություն [3],

• քիչ քանակությամբ անձնակազմ,

• լրացուցիչ եկամուտների ստացում օդանավում ծառայությունների և ապրանքների վաճառքից, օրինակ՝ ավանդական ծառայությունների (ավիասնունդ, զվարճանքներ) տրամադրում առանձին վճարների դիմաց,

• ավիատոմսի ետվերադարձի հնարավորության բացակայություն [1]:

Հայաստանը նպատակահարմար շուկա է նշված տիպի ավիաընկերության համար: Հաշվի առնելով ՀՀ օդային փոխադրումների շուկայի առանձնահատկությունները, օդային փոխադրումների կարգավորման ոլորտում տեղի ունեցած էական փոփոխությունները՝ ՀՀ-ում անհրաժեշտ է ունենալ հայկական բյուջետային ավիաընկերություն, որը պետության կողմից աջակցություն կստանա (դոտացիաներ) և կմատուցի բարձրակարգ ծառայություններ ավելի մատչելի գներով եւ ավելի շատ ուղղություններով: Տեղական ավիափոխադրողին անհրաժեշտ կլինեն բավարար քանակությամբ եւ սահմանված պահանջներին առավելագույնս համապատասխանող օդանավեր: Հայկական բյուջետային ավիաընկերությունը պետք է ունենա գրավիչ չվացուցակ, օդային երթուղիների ցանցի բավարար լայնություն եւ խորություն (ուղղությունների քանակ եւ նշված ուղղություններով չվերթերի հաճախականություն), հնարավորություն ունենա ապահովել հուսալի սպասարկում, առաջարկել մրցունակ սակագին, առևտրային ոլորտում պետք է ունենա բավարար փորձ եւ կառավարման հմտություններ, ինչպես նաեւ ճիշտ կառավարման արդյունքում ունակ լինի օպտիմալացնելու եկամուտներն ու ծախսերը և կարողանա ապահովել շահույթ:

Գրավիչ ծառայություն առաջարկելու համար տեղական ավիափոխադրողը պետք է որոշակի գերակայող ուղղություններով չվերթեր իրականացնի տարբեր սեզոնների հաճախորդներ ներգրավելու համար, ինչպես նաև օգտագործելով «Զվարթնոց» օդանավակայանի հարմար աշխարհագրական դիրքը, ապահովել նաև տարանցիկ փոխադրումներ:

Կատարված հետազոտությունները թույլ են տալիս փաստելու, որ բավարար խորություն եւ լայնություն ունեցող ցանցով ՀՀ մրցունակ ավիափոխադրողին անհրաժեշտ կլինի ունենալ նվազագույնը 2 օդանավ: ՀՀ ավիափոխադրողի ցանցը պետք է ապահովի չվերթեր 7 պարտադիր ուղղությամբ, (բավարար պահանջարկ, մեծ քանակությամբ հայկական համայնք ունեցող ուղղություններ): Ընդ որում, անհրաժեշտ է շահագործել A-320 տեսակի օդանավեր (աղյուսակ):

Կատարված հետազոտության արդյունքում դիտարկվել են նաև բյուջետային ավիաընկերության ստեղծման համար ՀՀ-ում առկա խոչընդոտները:

Հայաստանի օդանավակայանների բիզնեսում գոյություն ունեցող մենաշնորհը լուրջ խոչընդոտ է ցածր արժեք ունեցող փոխադրումներ իրականացնելու համար: Մեփական ավիափոխադրողների համար օդանավակայանային ծախսերը օտարերկրյա ավիաընկերությունների ծախսերից բարձր են, ինչի արդյունքում հայկական ավիաընկերությունները մյուսների նկատմամբ անհավասար պայմանների մեջ են ընկնում, և նրանց մրցունակությունը նվազում է: Ուստի անհրաժեշտ է միջոցներ

ձեռնարկել մենաշնորհից ազատվելու, ինչպես նաև «Հայաստանի միջազգային օդանավակայաններ» ընկերության հետ սակագների նվազեցման հարցում համաձայնության գալու նպատակով:

Հաշվի առնելով Գյումրու «Շիրակ» օդանավակայանի քիչ ծանրաբեռնվածությունը, ինչպես նաև համեմատաբար ցածր սակագների կիրառումը, հայկական բյուջետային ավիաընկերությունը կարող է դիտարկել նաև տվյալ օդանավակայանից չվերթներ իրականացնելու հարցը:

Աղյուսակ

ՀՀ փոխադրողի համար առաջարկվող չվացուցակը

Օր	Ինքնաթի- ռի տիպը	Մեկ- նում	Ժամա- նում	Ուղղություն	Մեկ- նում	Ժամա- նում	Թռիչքի տևողություն
1234567	A-320 (1)	09:45	12:20	Մոսկվա(Վնուկովո)	13:55	16:20	2ժ35ր/ 2ժ25ր
1234567	A-320 (1)	18:00	20:35	Մոսկվա(Վնուկովո)	22:00	00:25/+1	2ժ35ր/2ժ25ր
1 3 5	A-320 (2)	11:00	12:30	Կրասնոդար	14:10	15:35	1ժ30ր/ 1ժ25ր
3	A-320 (2)	17:00	19:40	Մամարա	21:00	23:35	2ժ40ր/ 2ժ35ր
6	A-320 (2)	09:00	12:45	Ս. Պետերբուրգ	14:30	17:55	3ժ45ր/ 3ժ25ր
7	A-320 (2)	08:00	09:20	Սոչի	11:00	12:15	1ժ20ր/1ժ15ր
7	A-320 (2)	14:00	16:50	Ն. Նովոգորոդ	18:10	21:00	2ժ50ր/ 2ժ50ր
4	A-320 (2)	10:00	12:55	Կիև	13:30	16:20	2ժ55ր/ 2ժ50ր

Գրականություն

1. **Семенов А.А.** Территориальная структура низкобюджетных пассажирских авиаперевозок мира. – М., 2014.- 184 с.
2. **Экономика гражданской авиации:** Учебное пособие / Под общ. ред. Н.И. Степановой.– М.: МГТУ ГА, 2014.-130 с.
3. **Bijan Vasigh, Ken Fleming, Thomas Tacker.** Introduction to Air Transport Economics.-USA, 2008.- 358 p.

28.11.2016.

Н.Г. Мнацаканян

СОЗДАНИЕ БЮДЖЕТНЫХ АВИАКОМПАНИЙ КАК ПРОЯВЛЕНИЕ НОВЫХ ПОДХОДОВ В СФЕРЕ ВОЗДУШНЫХ ПЕРЕВОЗОК РА

Рассматриваются особенности бюджетных авиакомпаний и пути обеспечения экономии. Выявлены существующие проблемы в сфере воздушных перевозок РА и обоснована необходимость создания армянской бюджетной авиакомпании.

Ключевые слова: бюджетная авиакомпания, экономия, самолет, воздушные перевозки, расписание.

N.G. Mnatsakanyan

THE DEVELOPMENT OF LOW COST AIRLINES AS A DEMONSTRATION OF A NEW APPROACH IN AREA OF RA AIR TRANSPORTATION

The features of low cost airlines and ways of savings providing are considered. Current issues in the field of air transportation of RA are identified and the necessity of Armenian low cost airline development is substantiated.

Keywords: low cost airline, saving, aircraft, air transportations, schedule.

Մնացականյան Նարինե Գագիկի - ՀԱՊՀ Մեխանիկամեքենաշինական, տրանսպորտային համակարգերի եվ դիզայնի ինստիտուտի Տնտեսագիտության և փոխադրումների կազմակերպման ամբիոնի ասիստենտ, Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում մասնագիտությամբ հեռակա ուսուցման 4-րդ կուրսի ասպիրանտ

A.A. Nanyan

ON AN APPROACH FOR THE ASSESSEMENT OF RISKY INVESTMENTS AND INSURANCE PREMIA

Identification and optimization of risks are the two principal stages of risk management. In the current paper we attempt to formally analyze these issues in the context of risky investments. Specifically, we present a simple two asset investment problem and under reasonable assumptions obtain a formula for shares of these assets in the initial wealth of a decision-maker. Additionally, in the logic of the first model we consider the problem of the investment insurance as a mechanism of optimizing the underlying risk. After some straightforward manipulations, we derive the amount of the investment premium as a function of model parameters. We suggest that due to their simplicity these findings can be used in different practical applications.

Keywords: *identification, risk management, an investment risk, insurance.*

Introduction. The logical roots of financial decisions are in Bayesian decision theory. The fundamental results of this theory explain why properly constructed mathematical models give a reasonable description of financial institutions' behaviour. In particular, it shows that any decision-maker who satisfies certain axioms (i.e. is rational) should always behave so as to maximize the expected value of some utility function with respect to some probability distribution [1]. In other words, we can characterize any rational decision-maker's behaviour by a utility function quantitatively capturing his preferences for outcomes and a probability distribution characterizing his beliefs about unknown factors. Moreover, as new information becomes available to such a decision-maker, probabilities should be revised according to Bayes' formula.

Decisions under uncertainty can generally be analyzed in a probability or a state-variable model. The first setting that was proposed by Anscombe and Aumann defines lotteries as probability distributions [2]. These lotteries are based on events that have objective probabilities and are referred to as objective unknowns. However, especially in financial markets there are also instances when events of interest do not have obvious probabilities. These events are called subjective unknowns and the gambles that depend on them are typically described in a state-variable model [3]. The reason is that the latter allows us to specify lotteries as functions from a set of states into a set of prizes without making use of probabilities. It is important to note that both the probability and the state-variable approaches are very much consistent with axiomatic foundations of Expected Utility theory.

In the article [4] we have studied general principles of investments made in the presence of uncertainty. In particular, in the simple setting of optimal portfolio choice we have derived the condition ensuring an investor's participation in a risky project and obtained some comparative static results of an investment decision. Notice, however, that within the scope of that paper the question about the distribution shares of an investor's initial wealth between a risky and a secure asset has been left open. The literature also does not appropriately address this question and does not specify which part of his wealth an individual should invest in a risky asset and which part - in a secure asset, depending on his preferences and exogenous conditions. The first part of this article is devoted to the analysis of this issue. Here, to some extent, we are concerned about quantitative measurement of the investment risk in terms of the wealth of a decision maker.

In the second part of this article we examine one of the methods of minimization of the investment risk, the investment insurance. The difficulty concerning investment decisions is that we need to determine the level of risk (its cutoff value) that is acceptable by a rational agent and choose adequate methods of its management and control. The risk insurance presumes a transfer of the underlying risk to an insurance company. Interestingly, in the context of lending the insurance contract can serve as security for a loan and minimize the respective risk in this way. Further, in this case all insurance costs relate to the borrower. In the event of an undesirable outcome (when the borrower is not able to repay his loan) the bank will have an opportunity to get compensation from the insurance company in accordance with the conditions of the contract.

The share of the risky asset. Suppose α is the share of the risky asset in the initial wealth of the individual, and β - the share of the secure asset. The return on the riskless asset is denoted by q . Naturally, q is supposed to be a deterministic variable. By contrast, the return on the risky asset, $\tilde{p}$, is a random variable and admits two values, p and 0 . We know the probability

$$P(\tilde{p} = p) = r,$$

which relates to the fact, that the risky asset pays out a positive return.

Given the existence of the risk-return compromise, it is natural to assume that

$$p > q.$$

The final wealth of the investor is a random variable as well and takes on the following form:

$$\omega_1 = \alpha\omega(1 + \tilde{p}) + \beta\omega(1 + q) + \omega - \alpha\omega - \beta\omega.$$

It is clear, that

$$\omega_1 = \begin{cases} \alpha\omega(1 + p) + \beta\omega(1 + q) + \omega - \alpha\omega - \beta\omega = \omega + \alpha\omega p + \beta\omega q, & \text{when } \tilde{p} = p \\ \alpha\omega + \beta\omega(1 + q) + \omega - \alpha\omega - \beta\omega = \omega + \beta\omega q, & \text{when } \tilde{p} = 0. \end{cases}$$

The expected utility will be

$$E\{u(\omega_1)\} = ru(\omega + \alpha\omega p + \beta\omega q) + (1 - r)u(\omega + \beta\omega q).$$

The maximization problem is the following:

$$\max_{\alpha, \beta} E\{u(\omega_1)\} = ru(\omega + \alpha\omega p + \beta\omega q) + (1 - r)u(\omega + \beta\omega q)$$

subject to

$$\alpha + \beta \leq 1.$$

Assuming that the functions $u(\omega + \alpha\omega p + \beta\omega q)$ and $u(\omega + \beta\omega q)$ are twice continuously differentiable around the point ω , let us at that point approximate them by the second order Taylor series:

$$\begin{aligned} u(\omega + \omega(\alpha p + \beta q)) &= u(\omega) + u'(\omega)\omega(\alpha p + \beta q) + \frac{u''(\omega)}{2}\omega^2(\alpha p + \beta q)^2 + \varepsilon_1, \\ u(\omega + \beta\omega q) &= u(\omega) + u'(\omega)\beta\omega q + \frac{u''(\omega)}{2}\beta^2\omega^2q^2 + \varepsilon_2, \end{aligned}$$

where ε_1 and ε_2 represent higher order derivatives.

Substituting these expressions into the expected utility function we get:

$$\begin{aligned} E\{u(\omega_1)\} &= r \left(u(\omega) + u'(\omega)\omega(\alpha p + \beta q) + \frac{u''(\omega)}{2}\omega^2(\alpha p + \beta q)^2 \right) + \\ &+ (1 - r) \left(u(\omega) + u'(\omega)\beta\omega q + \frac{u''(\omega)}{2}\beta^2\omega^2q^2 \right). \end{aligned}$$

After some simple manipulations we shall have that

$$E\{u(\omega_1)\} = u(\omega) + u'(\omega)\omega(r\alpha p + \beta q) + \frac{u''(\omega)}{2}\omega^2(r\alpha^2p^2 + 2r\alpha p\beta q + \beta^2q^2).$$

Taking into account that at the optimum our constraint holds as equality, we plug $\beta = 1 - \alpha$ into the objective function and get the following reduced-form optimization problem:

$$\max_{\alpha} u(\omega) + u'(\omega)\omega(r\alpha p + (1 - \alpha)q) + \frac{u''(\omega)}{2}\omega^2(r\alpha^2p^2 + 2r\alpha p q(1 - \alpha) + (1 - \alpha)^2q^2).$$

The first order condition will be

$$\frac{\partial E\{u(\omega_1)\}}{\partial \alpha} = u'(\omega)\omega(rp - q) + \frac{u''(\omega)}{2}\omega^2(2\alpha(rp^2 - 2rpq + q^2) + (2rpq - 2q^2)) = 0.$$

Solving this for α , we have:

$$\alpha = -\frac{(q - rp)\left(q - \frac{1}{RRA(\omega)}\right)}{rp^2 - 2rpq + q^2},$$

where $RRA(\omega) = -\frac{u''(\omega)}{u'(\omega)}\omega$ is the coefficient of relative risk aversion.

This is our first result: the simple structural setup of the asset optimization delivers a formula for the share of the risky asset depending on model parameters. Below (see Fig.) we plot its graph for the special case, when $r = \frac{1}{2}$ and $u(w) = \log w$. The latter implies that $RRA(w) = 1$.




Fig. The share of the risky asset

The insurance of risky investments. Now we turn to the formal description of the second stage of risk management. To introduce the notion of investment insurance as a device of optimizing risks we consider the following problem: suppose that in order to avoid losses concerning risky investments the investor decides to apply for insurance. We need to find the size of the maximum insurance premium acceptable by the investor. It is clear that this insurance premium is determined by the following identity:

$$E\{u(\omega + (\alpha p + \beta q)\omega)\} = u(\omega - I).$$

Here on the left hand side we have the expected utility of the investments in the risky and secure assets, and on the right hand side - the respective “guaranteed” utility. Both functions are assumed to be twice continuously differentiable. Note that from the perspective of the formulated question it is again useful to present these expressions in terms of the second and the first order Taylor series. The point is that this technique will enable to separate I and find an expression for it.

$$u(\omega - I) = u(\omega) - Iu'(\omega) + \tilde{\varepsilon}_1,$$

$$u(\omega + (\alpha p + \beta q)\omega) = u(\omega) + u'(\omega)\omega(\alpha p + \beta q) + \frac{u''(\omega)}{2}\omega^2(\alpha p + \beta q)^2 + \tilde{\varepsilon}_2,$$

where $\tilde{\varepsilon}_1$ and $\tilde{\varepsilon}_2$ are higher order derivatives.

Assuming that $E\{p\} = 0$,

$$E\{u(\omega + (\alpha p + \beta q)\omega)\} = u(\omega) + u'(\omega)\beta\omega q + \frac{u''(\omega)}{2}\omega^2(\alpha^2 E(p^2) + \beta^2 q^2).$$

Therefore, the initial equation boils down to:

$$u(\omega) + u'(\omega)\beta\omega q + \frac{u''(\omega)}{2}\omega^2(\alpha^2 E(p^2) + \beta^2 q^2) = u(\omega) - Iu'(\omega).$$

It remains to solve this for I :

$$Iu'(\omega) = -u'(\omega)\beta\omega q - \frac{u''(\omega)}{2}\omega^2(\alpha^2 E(p^2) + \beta^2 q^2),$$

$$I = -\beta\omega q + \frac{R(\omega)}{2}\omega^2(\alpha^2 E(p^2) + \beta^2 q^2),$$

Where $R(\omega) = -\frac{u''(\omega)}{u'(\omega)}$ is the coefficient of absolute risk aversion.

Notice that according to this formula I is increasing in $R(\omega)$. Thus, this result indicates that the investor is ready to pay higher insurance premium if he is more risk averse. And this is quite intuitive: the more risk averse the investor is, the more he is willing to get rid of the underlying risk.

Conclusions. In the paper we try to conceptualize the two main stages of risk management, identification and optimization of risks. With this end in view we present two simple structural settings and derive formulas for the share of risky investments and the measure of an insurance premium.

References

1. Von Neumann J., Morgenstern O. Theory of Games and Economic Behavior.-Princeton University Press, 1944.-776 p.
 2. Anscombe F., Aumann R. A Definition of Subjective Probability//Annals of Mathematical Statistics.-1963.-34.-P. 199-205.
 3. Fishburn P. Utility Theory//Management Science.-1968.-14.-P. 335-378.
 4. Nanyan A. Asset Optimization under Risk//Proceedings of Engineering Academy of Armenia.-2016.-V. 13, N4.-P. 416-419.
- 21.11.2016.

Ա.Ա. Նանյան

ՌԻՍԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԻ ՄԱՍԻՆ

Նույնականացումը և օպտիմալացումը ռիսկերի կառավարման երկու հիմնական փուլերն են: Փորձ է արվել ֆորմալ հիմքի վրա վերլուծել այս հարցերը ռիսկային ներդրումների համատեքստում: Մասնավորապես, ներկայացնում ենք պարզ, երկու ակտիվից բաղկացած ներդրումային խնդիրը և խելամիտ ենթադրություններով ստանում՝ որոշում ընդունողի նախնական հարստությունում այս ակտիվների մասնաբաժինները բնութագրող բանաձև: Բացի այդ, առաջին մոդելի տրամաբանությամբ դիտարկում ենք ներդրումների ապահովագրության խնդիրը որպես բազային ռիսկի օպտիմալացման մեխանիզմ: Որոշ ակնհայտ ձևափոխություններից հետո դուրս է բերվում ապահովագրավճարի մեծությունը որպես մոդելի պարամետրերի ֆունկցիա: Առաջ է քաշվում տեսակետ, որ իրենց պարզության շնորհիվ այս արդյունքները կարող են օգտագործվել տարբեր գործնական կիրառություններում:

Առանցքային բառեր. նույնականացում, ռիսկերի կառավարում, ներդրումային ռիսկ, ապահովագրություն:

А.А. Нанян

О МЕТОДЕ ОЦЕНИВАНИЯ РИСКОВЫХ ИНВЕСТИЦИЙ И СТРАХОВЫХ ВЗНОСОВ

Идентификация и оптимизация рисков являются двумя основными этапами управления рисками. В настоящей работе предпринимается попытка формально анализировать эти вопросы в контексте рискованных инвестиций. В частности, представлена простая инвестиционная проблема с двумя активами и при разумных предположениях получена формула для долей этих активов в начальном богатстве инвестора. Кроме того, в логике первой модели рассмотрена проблема страхования инвестиций как механизм оптимизации базового риска. После несложных преобразований найдена инвестиционная премия как функция от параметров модели. Выдвигается мнение, что из-за своей простоты эти результаты могут быть использованы в различных практических приложениях.

Ключевые слова: идентификация, управление рисками, инвестиционный риск, страхование.

Nanyan Ashot Ararat - PHD student (YSU)

Ռ.Գ. Հովհաննիսյան

ՀՀ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՌԻՍԿԵՐԸ

Ուսումնասիրվել են ՀՀ Կուտակային կենսաթոշակային ֆոնդի համակարգի ռիսկերը: Առավել մեծ ուշադրություն է դարձվել համակարգի հիմնական ռիսկերին, թերություններին և առավելություններին: Կառուցվել են իրական պորտֆելներ:

Առանցքային բառեր. կենսաթոշակային համակարգ, կենսաթոշակային ֆոնդ, ռիսկ, ակտիվ, ներդրում, ակտիվների տեղաբաշխվածություն, սահմանափակում:

Կենսաթոշակային համակարգի բարեփոխումները աշխարհի ամենաբարդ բարեփոխումներից են, ինչի մասին սկսել են մտածել դեռևս շատ վաղուց: 1981 թվականից սկսած՝ աշխարհի տարբեր երկրներ սկսել են կենսաթոշակային համակարգի բարեփոխումները, բնականաբար, հաշվի առնելով համակարգի թե՛ դրական, թե՛ բացասական կողմերը: Ինչպես ցանկանա՞ծ երկրի կենսաթոշակային համակարգ, այնպես էլ ՀՀ կենսաթոշակային համակարգը պարունակում է ռիսկեր, թերություններ և առավելություններ:

ՀՀ կուտակային կենսաթոշակային համակարգի անցման գլխավոր պատճառներից մեկն այն է, որ ժողովրդագրական իրավիճակը գնում է դեպի վատթարացման՝ այսպես կոչված *բնակչության ծերացման*¹: Աշխարհում այսօր 60 տարեկանից բարձր տարիքի 700 մլն մարդ է ապրում [1]: 2050-ին այդ թիվը կհասնի 2 մլրդ՝ կազմելով աշխարհի բնակչության ավելի քան 20 տոկոսը: Հայաստանում 2015թ-ի հունվարի 1-ի դրությամբ մշտական բնակչության 12,6 տոկոսը կամ շուրջ 323 հազարը կազմում են տարեց մարդիկ, և այդ թիվը աճի միտում ունի: Հաշվի առնելով, որ Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող տարիներին մեծաքանակ ծնունդներ են եղել, և այդ մարդիկ արդեն սկսել են հատել 60-ամյա սահմանագիծը, աշխատունակ տարիքի բնակչությունն այլևս ի վիճակի չէ հարկերով ապահովել նվազագույն սպառողական զամբյուղին մոտ կենսաթոշակ, և իրավիճակն առաջիկայում ոչ միայն բարելավվելու միտում չի ունենալու, այլ նաև գնում է դեպի վատթարացում: Համակարգի բեռնվածության գործակիցը ՀՀ-ում չի գերազանցում 1,1-ը², մինչդեռ, հարկ է նշել, որ եվրոպական երկրներում այս ցուցանիշի 3,5:1 մակարդակը արդեն իսկ համարվում է ճգնաժամային: Կենսաթոշակառուների շրջանում մեծ է աղքատությունը և աղքատության ռիսկը:

Կուտակային կենսաթոշակային համակարգի կարևոր խնդիրներից է նաև *կենսաթոշակների չափի և ստացած եկամուտների միջև կապի բացակայությունը*: 2013թ.-ի վերջի դրությամբ կենսաթոշակառուներին նշանակված կենսաթոշակի միջին չափը կազմել է 29,122.00 ՀՀ դրամ, իսկ միջին անվանական աշխատավարձի չափը՝ 158,239.00 ՀՀ դրամ [2]: Առանց արմատական բարեփոխումների կենսաթոշակային ապահովության բարելավման միակ սցենարը կարող էր լինել հարկերի բարձրացումը, որը ցանկալի չէր տնտեսության զարգացման տեսակետից: Ուստի՝ կենսաթոշակային համակարգի փոփոխության խնդիրը ՀՀ կառավարությունը լուծեց՝ այնպես, ինչպես աշխարհը հաղթահարում է կենսաթոշակային ոլորտում առկա մարտահրավերները

¹Միջազգայնորեն ընդունված չափանիշների համաձայն, եթե աշխատունակ տարիքից բարձր բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում գերազանցում է 9%-ը, այդ ազգը համարվում է ծերացող: Հայաստանում այս ցուցանիշը 2013թ. կազմել է 12.1%: Ստեղծված իրավիճակը պայմանավորված է ինչպես միգրացիոն ակտիվ հոսքերով, այնպես էլ ծնելիության մակարդակի անկմամբ:

² Համակարգը կարող է համարվել ֆինանսապես կայուն, եթե այդ հարաբերակցությունը կազմում է առնվազն 3/1-ի: Ակտուարական հաշվարկները ցույց են տալիս, որ ընդհուպ մինչև 2050 թվականը կենսաթոշակային համակարգի բեռնվածության գործակիցը տատանվելու է 1.0-1.1-ի սահմաններում, ինչի հետևանքով համակարգը կհայտնվի «կայուն ֆինանսական ճգնաժամում», իսկ 2050-2065 թվականներին սպասվում է համակարգի «ֆինանսական կոլապս» (ՀՆԱ-ի նկատմամբ սովորային և ոչ ֆորմալ տնտեսության տեսակարար կշռի անփոփոխ մնալու դեպքում արդեն 2011 թվականին կենսաթոշակառուների թվաքանակը կգերազանցի վճարում կատարողներին) [3]:

1. անցում սերունդների համերաշխության սկզբունքով ֆինանսավորվող կենսաթոշակային բաշխողական համակարգերից դեպի «ինքնաֆինանսավորվող» կուտակային համակարգերը,

2. անցում հաշվարկային բանաձևերի հիման վրա սահմանված կենսաթոշակի ՄԿ/DB մոդելից դեպի իրական եկամուտների հիման վրա սահմանված վճարների ՄԿ/DC մոդելը,

3. անցում պետության կողմից անմիջապես կառավարվող կենսաթոշակային համակարգերից դեպի պետության կողմից կարգավորվող և վերահսկվող մասնավոր կենսաթոշակային համակարգեր:

Արդյունքում՝ ՀՀ-ում ներդրվեց նոր կենսաթոշակային համակարգ, որի նպատակներն են՝

- նվազագույնի հասցնել, այնուհետև՝ իսպառ բացառել աղքատությունը և աղքատության ռիսկը կենսաթոշակառուների շրջանում,
- սպահովել համակարգի ֆինանսական կայունությունը երկարաժամկետ ապագայում,
- կապ ամրագրել անձի աշխատանքային եկամուտների և կենսաթոշակների միջև:

Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրումն ունի իր առավելությունները և, բնականաբար, կենսականորեն անհրաժեշտ է աշխատողների բոլոր խմբերի արդյունավետ սոցիալական պաշտպանության համար, քանի որ

- բաշխողական (ոչ կուտակային) «0» և «1-ին» աստիճանները պաշտպանում են կենսաթոշակառուներին աղքատությունից,
- պարտադիր կուտակային «2-րդ» աստիճանն ապահովում է աշխատողների եկամուտների փոխհատուցումը,
- կամավոր կենսաթոշակային «3-րդ» աստիճանն աշխատողներին հավելյալ կենսաթոշակ ստանալու հնարավորություն է ընձեռում:

Գործող բաշխողական բաղադրիչի հիմքերի վրա կուտակային բաղադրիչի ներդրմամբ կենսաթոշակային բարեփոխումների նախագծումը երկարաժամկետ առումով շահավետ է բնակչության բոլոր խմբերի համար, քանի որ ապահովում է.

- արդյունավետ և հասցեական սոցիալական պաշտպանություն տարեց բնակչության համար
- ավելի քիչ պետական ծախսերով ավելի բարձր կենսաթոշակներ բնակչության բոլոր խավերի համար
- խթանների ստեղծում երկար աշխատելու, բարձր վարձատրվելու և եկամուտների բաշխումը բարելավելու համար:

Ցանկացած երկրում կենսաթոշակային բարեփոխումները երկարատև բնույթ են կրում և պարտադրում են բազմաոլորտային փոփոխություններ: Բնականաբար, այս բարեփոխումների ճանապարհը չի կարող իր մեջ չպարունակել ռիսկեր և թերություններ:

ՀՀ կուտակային կենսաթոշակային համակարգի հիմնական թերություններն են.

- ֆինանսական անկայունություն. հավաքագրված սոցիալական ապահովության վճարները բավարար չեն կենսաթոշակային վճարներ ապահովել,
- ուղղակի կապի բացակայում աշխատողի կատարած սոցիալական ապահովության վճարների և ապագա կենսաթոշակի չափի միջև,
- բարդ ժողովրդագրական իրավիճակ. Ծնելիության կրճատում, կյանքի սպասվող տևողության աճ, աշխատունակ տարիքի բնակչության միգրացիա: Արդյունքում՝ մեկ սոցիալական վճարում կատարողը ֆինանսավորում է մեկ կենսաթոշակառուի կենսաթոշակի վճարումը այն դեպքում, երբ Արևմտյան Եվրոպայի երկրներում երեք աշխատողը ֆինանսավորում է մեկ կենսաթոշակառուի կենսաթոշակի վճարումը:

ՀՀ կուտակային կենսաթոշակային համակարգի հիմնական ռիսկերն են.

1. Տեղեկացվածության ռիսկ: Այս ռիսկը հիմնականում առաջանում է իրազեկվածության և տեղեկացվածության (հատկապես՝ ֆինանսական և մասնագիտական) պակասից, որը կարող է խոչընդոտել բարեփոխումների ընթացքը:
2. Տնտեսական ռիսկեր: Այս ռիսկերը հիմնականում պայմանավորված են երկրի պետական բյուջեի (կառավարության), գործարար համայնքի (գործատուների) և տնային տնտեսությունների (աշխատողների) ֆինանսական հնարավորություններով: Եվ վերջինիս անկումը, կարող է վտանգել բարեփոխումների իրականացումը: Տնտեսական ռիսկերն անխուսափելի են և հաշվարկելի (ակտուարական հաշվարկներ):
3. Քաղաքական ռիսկեր: Ցանկացած երկրում ցանկացած բարեփոխումների նախագծումն ու իրականացումը քաղաքական կամքի արդյունք է: Բնական է՝ որևէ նշանակալի փոփոխություն, առավել ևս իշխանափոխություն կարող է ի չիք դարձնել կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը:


4. Աշխատուժի միգրացիայի ռիսկը: Աշխատանքային միգրացիան աշխարհում դասվում է էական խնդիրների շարքին: Սովորաբար միգրացիան կանգնեցնել հնարավոր չէ. պետք է պարզապես այն դարձնել կառավարելի: Պետությունը պետք է կարողանա ստեղծել այնպիսի համակարգ, որի միջոցով իր երկրում պահի աշխատուժը, բնակչությունը արտասահմանում աշխատելուց հետո վերադառնա Հայաստան, կամ աշխատող բնակչությունը չլքի երկիրը: Աշխատուժի միգրացիայի ռիսկն այն է, որ այդ ցուցանիշի բարձր մակարդակի դեպքում, բնականաբար, կուտակային կենսաթոշակային համակարգը չի աշխատի: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տվյալների՝ ստորև աղյուսակում ներկայացնենք ընդհանուր բնակչության թվաքանակը 2009թ.-ից մինչև 2013թ.-ը (1000 մարդ) և բնակչության ընդհանուր թվաքանակից աշխատունակ տարիքի և այդ տարիքից ցածր և բարձր բնակչության թվաքանակը՝

Աղյուսակ

Ընդհանուր բնակչության և բնակչության ընդհանուր թվաքանակից աշխատունակ տարիքի և այդ տարիքից ցածր և բարձր բնակչության թվաքանակը 2009թ.-ից մինչև 2013թ.-ը /1000 մարդ/

Բնակչության թվաքանակ					
Տարի	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Բնակչության թվաքանակ	3249.5	3262.6	3021.4	3026.9	3017.1
Աշխատունակ տարիքից ցածր	644.3	639.4	609.1	609.8	611.8
Աշխատունակ տարիքի	2232.1	2247.1	2050.2	2051.5	2034.0
Աշխատունակ տարիքից բարձր	373.1	376.1	362.1	365.5	371.3
Աշխատանքային ռեսուրսները	2397.6	2389.7	2286.3	2260.8	2189.1

Ըստ աղյուսակի 2009թ.-ից մինչև 2013թ.-ը նվազել է բնակչության թվաքանակը, նաև աշխատունակ տարիքի թվաքանակը, աշխատունակ տարիքից բարձր և ցածր թվաքանակը, նվազել են բոլոր ցուցանիշները: Մշտական բնակչության թվաքանակը 1926թ.-ից մինչև 2014թ.-ը գրաֆիկորեն ունի հետևյալ տեսքը՝ (1000 մարդ) [4],



Նկ. 1. Մշտական բնակչության թվաքանակը 1926թ.-ից մինչև 2014թ.-ը


Ինչպես տեսնում ենք գրաֆիկից (նկ. 1), 1926թ.-ից սկսած բնակչության թվաքանակը աճել է, որից հետո մի փոքր նվազել է և մնացել կայուն 1995թ.-ին մինչև 2010թ.-ը, այնուհետև նորից նվազել է և մնացել կայուն մինչև 2014թ.-ը:

Աշխատուժի, որպես արտադրության կարևորագույն գործոնի միգրացիայի հիմնախնդիրը մշտապես գտնվել և գտնվում է տնտեսագետ-հետազոտողների ուշադրության կենտրոնում: Միացյալ ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական հարցերի վարչության տվյալներով 2013 թ. Դրությամբ միջազգային միգրանտների ընդհանուր թիվը 232 մլն մարդ էր, որի 74%-ը աշխատանքային միգրանտներ էին [5], այն դեպքում, երբ 2010թ.-ին 214 մլն միգրանտների 90%-ն էր լքել հայրենի բնակավայրը աշխատելու նպատակով [6]:


5. Ծնելիության ռիսկ: 1990 թվականին Հայաստանում 80.022 երեխա է ծնվել, իսկ 2014-ին՝ 43.061, այսինքն՝ գրեթե 2 անգամ պակաս: Ծնելիության նվազագույն ցուցանիշն արձանագրվել է 2001 թվականին՝ 33.422 երեխա: Մինչ այդ, երկրում աճել է մահացության ցուցանիշը. Եթե 1999 թվականին 21.993 մահ է արձանագրվել, ապա 2014-ին՝ 27.714: Բացի այդ, երկիրը, որտեղ բնակչության ավելի քան 7%-ը 65 տարեկանն անց մարդիկ են, ծերացող է համարվում: Հայաստանում 65 տարեկանն անց է բնակչության 11%-ը: Այս խնդիրը, հարկավոր է լուծել՝ ավելացնելով ծնելիության ցուցանիշը: Ցանկալի է հասնել նրան, որպեսզի յուրաքանչյուր ընտանիքում նվազագույնը 3 երեխա ծնվի:

6. Շուկայական ռիսկեր: Տնտեսական ճգնաժամերը (լինի լոկալ, թե՛ գլոբալ), երկրի ֆինանսական շուկայի (հատկապես կապիտալի և ապահովագրական շուկաների) թերզարգացած լինելը, մրցակցության բացակայությունը (կամ անբարեխիղճ մրցակցությունը), ստվերային տնտեսության առկայությունը, ձեռնարկությունների (այդ թվում՝ ֆինանսական) անվճարունակությունը, տոկոսադրույքների և փոխարժեքների տատանումները, այս բոլորը ներկայացնում են այն շուկայական ռիսկերը, որոնք օբյեկտիվորեն հետևում են «տնտեսական ցիկլերի» և երկրի զարգացման առանձնահատկություններին:

Առավել մեծ ուշադրություն դարձնենք շուկայական ռիսկերից տնտեսական ճգնաժամին, և, Հայաստանի օրինակով, դիտարկենք կենսաթոշակային համակարգի ակտիվների կառավարման մոդել: Օրինակում կառուցենք մոդել, որն առաջարկում է կենսաթոշակային պորտֆելի կառավարման օպտիմալ մոտեցում, որի կիրառման արդյունքում ստանում ենք ակտիվների արդյունավետ տեղաբաշխվածություն, կատարում ենք համեմատություններ երկու ժամանակահատվածների համար (2007թ.-ից մինչև 2010թ.-ը և 2011թ.-ից մինչև 2014թ.): Օրինակում հաշվի առնենք ներկայիս ՀՀ կուտակային կենսաթոշակային համակարգի ակտիվների՝ արտասահմանում ներդրման քանակային և արժույթային սահմանափակումները (մեկ թողարկողի արժեթղթում ներդրումների առավելագույն չափը չի կարող գերազանցել ֆոնդի ընդհանուր ակտիվների 10%-ը, իսկ մեկ արտասահմանյան պետությունում՝ 15%-ը [8]), որպես կենսաթոշակային ֆոնդ կոդիտարկենք հավասարակշռված ֆոնդը, հաշվի չենք առնի արժույթային ռիսկը և ծախսերը (միջնորդավճարներ և այլն), ոչ ռիսկային տոկոսադրույքը կվերցնենք ՀՀ կարճաժամկետ գանձապետական պարտատոմսի եկամտաբերությունը՝ 7.98%: Քանի որ ըստ օրենսդրության թույլատրվում է ներդրումներ կատարել արտասահմանյան արժույթով ֆոնդի ակտիվների 40%-ից ոչ ավել, ապա դիտարկվող օրինակում ակտիվների 60%-ը կներդնենք ՀՀ պարտատոմսերում, իսկ այդ 40%-ը՝ ETF-ում (Exchange traded fund) [7]: Օրինակում կիրառենք MATLAB ծրագիրը, որը, հաշվի առնելով ակտիվների ներդրումային սահմանափակումները, հնարավորություն է տալիս կառուցել պորտֆել: Դիտարկենք պասիվ կառավարում, ենթադրելով, որ պորտֆելում ոչինչ չի փոխվում: Նշված երկու ժամանակահատվածի համար պորտֆելի կառավարման արդյունքում ստանում ենք 10 պորտֆելների համար ակտիվների տեղաբաշխվածությունը: Վերցնում ենք կամայական մեկ պորտֆել և համապատասխան ակտիվների գների հետ բազմապատկելով՝ ստանում ենք պորտֆելի գները օրական կտրվածքով: Ստորև (նկ. 2 և նկ. 3) դիտարկենք պորտֆելի գնի օրական փոփոխությունը երկու ժամանակահատվածների համար՝



Նկ. 2. Պորտֆելի գնի օրական փոփոխություն




Նկ. 3. Պորտֆելի գնի օրական փոփոխություն

Ինչպես տեսնում ենք նկ.2-ում 2007թ.-ից մինչև 2010թ.-ը ակտիվների գինը ունեցել է նվազման միտում, արդյունքում նվազել է նաև մեր պորտֆելի ընդհանուր արժեքը, իսկ նկ.3-ում 2011թ.-ից մինչև 2014թ.-ը ակտիվների գինը ունեցել է աճի միտում, որի արդյունքում մեծացել է պորտֆելի արժեքը: Համեմատելով երկու ժամանակահատվածը՝ նկատում ենք, որ պորտֆելի արժեքը ամբողջ ժամանակահատվածի դեպքում աճում է: Այստեղ փաստենք նաև այն, որ առաջին ժամանակահատվածում ունեցել ենք 2008թ.-ի ճգնաժամը: Ինչպես տեսնում ենք գրաֆիկներից, բնականաբար, ճգնաժամն ունեցել է իր ազդեցությունը, գրանցվել է ակտիվների արժեքի անկում: Սակայն, նույնիսկ այդպիսի ծանր ֆինանսական պայմաններում հնարավոր է օպտիմալ պորտֆել կառուցել: Եթե պորտֆելը դիտարկենք 2007թ. - ից մինչև 2014թ.-ը, ապա, համապատասխան օպտիմալ կշիռներով

բազմապատկելով ակտիվների գները, կստանանք ստորև գծապատկերում պորտֆելի արժեքը 2007-2014թթ. ժամանակահատվածի համար: Եթե դիտարկում ենք ամբողջ ժամանակահատվածը, ապա օպտիմալ կառավարման արդյունքում կշիռները ստանում ենք տարբեր՝ համեմատած երկու ժամանակահատվածների հետ, քանի որ կառավարել ենք առանձին ժամանակահատվածներ և արդյունքում ստացել տարբեր կշիռներ այդ ժամանակահատվածների համար: Այդ իսկ պատճառով պորտֆելի արժեքները տարբեր են ամբողջ ժամանակահատվածում և առանձին վերցված ժամանակահատվածներում:

Ստորև դիտարկենք գծապատկերը (նկ.4), որտեղ ցույց է տրված պորտֆելի գնի փոփոխությունը 2007-2014թթ. ժամանակահատվածի համար.



Նկ.4-ից երևում է, որ եթե մեր ամբողջ կառավարման արդյունքում չենք փոխում ակտիվների ընտրության մասնաբաժինը. օպտիմալ կառավարման արդյունքում ակտիվների տեղաբաշխվածության մասնաբաժինը, ապա ունենում ենք պորտֆելի օրական գնի փոփոխությունը: Ինչպես նկատեցինք, մեր օրինակում, շուկայական ռիսկերից տնտեսական ճգնաժամն ունենում է իր ազդեցությունը պորտֆելի կառավարման վրա: Ակտիվների ճիշտ տեղաբաշխվածության հետևանքով հնարավոր է կառավարել պորտֆելն այնպես, որպեսզի նվազեցվեն ռիսկերը, և արդյունքում հասնենք պորտֆելի գնի մեծացմանը: Բնականաբար, պորտֆել կառավարելու ընթացքում պետք է հաշվի առնել ոչ միայն տնտեսական ճգնաժամը, այլև վերը նշված բոլոր տեսակի ռիսկերը: Նմանատիպ ռիսկերի նվազեցման հետևանքով ունենում ենք ակտիվների օպտիմալ տեղաբաշխվածություն, որից էլ և պորտֆելի գնի աճ: Արդյունքում ապահովում ենք կենսաթոշակների բարձր մակարդակ և հուսալի ապագա:

Գրականություն

1. www.who.int/mediacentre/news/releases/2015/older-persons-day/en/
2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014
3. ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1487-Ն
4. www.armstase.am
5. www.esa.un.org/unmigration/wallchart2013.htm
6. International labour migration. A rights-based approach. – Geneva, International Labour Office, 2010, p. 1.
7. www.finance.yahoo.com/etf/lists/
8. ՀՀ կուտակային կենսաթոշակների մասին օրենք, Գլուխ 8 հոդված 39, կետ 16: 23.11.2016.

Р.Г. Оганесян

РИСКИ НАКОПИТЕЛЬНОЙ ПЕНСИОННОЙ СИСТЕМЫ

Изучены риски накопительного пенсионного фонда РА. Большое внимание уделено основным рискам, преимуществам и недостаткам. Построены реальные портфели.

Ключевые слова: пенсионная система, пенсионный фонд, риск, актив, инвестиция, распределение активов, ограничение.

R.G. Hovhannisyan

THE RISKS OF ACCUMULATIVE PENSION SYSTEM OF RA

The risks of RA accumulative pension system are studied. More attention is paid to main risks of the system, advantages and disadvantages. Real portfolios are built.

Keywords: pension system, pension fund, risk, asset, investment, assets allocation, restriction.

Հովհաննիսյան Ռիտա Գեղամի – ասպիրանտ (ԵՊՀ)

Ա.Լ. Առաքելյան, Ն.Ն. Գևորգյան

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈԴԵԼԻ ՄՇԱԿՈՒՄ

Ձեռնարկության արտադրական ռիսկերի կառավարումը օպտիմալացնելու նպատակով մշակվել է օպտիմալացման տնտեսամաթեմատիկական մոդել, որը հնարավորություն է տալիս որոշել դրամական միջոցների այն օպտիմալ ծավալը, որն անհրաժեշտ է ծախսել արտադրական ռիսկերից առաջացած կորուստների վերացման համար, ինչպես նաև որոշել ռիսկերի այն խմբերը, որոնց հետևանքների վերացմանը հարկավոր է ուղղել դրամական միջոցները:

Առանցքային բառեր. ռիսկերի կառավարում, զանգվածային սպասարկման աստիճան:

Արտադրական գործունեության իրականացման ընթացքում առաջացող ռիսկերի վերլուծությունը, գնահատումը և կառավարումը շատ կարևոր խնդիրներ են: Երկրի տնտեսությունում տեղի ունեցած փոփոխությունները վեր հանեցին տեսական ու կիրառական բնույթ կրող և տնտեսության արդյունաբերական հատվածի նորմալ գործառնության ու զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող բազմաթիվ բանավեճային և արդիական խնդիրներ: Արդյունաբերական ձեռնարկություններում տնտեսական, արտադրական ռիսկերի կառավարման ոլորտում չլուծված խնդիրների թիվը կշարունակի ավելանալ մրցակցային միջավայրի ձևավորմանը զուգընթաց: Կարևոր է հաշվի առնել, որ արտադրական գործունեության մասնակից օբյեկտներից և սուբյեկտներից յուրաքանչյուրը ենթարկվում է հիերարխիկ տարբեր մակարդակների՝ աշխարհաքաղաքական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, ֆինանսական, արտադրական, առևտրային, տեխնադին ռիսկերի ազդեցությանը:


Ռիսկը նվազագույնի հասցնելու համար հարկավոր է մանրամասն մշակել գործունեության առավել անվտանգ ռացիոնալ տարբերակը: Ռիսկի գործոնների ճիշտ աստիճանավորումը և ռիսկերի ռացիոնալ կառավարումը նպաստում են շուկայական հաջող գործունեության իրականացմանը, իսկ այն ձեռնարկությունները, որոնց մենեջմենթը պատշաճ ուշադրություն չի դարձնում ռիսկերին, նմանատիպ շուկայական իրավիճակում անխուսափելիորեն դառնում են վնասաբեր: Ուստի ռիսկերի գնահատման և կառավարման տեսության և պրակտիկայի հետ առնչվող հարցերը շատ արդիական են ներկա պայմաններում: Կարևոր է ճիշտ հասկանալ տնտեսական և արտադրական ռիսկերի դերը և դրսևորումները ինչպես միկրո-, այնպես էլ մակրոմակարդակներում:

Արդյունաբերական ձեռնարկությունների զարգացման ապահովման հիմքը արտաքին միջավայրի անորոշության դինամիկայի կանխատեսման և այդ անորոշության նվազեցման ռացիոնալ մեխանիզմների ձևավորման կարողությունն է, այսինքն՝ ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգի կառուցումը: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ արդյունաբերական ձեռնարկությունների մենեջմենթի գործիքակազմը քիչ է նպաստում անորոշության պայմաններում արդյունաբերական ձեռնարկությունների կառավարման արդյունավետության բարձրացմանը: Այն դեպքում, երբ ազգային տնտեսական համակարգում ստեղծված իրավիճակը թելադրում է արդյունաբերական արտադրության զարգացմանը սպառնացող ռիսկերի հստակ գնահատման և կառավարման անհրաժեշտություն:

Օպերատիվ կառավարման ընթացքում ռիսկերի գնահատման անհրաժեշտությունն ընդունվում է միայն ֆինանսական ոլորտի ձեռնարկությունների համար, սակայն նույնիսկ այս ոլորտին պատկանող ոչ բոլոր ձեռնարկությունները կարող են ապահովել ռիսկ-մենեջմենթի բարձր որակ, ինչը նույնպես վկայում է ռիսկերի կառավարման գիտական հիմքերի զարգացման անհրաժեշտության մասին: Նշված գործոնները վկայում են արդյունաբերական ձեռնարկությունների ռիսկերի կառավարման վրա հիմնված օպերատիվ կառավարման համակարգի զարգացման գիտականորեն հիմնավորված մոտեցման ձևավորման անհրաժեշտության մասին: Այսպիսով, ռիսկերը և դրանց կառավարման խնդիրը ձեռնարկությունների ֆինանսական և արտադրական գործունեության առանցքային խնդիրներից են: Չնայած այն բանի, որ գոյություն ունի արդյունաբերական ձեռնարկությունների կառավարմանը վերաբերող աշխատանքների բավական լայն սպեկտր, ռիսկերի գնահատման և կառավարման հիման վրա արդյունաբերական ձեռնարկությունների օպերատիվ կառավարման հարցերը թերի են ուսումնասիրված, իսկ արդյունաբերական ձեռնարկությունների արտադրական ռիսկերի հետազոտման մասին տվյալների սահմանափակությունը, ընդհանուր առմամբ, հաստատում է թեմայի տեսական և գործնական արդիականությունը:

Ռիսկի գնահատման գոյություն ունեցող մեթոդների վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք ունեն իրենց կիրառման հստակ որոշակիացված ոլորտը և անհրաժեշտ մեթոդի կամ մեթոդների խմբի ընտրությունը կախված է առկա տեղեկատվության որակից:

Ստորև մշակվել է թեթև արդյունաբերության ձեռնարկություններում արտադրական ռիսկի



Նկ. Կայուն վիճակից ռիսկային վիճակի ձեռնարկության անցման գրաֆը

Մոդելի իրագործման համար քննարկվել է մի խումբ ռիսկերի ազդեցության ներքո կայուն վիճակից ռիսկային վիճակի ձեռնարկության անցման գրաֆը (նկ.), որտեղ λ_i -ն i -րդ ռիսկային իրավիճակի առաջացման հաճախականությունն է, ($i = 1, \dots, 6$); μ_i -ն i -րդ ռիսկային իրավիճակի վերացման ինտենսիվությունը, ($\mu = 1/t$) :

S_0 -ից մինչև S_6 -ի իրավիճակների համար կազմվել են Կոլմոգորովի հավասարությունները և բոլոր հավանականությունները արտահայտվել են p_0 -ի միջոցով: Այսպիսով, ստացվել են հետևյալ բանաձևերը՝

$$p_0 = \frac{1}{1 + \frac{\lambda_1}{\mu_1} + \frac{\lambda_2}{\mu_2} + \frac{\lambda_3}{\mu_3} + \frac{\lambda_4}{\mu_4} + \frac{\lambda_5}{\mu_5} + \frac{\lambda_6}{\mu_6}}, \quad (1)$$

$$p_1 = \frac{\lambda_1}{\mu_1} \cdot p_0; p_2 = \frac{\lambda_2}{\mu_2} \cdot p_0; p_3 = \frac{\lambda_3}{\mu_3} \cdot p_0; p_4 = \frac{\lambda_4}{\mu_4} \cdot p_0; p_5 = \frac{\lambda_5}{\mu_5} \cdot p_0; p_6 = \frac{\lambda_6}{\mu_6} \cdot p_0 : \quad (2)$$

«Տավրոս» ՓԲԸ-ի վիճակագրական տեղեկատվության հիման վրա հաշվարկվել են ինչպես կայուն վիճակում ձեռնարկության գտնվելու հավանականությունը, այնպես էլ արտադրական ռիսկերի ազդեցության տակ գտնվելու հավանականությունը:

Մոդելի իրագործման հաջորդ փուլը օպտիմալացման խնդրի առաջադրումն է դրամական միջոցների օպտիմալ ծավալի որոշումը, որը պետք է ներդնի ձեռնարկությունը արտադրական ռիսկերը վերացնելու համար, ինչպես նաև այն, թե ռիսկերի որ խմբերին ուղղել այդ միջոցները՝ ռիսկային իրավիճակների հետևանքների արդյունավետ վերացման համար, որպեսզի ձեռնարկության կայուն վիճակի հավանականությունը $p_0 \rightarrow \max$:

Համաձայն խնդրի պահանջների՝ նպատակային ֆունկցիան կրնա լինի հետևյալ տեսքը՝

$$\frac{1}{1 + \frac{\lambda_1}{\alpha_1 \cdot \bar{A}_1} + \frac{\lambda_2}{\alpha_2 \cdot \bar{A}_2} + \frac{\lambda_3}{\alpha_3 \cdot \bar{A}_3} + \frac{\lambda_4}{\alpha_4 \cdot \bar{A}_4} + \frac{\lambda_5}{\alpha_5 \cdot \bar{A}_5} + \frac{\lambda_6}{\alpha_6 \cdot \bar{A}_6}} \rightarrow \max$$

$\sum_{i=1}^6 D_i = D$ սահմանափակման պայմաններում, որտեղ D -ն ռիսկային բոլոր իրադարձություններից հետո կայուն վիճակի վերականգնմանն ուղղված ձեռնարկության կողմից հատկացվող դրամական միջոցների գումարն է: Օպտիմալացման խնդրի լուծման համար օգտագործվել է MS-Excel կիրառական ծրագրերի

նվազեցման զանգվածային սպասարկման տեսության տարրեր [1] պարունակող տնտեսամաթեմատիկական մոդել, որը հնարավորություն կտա ձեռնարկության ղեկավարությանը մինիմացնել արտադրական ռիսկերի ազդեցության տակ ձեռնարկության գտնվելու հավանականությունը և ավելացնել ձեռնարկության կայուն գործառնության տևողությունը: Ռիսկերի կառավարման օպտիմալացման մոդելի մշակման համար կատարվել է զանգվածային սպասարկման տեսության հիմնական տարրերի վերլուծություն. դրո՞ք հարմարեցվել են մեր խնդրի լուծմանը: Որպես հետազոտման տեղեկատվական բազա ընտրվել է տղամարդկանց ու կանանց ձմեռային և գարնանա-աշնանային կոշիկերն թողարկող Գյումրու «Տավրոս» ՓԲԸ-ն:

փաթեթը, քանի որ Excel համակարգն ունի նման խնդիրների լուծման համապատասխան գործիքակազմ: Այս խնդրի լուծման նպատակը ռիսկային իրադարձությունների հետևանքների վերացմանն ուղղվող դրամական միջոցների օպտիմալ ծավալը որոշելն է՝ ձեռնարկության կայուն վիճակում գտնվելու հավանականության առավելագույն պայմանով և հաշվի առնելով խնդրում առկա սահմանափակումները:

Աղյուսակ

<<Տավրոս>> կոշիկի ձեռնարկությունում արտադրական ռիսկերի նվազեցման խնդրի լուծման վերլուծություն

Արտադրական ռիսկերի խումբը	Արտադրական ռիսկերի ազդեցության տակ գտնվելու ելակետային հավանականությունները, p_i	Արտադրական ռիսկերի ազդեցության տակ գտնվելու հա- վանականությունները օպտի- մալացման խմբի լուծումից հետո, p'_i	Ռիսկային իրադարձության վերացման համար պահանջվող եկամետային դրամական միջոցները, D_i (հազ.դրամ)	Ռիսկային իրադարձության վերացման համար պահանջվող եկամետային դրամական միջոցները, D'_i (հազ.դրամ)
A ₁	$p_1=0,111$	$p'_1=0,194$	$D_1=300$	$D'_1=172,3$
A ₂	$p_2=0,107$	$p'_2=0,103$	$D_2=200$	$D'_2=207,5$
A ₃	$p_3=0,156$	$p'_3=0,118$	$D_3=100$	$D'_3=132,2$
A ₄	$p_4=0,103$	$p'_4=0,101$	$D_4=250$	$D'_4=255,0$
A ₅	$p_5=0,148$	$p'_5=0,062$	$D_5=50$	$D'_5=119,4$
A ₆	$p_6=0,075$	$p'_6=0,066$	$D_6=100$	$D'_6=113,6$
			1000	1000

«Տավրոս» ՓԲԸ-ի օրինակով օպիտամալացման մոդելի իրագործման արդյունքում որոշվել է, որ ձեռնարկության կայուն վիճակում գտնվելու առավելագույն հավանականությունը՝ $p_0 = 0,356$: Այդ հավանականությանը կարելի է հասնել արտադրական ռիսկի առանձին խմբերի միջև դրամական միջոցների ռացիոնալ բաշխման եղանակով: Այս մոդելի իրագործումը «Տավրոս» ՓԲԸ-ի պայմաններում հնարավորություն տվեց՝

1) հասնել ձեռնարկության կայուն վիճակի հավանականության բարձրացմանը $p_0 - p_0 = 0,356 - 0,308 = 0,048$ - ով:

2) կատարել ռիսկային իրադարձությունների բացասական հետևանքների վերացմանն ուղղված դրամական միջոցների ռացիոնալ բաշխում,

3) հասնել արտադրական ռիսկերի ազդեցության տակ ձեռնարկության գտնվելու հավանականության նվազեցմանը:

Առաջարկվող տնտեսամաթեմատիկական մոդելի իրագործման արդյունքները ներկայացված են աղյուսակում:

Գրականություն

1. Гнеденко Б.В., Коваленко И.Н. Введение в теорию массового обслуживания. - 3-е изд., испр. и доп. - М.: КомКнига, 2005. - 408 с.
30.10.2016.

А.Л. Аракелян, Н.Н. Геворгян

РАЗРАБОТКА МОДЕЛИ ОЦЕНКИ СТЕПЕНИ ПРОИЗВОДСТВЕННОГО РИСКА

С целью оптимизации управления производственными рисками разработана оптимизационная экономико-математическая модель, позволяющая определить тот оптимальный объем денежных средств, который необходимо затратить для устранения возникших из-за производственных рисков потерь, а также выявить группы тех рисков, на устранение последствий которых необходимо направить денежные средства.

Ключевые слова: управление рисками, теория массового обслуживания, степень производственного риска.

A.L. Arakelyan, N.N. Gevorgyan

DEVELOPMENT MODEL ASSESSMENT OF THE DEGREE OF PRODUCTION RISK

In order to optimize the management of operational risks an economic and mathematical model of optimization is developed which enables us to determine the optimal amount of cash that must be expended to eliminate the problems due to the loss of production risks, as well as to determine the group of those risks, for the elimination of consequences of which it is needed to send money.

Keywords: risk management, queuing theory, degree of production risk.

Առաքելյան Արթուր Լևոնի - դասախոս (ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղ)

Գևորգյան Նազիկ Նազարի - ասիստենտ (ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղ)

ՀՏԴ 338

ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գ.Ռ. Չախոյան

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Բացահայտվում են ՀՀ բնակչության կողմից արտագաղթի դիմելու հիմնական դրդապատճառները: Լոջիստիկ մոդելի օգնությամբ մոդելավորվել են 2015 թ. ՀՀ բնակչության շրջանում անցկացված ներկայացուցչական հարցումների տվյալները, իսկ գործոնային վերլուծության միջոցով բացահայտվել են լոջիստիկ մոդելում օգտագործվող բացատրող փոփոխականների միջև եղած որոշ կապեր և նվազեցվել է այդ փոփոխականների բազմության չափողականությունը:

Առանցքային բառեր. միգրացիա, լոջիստիկ մոդել, մուլտիկոլինեարություն, VIF վերլուծություն, գործոնային վերլուծություն:

Ներածություն: Մարդկային միգրացիան մարդու կողմից իր բնակության վայրից հեռանալն է այլ վայրում ժամանակավոր կամ մշտական բնակություն հաստատելու նպատակով: Այդ տեղաշարժը կարող է լինել ինչպես որևէ պետության սահմաններում (ներքին միգրացիա), այնպես էլ տարբեր պետությունների սահմանների միջև (արտաքին միգրացիա): Մարդիկ ամբողջ պատմության ընթացքում միգրացիայի են դիմել: Բնակիչ, ամեն ժամանակաշրջանին և տարածաշրջանին բնորոշ են եղել միգրացիայի դիմելու յուրահատուկ դրդապատճառները, որի պատճառով է, որ գիտական շրջանակներում չկա միգրացիայի վերաբերյալ մեկ ընդհանրացված տեսություն: Մշտական բնավեճի առարկա է նաև այն հարցը, թե միգրացիան առավելապես դրական, թե բացասական ազդեցություն է թողնում ուղարկող և ընդունող երկրների համար: Տվյալ հոդվածում մենք փորձել ենք էկոնոմետրիկ լոջիստիկ մոդելի և և գործոնային վերլուծության օգնությամբ բացահայտել այն հիմնական գործոնները, որոնք ազդում են ՀՀ բնակիչների՝ միգրացիայի դիմելու որոշման վրա:

Արտագաղթը պայմանավորող գործոնների հիմնական մոդելը: Տվյալ աշխատանքում մեր կողմից օգտագործվել են Հետազոտական ռեսուրսների կոմպլայս կենտրոնի (ՀՌԿԿ, անգլ.՝ CRRC) կողմից 2015թ. անցկացված ներկայացուցչական հարցումների արդյունքները [1]: Նշենք, որ այդ հարցումներն անցկացվում են ամեն տարի՝ սկսած 2004 թվականից հարավկովկասյան երեք պետություններում՝ Հայաստանում, Վրաստանում և Ադրբեյջանում: Ամեն երկրում հարցման են ենթարկվում մոտ երկու հազար հոգի: Հարցերը վերաբերում են անհատների կյանքի տարբեր ոլորտներին, այդ թվում՝ կան հարցեր, որոնք առնչություն ունեն միգրացիայի հետ: Այդ հարցերից առավել կարևորները երեքն են՝ «<ունե՞ք արդյոք արտերկրում ապրող մոտ բարեկամ>>, «<հետաքրքրվա՞ծ եք արդյոք մշտական միգրացիայի դիմելով>>, «<հետաքրքրվա՞ծ եք արդյոք ժամանակավոր միգրացիայի դիմելով>>: Հարցվածների մոտ 92%-ն ասել է, որ ունեն արտերկրում ապրող մոտ բարեկամ (բարեկամ, ով 30 և ավելի օր բացակայում է ՀՀ-ից), ընդ որում այդ ցուցանիշը գրեթե նույն արժեքն է ստանում քաղաքային և գյուղական բնակչության մոտ. այն տատանվում է 91...93% միջակայքում: Հարցվածների 30%-ը պատասխանել է, որ հետաքրքրված են մշտական միգրացիայի դիմելով, ընդ որում մայրաքաղաքում՝ 37%, քաղաքներում՝ 29%, իսկ գյուղերում՝ 25%: Տղամարդիկ ավելի են հակված մշտական միգրացիայի դիմելու (34%), քան կանայք, ում 29%-ն է հակված մշտական միգրացիայի դիմելու: Հարցվածների մոտ 58%-ն ասել է, որ հետաքրքրված են ժամանակավոր միգրացիայի դիմելով, ընդ որում մայրաքաղաքում՝ 66%, քաղաքներում՝ 57%, իսկ գյուղերում՝ 51%: Տղամարդիկ ավելի են հակված նաև ժամանակավոր միգրացիայի դիմելու՝ 59%կանանց 57%-ի դիմաց: Մարդկանց զբաղվածության և միգրացիայի դիմելու հակվածության միջև կապը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Ինչպես նշեցինք, մեր խնդիրը ՀՀ քաղաքացիների կողմից միգրացիայի որոշման կայացման վրա ազդող գործոնների բացահայտումն է, որոնք կարող են ինչպես դրդող, այնպես էլ ձգող գործոններ հանդիսանալ: Այդ խնդիրը լուծելու համար օգտագործել ենք վերոնշյալ տվյալների բազան, որում առկա հարցերը կարող են օգտագործվել որպես փոփոխականներ վերլուծությունների համար: Տվյալների բազայի հետ կապված ամենակարևոր խնդիրն այն է, որ այդ փոփոխականների միջև կարող է առկա լինել բարձր մուլտիկոլինեարություն:

Մասնավորապես, առկա են այնպիսի հարցեր, որոնք իրենց բովանդակությամբ էապես տարբեր են, բայց մարդկանց կողմից այդ հարցերին տրվող պատասխանները կարող են միևնույն միտումը դրսևորել: Այսպես՝ անհատը կարող է իր վատ տնտեսական վիճակը ասոցացնել պետական և ոչ պետական ինստիտուտների բացասական գործունեության հետ և այն հարցին, թե ինչքան է վստահում ՀՀ կառավարությանը, ցածր բալով պատասխան տա, բայց իրականում նրա այդպիսի պատասխանը պայմանավորված լինի նրա աղքատ լինելու հանգամանքով: Հաջորդ կարևոր խնդիրն այն է, որ մարդկանց

որոշ մասը կարող է լրջության և անկեղծության բավարար մակարդակ չդրսևորելիարցման ընթացքում, և հարցազրուցավարը փաստացի դրա վրա ազդեցություն չի կարող ունենալ: Այս խնդիրները, իհարկե, աղավաղում են վերլուծությունների արդյունքները, որոնք կարող են հաճախ ճիշտ տրամաբանությանը հակասող բնույթ կրել: Հետևաբար պետք է բոլոր հասանելի միջոցներով կանխել այդ խնդիրների ազդեցությունը վերջնական արդյունքների և եզրակացությունների վրա:

Աղյուսակ 1

Մարդկանց զբաղվածության և միգրացիայի դիմելու հակվածության կայք		
Զբաղվածության տեսակ	Մշտական միգրացիայի դիմելու հակվածություն (%)	Ժամանակավոր միգրացիայի դիմելու հակվածություն (%)
Թոշակի անցած	16,96	31,72
Ուսանող, չաշխատող	44,07	79,66
Տնային տնտեսուհի, չաշխատող	29,62	64,13
Գործազուրկ	44,52	72,6
Աշխատող	31,31	64,27
Ինքնագրագված	40,91	68,18
Հաշմանդամ	26,67	36,67
Այլ	28,57	57,14

Հիմք ընդունելով հարցերի բովանդակությունը՝ ընդհանուր երեք հարյուրից ավել հարցից մեր կողմից ընտրվել է քառասուներկու հարց (փոփոխականներ), որոնք կարող են ազդեցություն ունենալ մարդկանց կողմից միգրացիայի դիմելու հակվածության վրա: Մուլտիկոլինեարության խնդիրը լուծելու համար կատարվել է VIF (Variance inflation factor) վերլուծություն (և դրա տարատեսակը՝ GVIF վերլուծություն [2]), որը ցույց է տվել, որ փոփոխականների միջև մուլտիկոլինեարության խնդիր չկա, իսկ եթե առկա լինի, ապա շատ թույլ: Սակայն երբ դիտարկում ենք փոփոխականների կոռելյացիոն մատրիցը, ապա նկատում ենք, որ այնտեղ որոշ փոփոխականների միջև կոռելյացիայի գործակիցը բավականին բարձր է: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում կատարել լրացուցիչ հետազոտություններ մուլտիկոլինեարության խնդիրը հիմնովին լուծելու համար: Այդ նպատակով մեր կողմից կատարվել է գործոնային վերլուծություն (անգլ.՝ factor analysis): Գործոնային վերլուծությունը, բացի փոփոխականների միջև կապերը բացահայտելուց, կատարում է նաև մեկ այլ կարևոր ֆունկցիա. այն թույլ է տալիս նվազեցնել փոփոխականների քանակը՝ դրանցից որոշները փոխարինելով վերլուծության արդյունքում բացահայտված գործոններով: Աղյուսակ 2-ում ներկայացված են գործոնային վերլուծության արդյունքները. երկրորդ սյունակում ներկայացված են այն փոփոխականները, որոնք օգտագործվել են գործոնային վերլուծության ընթացքում, առաջինում՝ վերլուծության արդյունքում բացահայտված գործոնները: Նշենք, որ նախնական քառասունչորս փոփոխականից ընտրվել է քսաներկու փոփոխական, որոնք կոռելյացիոն մատրիցում ունեցել են կոռելյացիայի բարձր գործակիցներ: Բնչպես երևում է աղյուսակից, քսաներկու փոփոխականից վեց գործոնի վրա բեռնվել է ընդամենը տասնինը (բեռնվածության գործակիցը մեծ 0,4-ից): Մնացած երեք փոփոխականը լոջիթ մոդելում օգտագործվել է որպես առանձին փոփոխական:

Աղյուսակ 2-ում առկա ինֆորմացիայից կարելի է եզրակացնել, որ մուլտիկոլինեարության խնդիրը գործոնային վերլուծության միջոցով մեծամասամբ հաղթահարվել է: Հիմնականում բացահայտվել են փոփոխականների միջև կապերը: Այսպես՝ ՀՀ քաղաքացիները հակված են վստահության միևնույն մակարդակն արտահայտել իշխանության երեք թևերի և որոշ ինստիտուտների (այդ թվում ոչ պետական՝ օրինակ մամուլի) նկատմամբ՝ հաշվի չառնելով, որ դրանք տարբեր ֆունկցիաներ են կատարում և կազմված են մարդկանց տարբեր խմբերից: Գործոնային վերլուծությունը նաև ցույց տվեց, որ մարդկանց կողմից իշխանությունների նկատմամբ վստահության և իրենց տնտեսական վիճակի միջև կապն այնքան էլ ուժեղ չէ: Ուշագրավ է նաև այն, որ որպես առանձին գործոններ են ստացվել մարդկանց՝ կյանքից բավարարվածության աստիճանը և իրենց տնտեսական վիճակը: Բնչպես երևում է աղյուսակից, մարդիկ վստահության նմանատիպ մակարդակ են ցուցաբերել բանկային համակարգի երկու մակարդակի՝ ԿԲ-ի և մասնավոր բանկերի նկատմամբ: Բնչ վերաբերում է 5-րդ գործոնին, ապա վերլուծությունը ցույց է տալիս, որ մարդկանց կողմից այդ երկու ինստիտուտների նկատմամբ վստահության մակարդակները իրար բավականին մոտ են, բայց պարտադիր չէ, որ մարդկանց կողմից դրանք ընկալվեն որպես նման ինստիտուտներ:

Աղյ. 3 և 4-ում ներկայացված են լոջիթ վերլուծության արդյունքները, որտեղ անկախ փոփոխականների քանակը երեսունմեկ է՝ նախնական փոփոխականներից քսանհինգը և վեց գործոններ, իսկ կախյալ փոփոխականը <<հետաքրքրված եք արդյոք մշտական միգրացիայի դիմելով>> հարցի պատասխանն է (EMIGRAT): Նշենք, որ որպես գործոնների արժեքներ օգտագործվել են այդ գործոնների գնահատականները (անգլ.՝ factor score), որոնք ստանդարտված փոփոխականներ են՝ 0 միջինով և 1 վարիացիայով:

Աղյուսակ 3-ում ներկայացված են այն փոփոխականները, որոնց համար նշանակալի գործակիցներ են ստացվել: Ինչպես երևում է աղյուսակից, բոլոր վեց գործոնների գնահատված գործակիցները նշանակալի են:

Աղյուսակ 2

Գործոնները և դրանց վրա բեռնված փոփոխականները

Գործոնի համար	Գործոնի անվանում	Փոփոխականներ
1	Երկրի իշխանության նկատմամբ վստահության աստիճան	• Ինչքան եք վստահում դատական համակարգին • Ինչքան եք վստահում Ազգային ժողովին • Ինչքան եք վստահում գործադիր իշխանությանը • Ինչքան եք վստահում նախագահին • Ինչքան եք վստահում ոստիկանությանը • Ինչքան եք վստահում կուսակցություններին • Ինչքան եք վստահում մամուլին • Ինչքան եք վստահում տեղական ինքնակառավարման մարմիններին • Ինչքանով եք աջակցում երկրում սահմանադրական բարեփոխումներին
2	Անհատի տնտեսական վիճակ	• Տնային տնտեսության տնտեսական վիճակը • Ներկայումս Ձեր կարծիքով Դուք որ տնտեսական խավին եք պատկանում • Ապագայում սպասվող տնտեսական վիճակը
3	Բանկային համակարգի նկատմամբ վստահության աստիճան	• Ինչքան եք վստահում բանկերին • Ինչքան եք վստահում ՀՀ Կենտրոնական բանկին
4	Կյանքից բավարարվածության աստիճան	• Ինչքան եք գնահատում Ձեր երջանկության մակարդակը • Կյանքից ընդհանուր բավարարվածության աստիճանը
5	Կրթական և առողջապահական համակարգերի նկատմամբ վստահության աստիճան	• Ինչքան եք վստահում առողջապահության համակարգին • Ինչքան եք վստահում կրթական համակարգին
6	Կրոնական կազմակերպության նկատմամբ վստահության աստիճան	• Ինչքան եք վստահում կրոնական այն կազմակերպությանը, որին պատկանում եք

Մոդելի արդյունքները մեկնաբանվում են հետևյալ կերպ՝

- Տարիքի աճին զուգահեռ նվազում է մարդկանց՝ մշտական միգրացիայի դիմելու հետաքրքրվածությունը (AGE), $B = -0.045$, $exp(B) = 0.956$: $exp(B)$ գործակցի արժեքը ցույց է տալիս տարիքի ազդեցության ուժգնությունը միգրացիայի որոշում կայացնելու վրա: Տվյալ դեպքում այն ցույց է տալիս, որ մարդու տարիքը մեկ տարով աճելու դեպքում նրա՝ միգրացիայի դիմելու շանսերի հարաբերակցությունը ($odds\ ratio = \pi_i / (1 - \pi_i)$, որտեղ π_i -ն միգրացիայի դիմելու հավանականությունն է), աճում է 0.956 անգամ, այսինքն՝ իրականում նվազում է:
- Այն մարդիկ, ովքեր արտերկրում ապրող մոտ ընկեր չունեն ($CLFRDAB$), ավելի քիչ են հակված մշտական միգրացիայի դիմելու՝ $B = -0.406$, $exp(B) = 0.666$:
- Այն մարդիկ, ովքեր վերջին 12 ամիսների ընթացքում որևէ ձևով կաշառք են տվել ($PAYBRIB$), ավելի են հակված մշտական միգրացիայի դիմելու, քան նրանք, ովքեր չեն տվել՝ $B = 0.865$, $exp(B) = 2.376$: Տվյալ դեպքում $exp(B)$ -ն բավականին բարձր արժեք է ստացել, որը նշանակում է, որ կաշառք տալու կամ չտալու հանգամանքը զգալի ազդեցություն ունի մարդկանց՝ միգրացիայի մեջ հետաքրքրվածության վրա:
- Ռուսերենի իմացության վերաբերյալ փոփոխականը ($KNOWRUS$) կատեգորիալ փոփոխական է, որի համար բազային մակարդակ է ընտրվել ռուսերենի գերազանց իմացությունը: $KNOWRUS(3)$ -ը ռուսերենի միջին իմացությանն է համապատասխանում, $KNOWRUS(2)$ -ը՝ սկսնակին, իսկ $KNOWRUS(1)$ -ը՝ առանց տարրական մակարդակին: Քանի որ աղյուսակ 3-ում ներառված երեք փոփոխականն էլ բացասական նշանով գործակից են ստացել, դա նշանակում է, որ ռուսերենի գերազանց իմացությամբ մարդիկ ավելի հակված են մշտական միգրացիայի դիմելու: Հաշվի առնելով

գործակիցների բացարձակ մեծությունները՝ կարող ենք նաև ասել, որ ինչքան ավելի լավ է անհատը ռուսերենի տիրապետում, այնքան ավելի հակված է մշտական միգրացիայի դիմելու:

Աղյուսակ 3

Մոդելի գործակիցները գործոնային վերլուծությունից հետո,
կախյալ փոփոխականը EMIGRAT

	B	S.E.	Wald	df	Sig.	Exp(B)
AGE	-0.045	0.006	62.418	1	0.000	0.956
CLFRDAB(1)	-0.406	0.189	4.604	1	0.032	0.666
PAYBRIB(1)	0.865	0.373	5.370	1	0.020	2.376
KNOWRUS			7.232		0.065	
KNOWRUS(1)	-1.452	0.797	3.322	1	0.068	0.234
KNOWRUS(2)	-0.436	0.256	2.914	1	0.088	0.646
KNOWRUS(3)	-0.036	0.210	0.030	1	0.863	0.965
FAC1_1	-0.394	0.084	21.978	1	0.000	0.675
FAC2_1	-0.328	0.083	15.587	1	0.000	0.720
FAC3_1	-0.178	0.081	4.821	1	0.028	0.837
FAC4_1	-0.162	0.085	3.648	1	0.056	0.850
FAC5_1	-0.264	0.079	11.106	1	0.001	0.768
FAC6_1	-0.173	0.079	4.787	1	0.029	0.841
Constant	0.711	0.447	2.522	1	0.112	2.035

Աղյուսակ 4

Հոսմեր-Լեմեշովի թեստի
արդյունքները

Hosmer and Lemeshow Test		
Chi-Square	df	Sig.
6.233	8	0.621
Cut-off value		0.050

- Հաջորդ փոփոխականները գործոնային վերլուծության արդյունքում ստացված գործոններն են: Այն մարդիկ, ովքեր ավելի քիչ են վստահում երկրի իշխանություններին(գործոն 1), ավելի հակված են մշտական միգրացիայի դիմելու՝ $B = -0.394, exp(B) = 0.675$: Քանի որ այս դեպքում օգտագործվել են գործոնների գնահատականները, մեկնաբանությունը այլ է սովորական փոփոխականների համեմատ: Այսպես՝ երկրի իշխանության նկատմամբ վստահության մեկ ստանդարտ շեղում աճը բերում է միգրացիայի դիմելու շանսերի հարաբերակցության 0.675 անգամ աճի: Նման ձևով կարելի է մեկնաբանել մնացած գործոնների գործակիցները:
- Այն մարդիկ, ում տնտեսական վիճակը ավելի վատ է (գործոն 2), ավելի հակված են մշտական միգրացիայի դիմելու՝ $B = -0.328, exp(B) = 0.720$:
- Այն մարդիկ, ովքեր ավելի քիչ են վստահում բանկային համակարգին (գործոն 3), ավելի հակված են մշտական միգրացիայի դիմելու՝ $B = -0.178, exp(B) = 0.837$:
- Այն մարդիկ, ովքեր ավելի քիչ են բավարարված իրենց կյանքով (գործոն 4), ավելի հակված են մշտական միգրացիայի դիմելու՝ $B = -0.162, exp(B) = 0.85$:
- Այն մարդիկ, ովքեր ավելի քիչ են վստահում կրթական և առողջապահական համակարգերին (գործոն 5), ավելի հակված են մշտական միգրացիայի դիմելու՝ $B = -0.264, exp(B) = 0.768$:
- Այն մարդիկ, ովքեր ավելի քիչ են վստահում այն կրոնական կազմակերպությանը, որին անդամակցում են (գործոն 6), ավելի հակված են մշտական միգրացիայի դիմելու՝ $B = -0.173, exp(B) = 0.841$:

Հետազոտության տեսանկյունից կարևոր է նաև տարբեր փոփոխականների և գործոնների գործակիցների համեմատությունը, օրինակ, մարդկանց տնտեսական վիճակը բնութագրող գործոնի ազդեցությունը միգրացիայի դիմելու որոշման վրա ավելի մեծ է, քան իշխանությունների նկատմամբ վստահության աստիճանը բնութագրող գործոնինը:

Աղյուսակ 4-ում ներկայացված են մոդելի որակը ցույց տվող Հոսմեր-Լեմեշովի թեստի արդյունքները: $Sig. = 0.621$, որը նշանակում է, որ մոդելը նշանակալի է: Աղյ. 5 և 6-ում ներկայացված են լոջիստիկ վերլուծության արդյունքները, որտեղ անկախ փոփոխականների քանակը երեսունմեկ է՝ նախնական փոփոխականներից քսանհինգը և վեց գործոններ, իսկ կախյալ փոփոխականը <<հետաքրքրված եք արդյոք ժամանակավոր միգրացիայի դիմելով>> հարցի պատասխանը (MIGSHRT)-ն է: Աղյուսակ 5-ում ներկայացված են այն փոփոխականները, որոնց համար նշանակալի գործակիցներ են ստացվել:

Մոդելի արդյունքները մեկնաբանվում են հետևյալ կերպ՝

- Տարիքի աճին զուգահեռ նվազում է մարդկանց ժամանակավոր միգրացիայի դիմելու հետաքրքրվածությունը (AGE), $B = -0.037, exp(B) = 0.964$:
- Այն մարդիկ, ովքեր ավելի բարձր են գնահատում իրենց առողջական վիճակը, ավելի են հակված ժամանակավոր միգրացիայի դիմելու, $B = 0.212, exp(B) = 1.236$:

Աղյուսակ 5
Մոդելի գործակիցները գործոնային վերլուծությունից հետո,
կախյալ փոփոխականը՝ MIGSHRT

	B	S.E.	Wald	df	Sig.	Exp(B)
AGE	-0.037	0.005	48.014	1	0.000	0.964
HLTHRAT	0.212	0.093	5.228	1	0.022	1.236
CLFRDAB(1)	-0.322	0.174	3.427	1	0.064	0.725
KNOWRUS			18.260		0.000	
KNOWRUS(1)	-2.533	0.713	12.615	1	0.000	0.079
KNOWRUS(2)	-0.623	0.246	6.397	1	0.011	0.537
KNOWRUS(3)	-0.181	0.212	0.725	1	0.394	0.835
INCSOUAB(1)	-0.420	0.169	6.173	1	0.013	0.657
FAC1_1	-0.369	0.079	21.976	1	0.000	0.691
FAC2_1	-0.147	0.083	3.148	1	0.076	0.864
Constant	3.051	0.698	19.096	1	0.000	21.127

Աղյուսակ 6
Հոսմեր-Լեմեշովի թեստի
արդյունքները

Hosmer and Lemeshow Test		
Chi-Square	df	Sig.
6.017	8	0.645
Cut-off value		0.050

- Այն մարդիկ, ովքեր արտերկրում ապրող մոտ ընկեր չունեն (CLFRDAB), ավելի քիչ են հակված ժամանակավոր միգրացիայի դեմելու՝ $B = -0.322, exp(B) = 0.725$:
- Այն մարդիկ, ովքեր ավելի լավ են տիրապետում ռուսերեն լեզվին (KNOWRUS), ավելի են հակված ժամանակավոր միգրացիայի դեմելու:
- Այն մարդիկ, ովքեր արտերկրում ապրող բարեկամներից դրամական օգնություն չեն ստանում (INCSOUAB), ավելի քիչ են հակված ժամանակավոր միգրացիայի դեմելու, քան նրանք, ովքեր ստանում են այդպիսի եկամուտ՝ $B = -0.420, exp(B) = 0.657$:
- Այն մարդիկ, ովքեր ավելի քիչ են վստահում երկրի իշխանություններին (գործոն 1), ավելի հակված են ժամանակավոր միգրացիայի դեմելու՝ $B = -0.369, exp(B) = 0.691$:
- Այն մարդիկ, ում տնտեսական վիճակը ավելի վատ է (գործոն 2), ավելի հակված են ժամանակավոր միգրացիայի դեմելու՝ $B = -0.147, exp(B) = 0.864$:

Աղյ. 6-ում ներկայացված են մոդելի որակը ցույց տվող Հոսմեր-Լեմեշովի թեստի արդյունքները: $Sig. = 0.645$:

Եզրակացություն: Մեր կողմից առաջադրված խնդիրը օգտագործված տվյալների բազայի շրջանակներում հիմնականում լուծում է ստացել. բացահայտվել են այն գործոնները, որոնք կարող են ազդել ՀՀ բնակիչների միգրացիայի դեմելու որոշման վրա: Այդ գործոններն ընդգրկում են փոփոխականներ, որոնք կապ ունեն ինչպես անհատի տնտեսական վիճակի, նրա՝ կյանքից բավարարվածության, այնպես էլ կառավարող սուբյեկտների գործունեության նկատմամբ վստահության հետ: Կարելի է նման հետազոտություն կատարել նաև անդրկովկասյան մյուս հանրապետությունների՝ Վրաստանի և Ադրբեջանի համար, ինչպես նաև Հայաստանի՝ նախորդ տարիների ընթացքում կատարված հարցումների հիման վրա կատարել համեմատություններ և տեսնել, թե ժամանակի ընթացքում ինչպես են փոխվել միգրացիայի որոշիչները:

Գրականություն

1. Caucasus Research Resource Centers. 2015 "Caucasus Barometer" retrieved from <http://www.crrcenters.org/caucasusbarometer/> on 30.09.2016.
2. John Fox & Georges Monette, Generalized collinearity diagnostics//Journal of the American Statistical Association. – 1992. – Vol. 87. – P. 178-183. 06.12.2016.

Գ.Ր. Կախոյան

ДЕТЕРМИНАНТЫ ЭМИГРАЦИИ НАСЕЛЕНИЯ РА

Выявляются главные детерминанты эмиграции населения РА. С помощью лоджит-модели моделированы результаты опросов, проведенных в Армении в 2015 г. Использован факторный анализ для выявления некоторых связей между объясняющими переменными в лоджит-модели и уменьшения размерности этих переменных.

Ключевые слова: миграция, лоджит-модель, мультиколлинеарность, VIF анализ, факторный анализ.

G.R. Chakhoyan

THE DETERMINANTS OF THE EMIGRATION OF THE POPULATION OF RA

The main determinants of the emigration of RA population are discussed. Logit-model was used to model the results of the survey conducted in Armenia in 2015. With the help of factor analysis some relations were found out amongst the descriptive variables in the logit-model and the dimensionality of the set of those variables is reduced.

Keywords: migration, logit-model, multicollinearity, VIF analysis, factor analysis.

Հայտնյան Գագիկ Ռոբերտի - ասպիրանտ, ԵՊՀ, Տնտեսագիտության մեջ մաթ.մոդելավորման ամբիոն

H.Yu. Adilkhanyan

SPECTRAL ANALYSIS OF ARMENIAN AND GERMAN ELECTRICITY PRODUCTION TIME SERIES*

Energy sectors of Armenia and Germany are the main focus of this paper. This study explores and discusses frequency related aspects of Armenian and German electricity production time series. As a method of evaluation, spectral analysis is selected. By analysing monthly data of Armenian and German electricity production time series it turns out that both time series have frequencies equal to 6 and 12 months (German one has a cycle of 2 months as well). As an addition, time series of electricity consumption by Armenian private households is analysed and respective frequencies are obtained.

Keywords: time series analysis, spectral analysis, Schuster's periodogram, electricity production.

Introduction. Nowadays, we live in a very complex environment with an increasing role of economy and economy related factors. In this sense, during the last decades we have been witnessing growing importance of economics as well. Scholars, by implementing various methods of expertise have been trying to analyse, understand, explain and forecast behaviour of economic variables. In order to accomplish those tasks and conduct studies, economists very often employ mathematical modelling techniques, such as time series analysis, multidimensional modelling, regression analysis, etc.

Among these methods a special interest for scholars represents spectral analysis of economic variables. This type of research allows to identify and quantitatively assess frequencies in the behaviour of variables taken for study. Moreover, this method clarifies existing seasonalities and forms basis for forecasting.

In this study, spectral analysis is applied for energy sector. An attempt is made to reveal frequencies of Armenian and German electricity production time series and compare the results. Energy sector and electricity production, in particular, are considered as one of the most crucial driving factors of modern economies. Its operation has both direct and indirect impacts on other branches of economy as well. Therefore, it is of significant importance to have an understanding of energy related variables' behaviour.

In this respect, Armenia and Germany, as parts of global economy, are not exclusions. Therefore, it is an ambitious task to reveal frequency related features of electricity production time series of both countries. Moreover, time series of electricity consumption in Armenian residential sector (private households) is taken for spectral analysis as well. And it is believed, that the results of this study will give a clear picture concerning the behaviour of these variables and create a possibility for further analysis.

Economic meaning of spectral analysis. Spectral analysis is a commonly used technique in macro- and microeconomic research. The very first studies in this field were implemented in the 1960s. At the beginning, methods of spectral analysis were applied to the management of seasonal relations, while its implementation in studies of dependencies between economic variables and factors was accomplished later. With the time, the scope of application of spectral analysis widened and included studies of business cycles both in international and national levels [1].

A long time ago, economists had realized that all variables they dealt with could be separated into different components. For instance, economic variables very often are introduced in the following form – “trend” plus “cycles” plus “random error”. However, all the mentioned terms could not be properly defined at that time, as only after the establishment of spectral analysis it became possible to give acceptable definitions from statistical perspective [1].

Methodology and data. In time series analysis a special attention is devoted to identification of the so-called “hidden cycles”. The method of Schuster's periodogram is considered as the best one for solving that problem. The following formula represents Schuster's periodogram [1]:

$$I_n(\omega) = \frac{1}{n} \left[\left(\sum_{j=1}^n x_j \cos \frac{2\pi j}{\omega} \right)^2 + \left(\sum_{j=1}^n x_j \sin \frac{2\pi j}{\omega} \right)^2 \right], \quad (1)$$

where x_j , $j=1, \dots, n$ is the value of studied variable. If studied data have a component with a cycle of ω_0 , then $I_n(\omega)$ will have a peak at that point. In current study, 30 cycles are taken into analysis. Therefore $\omega = 30$. In order to calculate the length of cycle, one has to insert ω_0 into the following formula.

* Current paper was developed in the framework of the project SYNERGIA – Sustainable and Systematized Energy Efficiency in Armenia.

$$r = \frac{2m}{\omega}, \quad (2)$$

where r is the length of cycle, while m is an exogenous parameter.

As it was already mentioned in the Introduction, this study explores electricity production time series of Armenia and Germany, as well as times series of electricity consumption in Armenian residential sector. Data for Armenia are obtained from Electricity Reports provided by Public Services Regulatory Commission of Armenia (PSRC) [2], while data for Germany are taken from Monthly Reports on Electricity Supply provided by GENESIS online database of Federal Statistical Office of Germany (Destatis) [3]. All data are taken in monthly basis. However, it is worth mentioning that time series for Armenia cover period from January 2003 to June 2016. Electricity production time series for Germany is a little bit longer and includes period from January 2002 to April 2016.

The following three figures represent time series of all three studied variables (Fig. 1-3).




Fig. 1. Electricity production time series of Germany (mln. kWh)

Source: <https://www-genesis.destatis.de/genesis/online/logon?language=en>




Fig. 2. Electricity production time series of Armenia (mln. kWh)

Source: <http://psrc.am/en/sectors/electric/reports>




Fig. 3. Time series of electricity consumption in Armenian residential sector (mln. kWh)
Source: <http://psrc.am/en/sectors/electric/reports>

In all three figures seasonal fluctuations of variables can be clearly seen. In all three cases time series achieve their highest values during winter periods. Conversely, during summer period variables have lowest values. This particular results are quite logical, as winter both in Armenia and Germany is cold, therefore more electricity is needed in order to satisfy demand.

The results. The following three figures introduce Schuster's periodograms for the studied time series. It should be mentioned that in all cases m is taken equal to 12 (Fig. 4-6).




Fig. 4. Schuster's periodogram for German electricity production time series




Fig. 5. Schuster's periodogram for Armenian electricity production time series

Fig. 4 repots Schuster's periodogram for German electricity production time series. It can be seen, that there are three significant peaks in the figure at points 2, 4 and 11. By inserting these values into the Equation (2) cycles of this time series equal to 2, 6 and 12 months will be got. The same technique is applied for the other two cases as well. Fig. 5 shows that Schuster's periodogram for Armenian electricity production time series also has significant peaks at points 2 and 4. Therefore, similar to German one, this time series also has two cycles with lengths of 6 and 12 months. And finally, Fig. 6 represents Schuster's periodogram for time series of electricity consumption by Armenian population. In this case, there are three peaks at points 2, 4 and 28. By inserting these numbers in the formula, cycles with lengths equal to 25 days, 6 and 12 months will be got.




Fig. 6. Schuster's periodogram for time series of electricity consumption in residential sector of Armenia

Conclusion. In this paper an attempt was made to conduct a spectral analysis of German and Armenian electricity production time series, as well as time series of electricity consumption by Armenian population. As a method of evaluation, one of the best techniques – Schuster's periodogram method was selected. Monthly data were analysed. According to the results, all three studied time series have cycles with lengths of 6 and 12 months. Moreover, time series of electricity consumption by Armenian population has a cycle of 25 days, while time series of electricity production in Germany has a cycle of 2 months.

References

1. Arakelyan A., Mkhitarian Zh., Sargsyan M. Analysis of Economic Time Series. – Yerevan, 2014.
2. Public Services Regulatory Commission of RA (PSRC). Electrical Energy Reports.
3. Federal Statistical Office of Germany (Destatis). Monthly Reports on Electricity Supply.

09.11.2016.

Հ.Յու. Ադիլխանյան

ՀՀ ԵՎ ԳՐՀ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՇԱՐՔԵՐԻ ՍՊԵԿՏՐԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դիտարկվել են ՀՀ և ԳՐՀ (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն) էներգետիկ ոլորտները: Ուսումնասիրվում է նշված երկրների էլեկտրաէներգիայի արտադրության ժամանակային շարքերի՝ պարբերականության առնչվող սպեկտրները: Որպես գնահատման մեթոդ ընտրված է սպեկտրային վերլուծությունը: Վերլուծելով ՀՀ և ԳՐՀ համապատասխան ժամանակային շարքերը՝ պարզվել է, որ վերջիններս ունեն 6 և 12 ամիս տևողությամբ պարբերաշրջաններ (երկրորդը նաև 2 ամիս տևողությամբ պարբերաշրջան): Ավելին, գնահատվել է նաև ՀՀ բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի ժամանակային շարքի սպեկտրը, որի արդյունքում նշված շարքի համար ստացվել են 25 օր, ինչպես նաև 6 և 12 ամիս տևողությամբ պարբերաշրջաններ:

Առանցքային բառեր. ժամանակային շարքերի վերլուծություն, սպեկտրային վերլուծություն, Շուստերի պարբերագիր, էլեկտրաէներգիայի արտադրություն:

А.Ю. Адилханян

СПЕКТРАЛЬНЫЙ АНАЛИЗ ВРЕМЕННЫХ РЯДОВ ПРОИЗВОДСТВА ЭЛЕКТРОЭНЕРГИИ В АРМЕНИИ И ГЕРМАНИИ

Рассмотрены энергетические секторы Армении и Германии. Изучены аспекты периодичности временных рядов производства электроэнергии двух стран. Для оценки выбран метод спектрального анализа. В результате анализа вышеупомянутых временных рядов выявлены циклы длительностью 6 и 12 месяцев (для Германии также получен цикл длительностью в 2 месяца). Кроме того, оценен спектр временного ряда потребления электроэнергии населением Армении. Для этого ряда получены три цикла длительностью 25 дней, а также 6 и 12 месяцев.

Ключевые слова: анализ временных рядов, спектральный анализ, периодограмма Шустера, производство электроэнергии.

Adilkhanyan Hayk – Chair of Mathematical Modelling in Economics, Yerevan State University

M.G. Harutyunyan

ARMENIAN FINANCE-NEUTRAL OUTPUT GAP

The importance of financial cycle on the real economy is highlighted. In particular it shows how some key financial variables affect the estimation of output gap for Armenian economy using multivariate model and estimating it with Bayesian technique. We find that real credit growth, real estate price inflation and broad money growth have very big impact on the output gap, and hence ignoring them could be incorrect and misleading for policy makers and monetary authority's point of view.

Keywords: *notential output, output gap, financial cycle, multivariate HP filter.*

Introduction. Potential output and output gap are unobservable variables, yet they have a crucial role in policy making such as setting interest rate, obtaining fiscal balance. For this it is very important to have a precise measure for them. Before recent financial crises most output gap estimates were focused on the role of labor, capital, technology, and sometimes trade variables. But The Global Recession has shown that imbalances in the financial sector and in asset markets can emerge while inflation remains low and stable. For example Borio, Disyatat and Juselius (2013a) [1], henceforth BDJ(2013), show that embedding financial sector information in a flexible estimation framework results in an improvement in the reliability and accuracy of real-time output gap estimates for the US, UK and Spain. This study is presenting a simple measure of output gap, henceforth finance-neutral output gap, which also takes into account the evolution of some important financial variables. Hence using this measure of output gap could be beneficial for policy makers and monetary policy authorities.

Inspired by BDJ(2013) work, we simply use a simple “parsimonious” multivariate filter to measure output gap for Armenian economy. Rather than imposing structural equations that embody priors on economic relationships, such as Philips curve, the filter evaluates directly the ability of plausible observable economic variables to explain cyclical output fluctuations at a specific frequency: Hodrick-Prescott filter frequency [2].

Our analysis differs from BDJ(2013) in two dimensions:

First we don't adjust variables for Cesaro mean, rather we take HP filter gaps with smoothing parameter $\lambda = 100000$. This approach seems more applicable for emerging countries, where there is strong-upward trend in financial variables and sample means may not be associated with equilibrium values. We take $\lambda = 100000$, to capture the fact that financial cycles last on average 16 years (in industrialized countries), in contrast with business cycles, which last on average 8 years [3].

And Second: we don't directly estimate the autoregressive parameter of the output gap β by Bayesian technique, rather we estimate it from output gap obtained by HP filter. By this step we don't put additional restrictions on autoregressive parameter and allow the data to determine the persistence of the gap.

Estimation results show that financial cycle, in particular real credit growth, real property price growth and broad money growth, have big impact on Armenian output gap.

Data and descriptive statistics. We use quarterly data of real GDP, real total credit to non-financial private sector, real residential property price, inflation, real interest rate and broad money as a percentage of GDP from national account statistics, from 2002q1 to 2016q1. To get real credit series, real estate prices and real interest rates, we divide nominal terms to CPI. As a short-term interest rate we take interbank repo rate. All variables are seasonally adjusted and logarithmically transformed. As it was already mentioned above, in contrast with BDJ(2013), we use HP filtered data with smoothing parameter $\lambda = 100000$ for variables instead of adjusting them for Cesaro means, which can lead to misinterpretation of a long-term trend of financial deepening as cyclical. Hence the resulting potential output is higher and the output gap lower than it would otherwise be.

All variables gaps are presented in Fig.1 and standard deviations in Table 1. As it can be seen from Table 1, interest rate is the most volatile variable, and inflation is the lowest, which is quite intuitive. The standard deviation of credit growth is higher than that of real property price inflation.

Table 1

Standard deviations of financial variables

Variable	Δcr_t	Δpp_t	Δinf_t	Δr_t	Δbm_t
St. dev.	3.69	3.1	1.37	6.72	4.32




Fig.1. Financial variables gaps

The model. It is known that, the standard HP filter is obtained by solving the following minimization problem

$$\sum_{t=1}^T \frac{1}{\sigma_1^2} (y_t - y_t^*)^2 + \frac{1}{\sigma_0^2} (\Delta y_{t+1}^* - \Delta y_t^*)^2, \quad (1)$$

where y_t is the log of actual output and y_t^* is potential output, σ_1^2 is the variance of output gap, and σ_0^2 is the variance of the change in potential output. The signal-to-noise ratio determined by $\lambda_1 = \sigma_1^2 / \sigma_0^2$ captures the relative variability of estimated trend, so when $\lambda_1 = 0$, trend component is the data itself and no smoothing takes place. Conversely, when λ_1 tends to infinity, the estimated trend component is a linear line. For Armenian quarterly data we set $\lambda_1 = 1600$, and as an exercise tried the estimation also with $\lambda_1 = 400$.

Minimization problem (1) can be written in the state-space form and solved by Kalman filter [4] in the following way:

the state equation:

$$\Delta y_{t+1}^* = \Delta y_t^* + \varepsilon_{0,t+1}, \quad \varepsilon_{0,t} \sim N(0, \sigma_0^2) \quad (2)$$

and the measurement equation:

$$y_t = y_t^* + \varepsilon_{1,t}, \quad \varepsilon_{1,t} \sim N(0, \sigma_1^2). \quad (3)$$

In Borio et al (2014) it has been shown that a robust way of embedding economic information in output gap estimates is to simply add additional variables in (3) as follows

$$y_t = y_t^* + \beta(y_{t-1} - y_{t-1}^*) + \gamma' x_t + \varepsilon_{2,t}, \quad \varepsilon_{2,t} \sim N(0, \sigma_2^2), \quad (4)$$

where x_t is a vector of economic variables and $\varepsilon_{2,t}$ is a new error term. In equation (4) is also included lagged output gap, which captures pronounced serial correlation generally presented in HP-filtered output gaps.

Now the system of equations (2) and (4) corresponds to the following loss function

$$\sum_{t=1}^T \frac{1}{\sigma_2^2} (\varepsilon_{2,t})^2 + \frac{1}{\sigma_0^2} (\Delta y_{t+1}^* - \Delta y_t^*)^2, \quad (5)$$

and corresponding signal-to-noise ratio is $\lambda_2 = \sigma_2^2 / \sigma_0^2$. Note that here $\varepsilon_{2,t}$ depends on the autoregressive term and the economic variables.

To insure that obtained measure has the same cyclical as ordinary one for comparability, we set λ_2 such that

$$\frac{\text{var}(y_t - y_{HP,t}^*)}{\text{var}(\Delta y_{HP,t}^* - \Delta y_{HP,t-1}^*)} = \frac{\text{var}(y_t - y_{ALT,t}^*)}{\text{var}(\Delta y_{ALT,t}^* - \Delta y_{ALT,t-1}^*)}, \quad (6)$$

where $y_{HP,t}^*$ is potential output obtained from standard HP filter, and $y_{ALT,t}^*$ is the one obtained from the model which uses equations (2) and (4).

Note that measuring this way, we do not allow the conditioning variables to have a direct impact on potential output, we assume that they contain information only about cyclical or transitory component of output. Financial factors affect output gap, and hence indirectly have a substantial influence on the estimate of potential output, and this will explain the evidence that banking crises, which follow the booms, have negative permanent impact on output, and hence on potential.

We follow existing literature in choice of imbalances indicators. In (4) x_t is a vector of economic variables, in which we consider inflation, the real interest rate, the growth rate of total real credit to non-financial private sector, real residential property price growth, and broad money growth.

Estimation and Results. We adopt Bayesian techniques to estimate the state-space system consisting of equations (2) and (4). We set priors distributions on parameters and maximize the posterior density function with respect to parameters, using IRIS toolbox add-on to Matlab. As it was mentioned above, we estimate all parameters beside the autoregressive parameter β , which we calibrate from output gap obtained by HP filter. We do so to avoid of putting additional restrictions on β , such as avoidance of unit-root output gap. Based on our calculations we set $\beta = 0.75$. Following BDJ(2013), we assume that all estimated parameters have Gamma distribution with prior means and standard deviations equal to 0.3. We also tried to estimate the model allowing variables to enter in equation (4) with different lag lengths (up to 4). After we chose the one which have maximized the contribution of the variable to the estimated output gap. And finally we set λ_2 iteratively to satisfy (6).

In Table 2 we present the results of the estimation. For example Model 1 in Table 2 is the model which uses only inflation as explanatory variable, Model 2-real interest rate, etc. And based on estimation results Model 6 is the one which combines all significant explanatory variables, in particular real credit growth, real property price inflation and broad money growth. Numbers in brackets are corresponding t-statistics. Fig. 2 presents estimated output gap and trend and compares it with results obtained by standard HP filter.

From the results it can be seen that the estimated Output gap significantly differs from that obtained by standard HP filter. In particular it shows higher Y gap in its peak, and lower before and after crises. Hence financial sector of Armenian economy really had a great impact on real sector during past years. The most impact had credit growth, then real property price growth and finally broad money growth. This can be explained by rapid growth in credit market and broad money for whole sample period, and by huge growth on real residential property prices in pre-crisis period (Fig. 3). The same analysis has been done also by HP filter with smoothing parameter equal to 400. The results also support previous findings.

Table 2

Estimated parameters

Model	β	π_{t-1}	r_{t-1}	Δcr_t	Δrp_t	bm_t	λ_2
Model 1	0.75	0.00 NaN	-	-	-	-	13.3
Model 2	0.75	-	0.00 NaN	-	-	-	12.25
Model 3	0.75	-	-	0.43 (4.16)	-	-	8.12
Model 4	0.75	-	-	-	0.40 (2.85)	-	9.6
Model 5	0.75	-	-	-	-	0.32(4.29)	10.55
Model 6	0.75	-	-	0.27(2.1)	0.18 (0.91)	0.17(1.34)	7.04




Fig.2. Estimated GDP trend and gaps




Fig.3. Log of financial variables

Because of shortness of our data set, unfortunately we couldn't conduct real time performance of the filter. Instead we compare GDP growth for both cases, to see which one is more consistent with the concept of sustainable output growth. From Fig.4 we can see that GDP growth estimated by HP filter shows notable variability, compared with Finance-neutral one.




Fig.4. GDP growth (y-o-y,%)

Conclusion. After the 2008 financial crisis it's become obvious that output gap can be unsustainable while inflation remains low and stable. This happens because of large amount of financial imbalances. To show that Armenian economy is not an exception, we have used multivariate HP filter to estimate Output gap, in which information on financial cycle also has been taking into account. Estimation results show that financial cycle, in particular real credit growth, real property price growth and broad money growth, have big impact on output gap. This suggests that finance-neutral output gap seems to represent a more appropriate measure on which to base monetary policy decisions than the traditional inflation-neutral measures prevalent in the literature. Given the encouraging preliminary results, the research could be extended by, for example, investigating a wider range of financial sector variables and/or incorporating non-linearities into the estimation framework.

References

1. **Drehmann M., Borio C. and Tsatsaronis K.** Characterizing the financial cycle: don't loose sight of the medium term! // *BIS Working Papers*. - 2012, November. - No 355.
2. **Hodrick R. and Prescott E.C.** Postwar U.S. Business Cycles: An Empirical Investigation // *Journal of Money, Credit, and Banking*. - 1997. - 29 (1).
3. **Borio C., Disyatat P. and Julselius, M.** Rethinking potential output: Embedding information about the financial cycle // *BIS Working Papers*. - 2013. - N 404.
4. **Kalman, R.E.** A new approach to linear filtering and prediction problems // *Journal of Basic Engineering*. - 1960.- 82(1). 10.11.2016.

Մ.Գ. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻՑ ԶԵԶՈՔ ՀՆԱ-Ի ՃԵՂՔ

Ներկայացված է Հայաստանյան ֆինանսական ցիկլի կարևոր ազդեցությունը իրական տնտեսության վրա: Մասնավորապես, օգտագործելով բազմագործոն մոդել և գնահատելով այն բայեսյան մեթոդաբանությամբ, ցույց է տրվում, որ որոշ ֆինանսական փոփոխականներ, ինչպիսիք են իրական վարկերի աճը, անշարժ գույքի գների աճը և փողի զանգվածի աճը, կարևոր ազդեցություն ունեն ՀՆԱ-ի ճեղքի գնահատականի վրա: Հետևաբար անտեսել այդ ազդեցությունը կարող է հանգեցնել սխալ որոշումների կայացմանը հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների տեսանկյունից:

Առանցքային բառեր. պոտենցիալ ՀՆԱ, ՀՆԱ-ի ճեղք, ֆինանսական ցիկլ, բազմագործոն Հողրիկ-Պրեսկոտի ֆիլտր:

М.Г. Арутюнян

АРМЯНСКИЙ ФИНАНСОВО-НЕЙТРАЛЬНЫЙ РАЗРЫВ ВАЛОВОГО ВНУТРЕННЕГО ПРОДУКТА

Исследуется важность влияния финансового цикла Армении на реальную экономику. В частности, используя многофакторную модель и оценивая её с байесовской техникой, показано, что определенные финансовые переменные, такие как рост реального кредита, инфляция цен на недвижимость и рост денежной массы, влияют на оценку разрыва ВВП. Следовательно, их игнорирование может быть неправильным и заблуждающим с точки зрения фискальной и монетарной политики.

Ключевые слова: потенциальный объем ВВП, разрыв ВВП, финансовый цикл, многофакторный фильтр Ходрика-Прескотта.

Harutyunyan Mane Gegham - postgraduate (YSU)

ՀՏԴ 330.330015:336.3

ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ս.Մ. Սարգսյան

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

2008-2009թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո մինչ օրս համաշխարհային տնտեսությունը չի կարողանում լիարժեքորեն վերականգնվել և արտաքին պետական պարտքը շարունակում է երկրների տնտեսական աճի համար հիմնական խնդիրներից մեկը մնալ: ԱՊՀ տարածաշրջանի մի քանի երկրների՝ Հայաստանի, Բելառուսի, Ադրբեջանի, Մոլդովայի և Վրաստանի օրինակով ուսումնասիրվել է արտաքին պետական պարտքի արժույթային կառուցվածքի և միջին ժամկետայնության փոփոխությունը ճգնաժամից առաջ և հետո:

Առանցքային բառեր. պետական պարտք, արտաքին պետական պարտք, ՀՆԱ, արտաքին պարտքի արժույթային կառուցվածք, պարտքի մարման միջին ժամկետ:

Ներածություն: Իսկապես, վերջին ճգնաժամերը սերտորեն փոխկապակցված են եղել պարտքի ճգնաժամերի հետ: Պետական պարտքի մեջ առանձնացվում են արտաքին պետական պարտքը և ներքին պետական պարտքը՝ կախված պարտապանների ռեզիդենտությունից. տարանջատում կա նաև ըստ պարտքի ժամկետայնության: Սովորաբար մինչև մեկ տարի մարման ժամկետ ունեցող պարտքը համարվում է կարճաժամկետ, 1-10 տարին՝ միջնաժամկետ և 10-ից ավելին՝ երկարաժամկետ: Ըստ էության պետական պարտքը կարող է մեծանալ ճգնաժամի արդյունքում մի քանի պատճառով, որոնք են.

1. արտարժույթի փոխարժեքի աճ (սեփական արժույթի արժեզրկում),
2. իրական տոկոսադրույքների աճ,
3. արտահանման նվազում,

4. ճգնաժամը մեղմելու կամ առկա խնդիրները լուծելու համար նոր ներգրավված վարկերը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից:

Հետճգնաժամային տատանումները նույնպես կարող են հանգեցնել պետական պարտքի փոփոխություններին, մասնավորապես կարող են փոխվել պետական պարտքի կառուցվածքը, ժամկետայնությունն ու արժույթային համամասնությունները:

Ուսումնասիրվող խնդիրը: Դիտարկվել են ԱՊՀ տարածաշրջանի մի քանի երկրներ՝ Հայաստանը, Բելառուսը, Ադրբեջանը, Մոլդովան և Վրաստանը: Ներկայացվող աշխատանքի խնդիրն էր՝ վերլուծել վերոնշյալ երկրների պետական պարտքի միջին ժամկետայնությունը և արժույթային կառուցվածքը ճգնաժամից առաջ և հետո: Աղյուսակներում դիտարկվող բոլոր տվյալները, ինչպես նաև գրաֆիկները Համաշխարհային բանկի կայքից են [1]:

Պետական պարտք [2, 3]: Պետական պարտքի մեծ չափը հանգեցնում է ֆինանսական ակտիվների գների աճի հավանականության բարձրացմանը՝ համապատասխանաբար ազդելով նաև ֆինանսական հատվածի հաշվեկշռի վրա: Այդ ազդեցության չափը կախված է ոչ միայն ֆինանսական կազմակերպությունների պորտֆելներում առկա ակտիվների քանակից, այլև պորտֆելի կառուցվածքից: Պարտքի կառուցվածքից կախված՝ կարող են առաջանալ մի շարք տատանումներ և ռիսկեր: Այն կարող է լուրջ վտանգ ներկայացնել տնտեսության իրական հատվածի և ֆինանսական համակարգի համար: Պետական պարտքի կառուցվածքը պետք է քիչ ռիսկեր պարունակի ոչ միայն պետական հատվածի, այլև ֆինանսական համակարգի համար: Պարտքի կառուցվածքի խոցելի մասն են կազմում պարտավորությունների մարման համար սահմանված սեղմ ժամկետները և արժույթը:

Անհամապատասխան պարտքի կառուցվածքը կարող է հանգեցնել մեծ չափերի տոկոսագումարների վճարման: Ընդհանուր առմամբ էժան արժեցող վարկերը լինում են արտարժույթով, բայց վերջիններս էլ չափազանց ռիսկային են հատկապես շուկայում մեծ շուկերի ժամանակ: Ոչ շատ վաղ ժամանակներում Լատինական Ամերիկայի երկրները բախվելով նման խնդրի՝ սկսեցին միջոցներ ձեռնարկել սեփական արժույթով միջոցներ ներգրավելու ուղղությամբ:


Օրինակ, Բրազիլիան վերջին մի քանի տարում մարեց արտարժույթային պարտատոմսերը, որպեսզի նվազեցնի արտարժույթի ռիսկը, դրանց փոխարեն թողարկելով լողացող տոկոսադրույքով

պարտատոմսեր և գնաճով՝ ինֆլացիայով ինդեքսավորված պարտատոմսեր, որպեսզի ավելացնի պարտքի միջին ժամկետայնությունը ինչպես նաև ֆիքսված տոկոսներով պարտավորությունների կշիռը պորտֆելում:

Ընդհանուր առմամբ պարտքերը, որոնց կառուցվածքում մեծամասամբ կարճաժամկետ պարտավորություններ են, առավել տատանողական են ու ռիսկային, քանի որ կարճ ժամկետները հանգեցնում են վարկերի վերաձևակերպումների և վերաֆինանսավորման ռիսկի աճին: Նման դեպքերում տոռկսադրույքների աճը կարող է հակառակ ազդեցությունն ունենալ: Պարտքերը, որոնց մարման ժամկետները կարճ են, կարող են առաջացնել վստահելիության անկում պետական պարտքի նկատմամբ, քանի որ ներդրողները կարող են կարծել, որ պետությունը չի կարողանա կատարել ստանձնած պարտավորությունները, երբ դրա կարիքն առաջանա, որի պատճառով կարող է տեղի ունենալ պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի կրճատում:

Պարտքի կառավարմամբ զբաղվող մարմինները պետք է մշակեն քաղաքականություն և ռազմավարություն, որոնք նվազեցնում են վերոնշյալ ռիսկերը: Տարբեր երկրներում դրա համար թողարկվում են գնաճով ինդեքսավորված պարտատոմսեր իրենց երկրի ֆոնդերի համար: Արդեն բազմիցս հաստատվել է, որ արտարժույթային պարտատոմսերն ավելի ռիսկային են և երբեմն էլ ֆինանսական կայունությունը կարող են խարխիլել, և կարճաժամկետ պարտատոմսերն ավելի մեծ ռիսկ են ներկայացնում: Գնաճով ինդեքսավորված պարտատոմսերը միտված են ավելացնել պարտքի մարման միջին ժամկետայնությունը՝ առանց ավելացնելու փոխարժեքի ռիսկը: Այդուհանդերձ, այս իմաստով պարտատոմսերը նույնպես կարող են բերել գնաճի չափերի աճին և պարտքի կառավարմամբ զբաղվող մարմինները պետք է մշակեն և գնահատեն այնպիսի ռազմավարություն, որը կհամապատասխանի նաև երկրի տնտեսության աճին, այլ ոչ թե կհանգեցնի գնաճի միտումների աճին: Կարևոր է դիտարկել նաև պետական պահուստների դինամիկան, քանի որ ճգնաժամների ընթացքում, բացի նոր վարկեր ներգրավելուց, սովորաբար նվազում են նաև պետական պահուստները:

Ակնհայտորեն ամենից մեծ արտաքին պետական պարտքի աճ արձանագրել է Բելառուսը, իսկ զարմանալիորեն այդ թվում և 2009թ.-ին Հայաստանն ու Ադրբեյջանը գրեթե նույն ցուցանիշն ունեն, և դինամիկան էլ շատ նման է՝ չնայած տնտեսությունների միջև ակնհայտ տարբերություններին, իսկ Մոլդովան ամենից քիչ պետական պարտքի ավելացում արձանագրած պետությունն է այս հնգյակում, վերջինս ՀՆԱ-ի աճի տեմպի ցուցանիշում էլ արձանագրել էր ուշագրավ աճ 2012-2013թթ.-ի ընթացքում. մեկ տարվա ընթացքում այդ ցուցանիշը -0,7%-ից դարձել էր 9,4%:



Նկ. 1. Ընթացիկ արտաքին պարտքի մնացորդ (ԱՄՆ \$) (%)


2006-2013 թթ.-ի, իսկ երբեմն նաև 2014թ.-ի համար նպտակահարմար կլինի դիտարկել նաև հետևյալ ցուցանիշները.

1. Կարճաժամկետ պարտքի մասը որպես տոկոս ընդհանուր արտաքին պարտքից:
2. Արտաքին պետական կարճաժամկետ և երկարաժամկետ պարտքի մնացորդ (ԱՄՆ \$-ով):
3. Նոր ներգրավված արտաքին պարտքի մարման միջին ժամկետայնություն (տարիներ):

4. Պետական պարտքի արժույթային կառուցվածքը ԱՄՆ դոլարով (%), եվրոյով (%), SDR (%), ճապոնական յենով (%):

Աղյուսակ 1

<i>Կարճաժամկետ պարտքի մասը որպես տոկոս ընդհանուր արտաքին պարտքից</i>								
	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	14.3641	15.116	12.7877	10.5859	9.8814	11.7742	10.6199	13.2501
Վրաստան	16.9317	19.814	12.4222	9.4404	10.1208	13.5977	16.4216	17.3007
Բելառուս	66.9635	58.9451	49.9815	41.1544	41.7783	39.6322	34.4691	34.7504
Մոլդովա	32.1168	32.0617	35.2582	37.394	32.7268	33.2352	31.9782	34.1984
Ադրբեջան	19.3487	27.9737	26.177	17.0361	12.4911	11.0209	8.9201	9.2416



Նկ. 2. Կարճաժամկետ պարտքի մասը որպես տոկոս ընդհանուր արտաքին պարտքից


Այս ցուցանիշի դինամիկան դիտարկելիս պարզ է դառնում, որ կարճաժամկետ պարտավորությունները, որոնք գերակշռել են Բելառուսում, դիտարկվող ժամանակաշրջանի ընթացքում նվազել են շուրջ 32%-ով, ինչը միանշանակ դրական միտում է, քանի որ պարտքի մեջ 2006թ.-ին կարճաժամկետ պարտավորությունները կազմել են շուրջ 67%, ինչը մտահոգիչ ցուցանիշ է: Հայաստանի կարճաժամկետ պարտավորություններն էականորեն այդ ժամանակահատվածում փոփոխություն չեն կրել: Նույնը կարելի է ասել մնացած երեք երկրների՝ Մոլդովայի, Վրաստանի և Ադրբեջանի մասին: Այս համատեքստում դիտարկենք նաև արտաքին պետական կարճաժամկետ և երկարաժամկետ պարտքերի դինամիկան արտահայտված ԱՄՆ դոլարով: Ներքոնշյալ երկու աղյուսակներից և գծապատկերներից երևում է, որ բոլոր երկրներում աճել են թե՛ կարճաժամկետ և թե՛ երկարաժամկետ պարտավորությունները, մինչդեռ երկարաժամկետ պարտավորություններն ավելի մեծ աճ են արձանագրել կարճաժամկետի համեմատությամբ:

Աղյուսակ 2


<i>Արտաքին պետական կարճաժամկետ պարտքի մնացորդ (մլրդ ԱՄՆ \$)</i>								
	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	0.3068	0.4590	0.4528	0.5213	0.6205	0.8693	0.8079	1.1497
Վրաստան	0.4357	0.5740	0.9482	0.8077	0.9634	1.5445	2.1592	2.3691
Բելառուս	4.3820	7.3611	7.5579	9.0761	11.8637	13.4455	11.6353	13.5901
Մոլդովա	0.8421	1.0789	1.2888	1.4033	1.5829	1.7688	1.8794	2.2615
Ադրբեջան	0.52	1.043	1.169	0.81	0.878	0.891	0.852	0.852

Աղյուսակ 3

<i>Արտաքին պետական երկարաժամկետ պարտքի մնացորդ (մլրդ ԱՄՆ \$)</i>								
	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	1.5334	2.2810	2.8181	3.6787	4.7831	5.5514	5.8890	6.8073
Վրաստան	1.6847	1.8442	6.0031	6.7362	7.2836	8.6048	10.0242	10.7441
Բելառուս	1.6072	4.5444	6.9957	9.5284	12.4702	16.4298	18.5324	23.5858
Մոլդովա	1.4618	1.9407	2.0190	2.0110	2.7451	2.8986	3.2048	3.5788
Ադրբեջան	1.8022	2.3398	2.9809	3.6420	5.8686	6.9289	8.4475	8.1246



Նկ. 3. Արտաքին պետական կարճաժամկետ պարտքի մնացորդ (մլրդ ԱՄՆ \$)




Նկ. 4. Արտաքին պետական երկարաժամկետ պարտքի մնացորդ (մլրդ ԱՄՆ \$)

Աղյուսակ 4

Նոր ներգրավված արտաքին պարտքի մարման միջին ժամկետայնություն (տարիներ)

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	32.1607	24.3624	32.0791	19.6692	20.6029	24.2603	22.5267	25.2783
Վրաստան	34.8406	26.9394	25.4564	30.895	20.0141	23.7529	27.1633	24.4625
Բելառուս	16.9166	14.9005	12.1019	13.423	7.5583	19.1925	14.75	11.8257
Մոլդովա	39.4006	23.9519	22.6584	26.5954	16.6729	24.8262	20.995	18.1
Ադրբեջան	24.73711	19.77199	21.5487	25.24799	14.90633	19.28311	20.3359	18.7447




Նկ. 5. Նոր ներգրավված արտաքին պարտքի մարման միջին ժամկետայնություն (տարիներ)

Աղբրեջանը, Բելառուսը և Մոլդովան ցուցաբերել են պարտքի միջին ժամկետայնության նույն դինամիկան, հատկանշական է, որ Հայաստանի պարտքի միջին ժամկետայնությունն է միայն նվազել 2009թ.: Բելառուսի պարտքը 2010թ.-ին կարելի է ասել եղել է միջնաժամկետ՝ մինչև 10 տարի, սակայն դինամիկան այնուհետև փոխվել է: Միջին ժամկետայնության տեսանկյունից ներկայումս իրավիճակն այդքան էլ մտահոգիչ չէ բոլոր հինգ երկրների համար, այսինքն՝ ճգնաժամից հետո հնարավոր է եղել պարտքի կառավարումը ժամկետայնության տեսանկյունից հաջող իրականացնել: Հաշվի առնելով արժույթների տատանողականությունը՝ ճգնաժամի և հետճգնաժամային ժամանակահատվածում պետական պարտքի կառավարումը արդյունավետորեն իրականացնելու համար հարկ է դիտարկել նաև արժույթային համամասնությունների դինամիկան, իսկ քանի որ ՀՀ արտաքին պարտքը արտարժույթով բաղկացած է 4 արտարժույթից՝ ԱՄՆ դոլար, Եվրո, ճապոնական յեն և SDR, դրա համար էլ դիտարկվել են արտաքին պարտքերում վերոնշյալ արժույթների համամասնությունների ցուցանիշները [4]:

Աղյուսակ 5

Պետական պարտքի արժույթային կառուցվածքը ԱՄՆ դոլարով (%)

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	82.5815	71.2471	62.8621	65.9975	62.8035	60.8345	59.111	63.0216
Վրաստան	77.1698	73.1356	81.673	80.2995	80.6937	78.3501	73.5262	69.1443
Բելառուս	60.9537	90.8782	95.8232	92.1235	81.1867	85.722	95.3184	95.7883
Մոլդովա	69.497	69.2798	67.2383	66.4525	69.1376	68.6316	64.2432	63.1219
Աղբրեջան	50.5292	50.8802	51.5013	51.4093	51.373	51.3432	57.5619	56.9271



Նկ. 6. Պետական պարտքի արժույթային կառուցվածքը ԱՄՆ դոլարով (%)


Հայաստանի պետական պարտքում 2008թ.-ին նվազել էր ԱՄՆ դոլարով պարտքի չափը, քանի որ նոր վարկային միջոցներ էին ներգրավել ճապոնական յենով և SDR-ով: Հակառակ միտումն էր այդ ժամանակ Բելառուսում, երբ պարտքի շուրջ 96%-ն ԱՄՆ դոլարով էր: Գրեթե նույն ցուցանիշը պահպանվել է նաև 2014թ.-ին, սակայն հարկ է նշել, որ պարտքի կառավարման տեսանկյունից ճիշտ է դիվերսիֆիկացնել պորտֆելը, և պարտքի արժույթները լինեն քիչ կոռելացված: Ամենից կայուն դոլարային պարտք ունեցող երկիրը այս հնգյակում Աղբրեջանն է, որի արտաքին պարտքում ի տարբերություն կայուն վարք ցուցաբերող ԱՄՆ դոլարի, զգալիորեն աճել են եվրոյով պարտավորությունները: Բնականաբար Բելառուսի դոլարային պարտավորությունները պայմանավորված են նաև նրանով, որ շատ արագ տեմպերով նվազել են եվրոյով պարտավորությունները՝ նվազագույնի հասնելով 2008թ.-ին: Թե՛ ԱՄՆ դոլարով և թե՛ եվրոյով պարտավորություններում կայուն և գրեթե նույն դինամիկան են արձանագրել Մոլդովան և Վրաստանը: Ճապոնական յենով պարտավորություններում ճիշտ հակառակ դինամիկան ունեն Հայաստանն ու Աղբրեջանը, վերջինս գրեթե 21%-ից պարտքը հասցրել է 2014թ.-ին 9.5%-ի, իսկ Հայաստանն ընդհակառակը՝ 2006թ.-ին 0.35 %-ից գրեթե 9%-ի է հասցրել յենով պարտավորությունների չափը: Բելառուսը բնականաբար կարելի է ասել, չունի պարտավորություններ ոչ յենով և ոչ էլ SDR-ով:

Վրաստանի և Մոլդովայի պարտավորությունները յենով յոթ տարիների ընթացքում գտնվում են 1%-ից 3%-ի սահմաններում, իսկ ահա SDR-ով նրանց պարտավորությունները գրեթե համընկնում են:

Աղյուսակ 6

Պետական պարտքի արժույթային կառուցվածքը եվրոյով (%)

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	8.7881	9.0103	8.6884	6.2623	5.7847	7.7715	10.7178	11.4468
Վրաստան	14.9119	16.7379	8.9919	7.8753	8.0209	9.7187	12.4849	14.9834
Բելառուս	25.8735	5.9662	2.3886	5.655	5.3312	3.8996	3.1368	3.0654
Մոլդովա	8.0403	8.6908	9.8614	11.3627	10.3215	11.6693	15.1221	19.1359
Ադրբեջան	20.0455	22.6981	21.4023	27.133	27.7108	27.8721	25.7011	29.6476




Նկ. 7. Պետական պարտքի արժույթային կառուցվածքը եվրոյով (%)

Աղյուսակ 7

Պետական պարտքի արժույթային կառուցվածքը SDR (%)


	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	7.7123	12.2807	16.0128	16.2296	16.6211	16.7391	18.0572	16.6374
Վրաստան	4.0973	6.272	6.7748	9.6192	9.1228	9.7397	11.673	13.1603
Բելառուս	0	0	0	0	0	0	0	0
Մոլդովա	3.8566	5.4079	7.328	8.9753	9.45	10.4059	14.0447	14.534
Ադրբեջան	2.9274	3.784	4.2476	4.114	3.9943	3.5344	2.7748	1.9902



Նկ. 8. Պետական պարտքի արժույթային կառուցվածքը SDR (%)

Պետական պարտքի արժույթային կառուցվածքը ճապոնական յենով (%)

	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	0.3533	7.0412	12.0997	11.3443	14.6414	14.4753	11.9611	8.7396
Վրաստան	2.8691	2.9664	1.9754	1.5607	1.4274	1.5067	1.733	2.1947
Բելառուս	0.6746	0.0847	0	0	0.1734	0.3586	0.207	0.0974
Մոլդովա	2.9871	2.8445	3.3218	2.9113	2.7936	2.4795	1.7095	1.0651
Ադրբեջան	21.3463	17.3763	17.8319	12.8034	12.705	13.6249	11.5146	9.4743



Նկ. 9. Պետական պարտքի արժույթային կառուցվածքը ճապոնական յենով (%)

Գրականություն

1. <http://worldbank.org/>;
2. **OECD, Economic department**, Debt and Macroeconomic Stability, OECD Economics Department Policy Notes, No. 16. January 2013. P. 1.
3. **Monica de Bolle, Björn Rother, and Ivetta Hakobyan**. The Level and Composition of Public Sector Debt in Emerging Market Crises- 2006. - P. 3-23.
4. <http://minfin.am/>.

22.02.2017.

С.М. Саргсян

**ВАЛЮТНАЯ СТРУКТУРА И СРОКИ ПОГАШЕНИЯ ВНЕШНЕГО ГОСУДАРСТВЕННОГО
ДОЛГА ПЕРЕХОДНЫХ СТРАН РЕГИОНА**

Мировая экономика до сих пор не в силах полностью восстановиться после глобального финансово-экономического кризиса 2008-2009 гг., и внешний государственный долг продолжает оставаться одной из основных проблем развития экономики стран. На примерах нескольких стран СНГ (Армения, Беларусь, Азербайджан, Молдова и Грузия) исследованы изменения валютной структуры и среднего срока погашений внешнего государственного долга до и после глобального кризиса.

Ключевые слова: государственный долг, внешний государственный долг, ВВП, структура внешнего государственного долга, средний срок погашения.

S.M. Sargsyan

**CURRENCY STRUCTURE AND MATURITY OF REGIONAL DEVELOPING COUNTRIES'
EXTERNAL PUBLIC DEBT**

After global financial and economic crisis in 2008-2009 world economy hasn't been fully recovered till now and external public debt is still one of the main problems for countries' economy development. On the example of some countries of CIS (Armenia, Belarus, Azerbaijan, Moldova and Georgia) the changes of currency structure and average maturity of external public debt before and after crisis are studied.

Keywords: public debt, external public debt, GDP, currency structure of external public, average maturity.

Սարգսյան Սարգենիկ Մանվելի – ասպիրանտ, Երևանի պետական համալսարան

Ն.Դ. Մարգարյան

ՄԱՔՍԻՄԱԼ ԷՆՏՐՈՊԻԱՅԻ ՄԵԹՈԴՈՎ ԱԿՏԻՎԻ
ԳՆԻ ԲԱՇԽՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Դիտարկվում է մաքսիմալ էնտրոպիայի մեթոդի կիրառումը ակտիվի գնի բաշխման գնահատման մեջ: Էնտրոպիան ինքն իրեն բավականին հայտնի մեծություն է և ունի համապատասխան պատմություն, սակայն ֆինանսական տիպի խնդիրներում որպես գործիք կիրառվել է շատ հազվադեպ: Շուկայում տրված մասնակի ինֆորմացիայի պարագայում մաքսիմալ էնտրոպիայի մեթոդը կառուցում է մի բաշխում, որն ամենաքիչն է կապված բացակայող ինֆորմացիայի հետ և հետևաբար ամենաանկողմնակալն է:

Առանցքային բառեր. մաքսիմալ էնտրոպիա, ինֆորմացիա, բաշխում, օպցիոններ, պորտֆել:

Հետևյալ խնդրում որպես շուկայական ինֆորմացիայի աղբյուր կվերցնենք օպցիոնային գները: Որպես արդյունք՝ իրական օպցիոնների ներկա գների հիման վրա կառուցվելու է դիսկրետ բաշխում, որի խտության ֆունկցիան բավարարում է հավանականային չափի բոլոր հատկություններին: Ցանկալի է նշել, որ մաքսիմալ էնտրոպիայի մեթոդը բավականին տարբերվում է մնացած մեթոդներից ոչ միայն իր մաթեմատիկայով, այլև տրամաբանությամբ: Կարելի է համեմատության համար դիտարկել մաքսիմալ ճշմարտանմանության մեթոդը, որտեղ սկզբում ենթադրվում է բաշխման տիպը, այնուհետև գնահատվում են բաշխման պարամետրերը: Այստեղ, սակայն, տրված ինֆորմացիայից ելնելով գնահատվում է հենց ինքը բաշխումը: Աշխատանքի ավարտին ծրագրավորման միջոցով մոդելը կկիրառվի գործնականորեն և կկայացվեն համապատասխան հետևություններ մոդելի օգտակարության և արդիականության մասին:

Նշանակենք տարբեր կատարման գներով (strike price) օպցիոնների գների վեկտորը b , ժամանակահատվածի վերջում օպցիոնի արժեքների (payout) մատրիցը A , անհրաժեշտ է գտնել հավանականության այնպիսի x վեկտոր, որը բավարարում է՝

$$\sum_{i=1}^n A_{ki} * x_i = b_i, \quad k = 1, \dots, m,$$

$$\sum_i x_i = 1, x_i \geq 0:$$

Ընդ որում x վեկտորը պետք է մաքսիմալացնի $S(x) = -\sum_{i=1}^n x_i * \ln(x_i)$: Սա պայմանական մաքսիմալացման խնդիր է, որը լուծվում է Լագրանժյան բազմապատկիչների միջոցով: Նշանակենք լուծումը P -ով, որն ունի հետևյալ տեսքը՝

$$p_i = \exp\left(-\lambda_0 - \sum_{k=1}^m \lambda_k * A_{ki}\right):$$

Լագրանժյան $m+1$ պարամետրերը որոշվում են սկզբնական m սահմանափակումների, ինչպես նաև նորմալացման սահմանափակման միջոցով՝

$$\exp(\lambda_0) = \sum_{i=1}^n \exp\left(\sum_{k=1}^m \lambda_k * A_{ki}\right):$$

Բնականաբար լուծում գոյություն ունենալու համար անհրաժեշտ է որոշակի պայմանների բավարարված լինելը: Այդ պայմաններից մեկը կլինի A մատրիցի մաքսիմալ ռանկ ունենալը՝ տողերի անկախությունը: Եթե սակայն, այս պայմանը տեղի չունի, կարելի է որոշ տողեր հանել, մինչև

ստանանք գծայնորեն անկախ վեկտորների համակարգ: Եթե նույնիսկ տողերը գծայնորեն անկախ են, հնարավոր է, որ մատրիցը լինի սինգուլյարին մոտ: Այս դեպքերի համար օգտակար է Գրամ-Շմիդտի օրթոնորմալացման ալգորիթը:

Ինտուիտիվ հասկանալի է, որ $\forall i, \min(A_i) < b_i < \max(A_i)$, քանի որ հակառակ դեպքում պետք է հավանականային ատոմներից մեկի չափը լիներ կա՛մ բացասական, կա՛մ 1-ից մեծ: Լագրանժյան պարամետրերը գտնելը, ուղղակիորեն լուծելով ոչ գծային հավասարումների համակարգի պարագայում, բավականին բարդ է, ուստի կարելի է տվյալ խնդիրը վերաձևակերպել և բերել այլ խնդրի լուծման: Հայտնի է [1, 2], որ Լագրանժյան պարամետրերը գտնելու համար բավարար է գտնել հետևյալ նպատակային ֆունկցիայի մինիմումը՝

$$W = - \sum_{i=1}^n p_i^m * \ln\left(\frac{p_i}{p_i^m}\right) = -S(p^m) + \lambda_0 + \sum_{k=1}^m \lambda_k * b_k,$$

որտեղ p^m -ը մաքսիմալ էնտրոպիան ապահովող բաշխումն է:

Այսպիսով, լուծումը կարելի է բաժանել մի քանի փուլերի: Նախ՝ կարելի է գծային ծրագրավորման մեթոդներով ստուգել՝ արդյոք լուծման վեկտոր գոյություն ունի: Լուծման գոյությունը պարզելուց հետո՝ կարելի է սկզբնական մատրիցը փոխարինել իր օրթոնորմալ ձևափոխությամբ, այնուհետև նոր մատրիցի համար կկիրառվի էքստրեմում գտնելու Նյուտոնի մեթոդը: Բացի Նյուտոնի մեթոդից, կարելի է օգտագործել ավելի պարզ, սակայն միննույն ժամանակ ավելի դանդաղ աշխատող գրադիենտի մեթոդը: Ստանալով վերջնական պարամետրերը՝ կկատարենք հակադարձ մատրիցային ձևափոխություն՝ նախնական պարամետրերին գալու համար: Նույն տրամաբանությամբ կարելի է դիսկրետ բաշխումից անցնել անընդհատ բաշխման [3], պարզապես փոխարինելով էնտրոպիան հետևյալ մեծությամբ՝

$$S(p) = - \int_0^\infty p(x) * \log(p(x)) dx:$$

Բաշխման վրա կդրվի ոչ բացասական լինելու և հետևյալ պայմանները՝


$$\int_0^\infty p(x) dx = 1, E(c_i(x)) = \int_0^\infty p(x) * c_i(x) dx = d_i:$$

Այստեղ $c_i(x)$ -ով նշանակել ենք օպցիոնի գինը ժամանակահատվածի վերջում կամ նույն “PayOut”-ը: Պետք է ճշգրտել այս արտահայտությունը դիսկոնտավորման գործակցով (որը կարելի է անտեսել կարճ ժամանակահատվածների դեպքում): Համապատասխան բաշխումը կունենա հետևյալ տեսքը՝

$$p(x) = \frac{1}{\lambda_0} * e^{\sum_{i=1}^m \lambda_i * c_i(x)}, \lambda_0 = \int_0^\infty e^{\sum_{i=1}^m \lambda_i * c_i(x)} dx:$$


Այս դեպքում Հեսսի մատրիցի անդամները դառնում են տարբեր կատարման գներով օպցիոնների գների կովարիացիան: Սա կարելի է օգտագործել որպես մատրիցի դրական որոշվածության մեկ այլ հիմնավորում:

Նկ. 1-ում պատկերված է նպատակային ֆունկցիայի մի օրինակ մինիմումի կետի շրջակայքում՝




Նկ. 1. Նպատակային ֆունկցիայի տեսքը

Պատկերից ակնհայտորեն երևում է նպատակային ֆունկցիայի ուռուցիկ լինելը: Հաջորդ պատկերում կառուցվել են նպատակային ֆունկցիայի մակարդակի կորերը և լուծման գործընթացում յուրաքանչյուր իտերացիայի շարժը $-H'(x_0) * f'(x_0)$ ուղղությամբ (նկ.2):




Նկ. 2. Մակարդակի կորերը և իտերացիաները

Հաջորդ նկարում պատկերված է “iPath S&P GSCI Crude Oil TR ETN” օպցիոնի տվյալներից ստացված բաշխումը (նկ.3) :



Իսկ այստեղ SPDR Gold Shares (GLD) օպցիոնի համար բաշխումը երկու բարձր հաճախականության կետ ունի՝ ի հակադրություն նախորդ յունիմոդալ դեպքի (նկ.4):



Եզրակացություն. Սույն մեթոդով ստացված բաշխումը համարյա միշտ յունիմոդալ է, ունի բավականին բարձր անորոշություն, ինչը բավարարում է մոդելի տրամաբանական պահանջներին: Սկզբնական գների փոքր փոփոխության դեպքում բաշխումը շարունակում է մնալ կայուն և ցուցաբերում է աննշան փոփոխություններ: Սակայն ուժգին տատանումները զգացնել են տալիս, թե՛ տեսքի միջոցով, թե՛ թվային պարամետրերով: Ամենաբարձր հաճախականության կետը միշտ ստացվում է ակտիվի իրական գնին մոտիկ, այսինքն՝ ամենամեծ սպասումները կապված են ներկա գնի հետ, ներկա գինը լավագույն գնահատականն է ապագայի համար: Չնայած մոդելի մոտեցմանը, այն չի հակասում դասական տեսությանը՝ օպցիոնի գնահատման Բլեք-Շոլզ-Մերտոնի մոդելին, այն ընդամենն առաջարկում է հակառակ մոտեցում. որոշել ակտիվի բաշխումը՝ ունենալով ներկա գինը:

Ստացված մոդելը հնարավոր է կիրառել տարբեր կանխատեսումների համար՝ մասնավորապես պորտֆելների կառուցման դեպքում: Դասական մոտեցումը հիմնված է պատմական տվյալների հիման վրա սպասվող եկամտաբերության և վարիացիայի հաշվարկի վրա: Այս մոտեցումը թույլ է տալիս հաշվել այս ցուցանիշները ոչ թե պատմական տվյալների, այլ ներկա պահին շուկայի կողմից ձևավորված սպասումների հիման վրա: Բացի այդ, նախատեսում ենք այս մոդելը օգտագործել պարզելու, թե որքանով է լավ շուկան կանխատեսում ակտիվների գները: Ստացված մեթոդը կարող է օգտագործվել նաև պետական մարմինների ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից տարբեր ակտիվների գների կանխատեսման համար:

Գրականություն

1. **Alhassid Y., Agmon N. and Levine R.D.** An Upper Bound for The Entropy and Its Applications to the Maximal Entropy Problem // Chem. Phys. Lett. – 1978. – 53. – P. 22.
2. **Alhassid Y., Agmon N. and Levine R.D.** An Algorithm for Finding the Distribution of Maximal Entropy // Journal of Computational Physics. -1979. – 30. – P. 250-258.
3. **Buchen Peter W., Kelly Michael.** The Maximum Entropy Distribution of an Asset Inferred from Option Prices // Journal of Financial and Quantitative Analysis. - Mar., 1996. – 31. – P. 143-159.

22.11.2016.

Н.Д. Маргарян

ОЦЕНКА РАСПРЕДЕЛЕНИЯ ЦЕНЫ АКТИВА МЕТОДОМ МАКСИМАЛЬНОЙ ЭНТРОПИИ

Рассматривается вопрос применения метода максимальной энтропии при оценке распределения цены актива. Энтропия - довольно известная величина, однако в задачах финансового типа применяется редко. При данной частичной рыночной информации метод максимальной энтропии строит распределение, которое меньше всего связано с отсутствующей информацией, становясь таким образом меньше всего предвзятой.

Ключевые слова: максимальная энтропия, информация, распределение, опционы, портфель.

N.D. Margaryan

ASSESSMENT OF ASSET PRICE DISTRIBUTION USING MAXIMUM ENTROPY METHOD

The issue of the application of maximum entropy method in the assessment of asset price distribution is considered. Entropy is itself a well known quantity and has a corresponding history, however it has been rarely used in financial type of problems. At the partial market information the maximum entropy method constructs a distribution, which is least connected to the missing information, thus being the least prejudiced.

Keywords: maximum entropy, information, distribution, options, portfolio.

Մարգարյան Նարեկ Դավիթի - մագիստրոս (ԵՊՀ)

ՀՏԴ 621.316

ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ ԵՎ ՍԱՐՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Դ.4. Առաքելյան

ՍԻՆԽՐՈՆ ՇԱՐԺԻՉԻ ՌԵԱԿՏԻՎ ՀՋՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ստացվել են բանցահայտ և ոչ բանցահայտ բևեռներով սինխրոն շարժիչների գեներացնող ռեակտիվ հզորության հետազոտման անալիտիկ կախվածությունները: Հետազոտվել է ռեակտիվ հզորության հարաբերական մեծությունների կախվածությունը սնման լարումից, գրգռման հոսանքի, ստատորի հոսանքի, ինչպես նաև խարսխի փաթույթի ինդուկտիվ դիմադրություններից: Ստացված կախվածությունները կարելի է կիրառել տարբեր աշխատանքային ռեժիմներում աշխատող ցանկացած տիպի բանցահայտ և ոչ բանցահայտ բևեռներով սինխրոն շարժիչի կոմպենսացման հնարավորությունների գնահատման համար:

Առանցքային բառեր. սինխրոն շարժիչ, ռեակտիվ հզորություն, գնահատում, գրգռման հոսանք:

Ներածություն: Հայտնի է, որ տարբեր տեխնոլոգիական գործընթացների աշխատանքն ապահովող էլեկտրաբանեցման շարժիչները միաժամանակ ռեակտիվ հզորության աղբյուր են, այն հիմնականում պայմանավորված է սինխրոն շարժիչների և սինխրոն կոմպենսացման ստորև ներկայացված առավելություններով [1,2].

- հնարավորություն է տալիս ապահովել գրգռման շրջադարձ և տրվող ռեակտիվ հզորության կարգավորման լայն միջակայք,

- ապահովում է ցանցի լարման տատանումներից ոչ մեծ կախվածություն,

- բարձրացնում է համակարգի կայունությունը,

- կարգավորման բարձր արդյունավետություն: Ցանցի լարման նվազման դեպքում սինխրոն կոմպենսացման համար գեներացվող ռեակտիվ հզորությունը մեծանում է,

- գեներացվող ռեակտիվ հզորության սահուն կարգավորման հնարավորություն, որն ապահովում է համակարգի աշխատանքի կայունությունը և բարելավում է ցանցի ռեժիմային պարամետրերը,

- կարճ միացման ռեժիմի ժամանակ ստատորի փաթույթի բավարար ջերմային և էլեկտրադինամիկական կայունություն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակակից էներգատար տեխնոլոգիական գործընթացներում էլեկտրաէներգիայի տնտեսման համար կարևորվում է այդ գործընթացում օգտագործվող էլեկտրաբանեցման սինխրոն շարժիչների կոմպենսացման հնարավորությունների օգտագործումը [3,4], անհրաժեշտություն է առաջանում հետազոտել և վերլուծել սինխրոն շարժիչների գեներացվող ռեակտիվ հզորության վրա ազդող գործոնները:

Աշխատանքի նպատակն է բանցահայտ բևեռներով և ոչ բանցահայտ բևեռներով սինխրոն շարժիչի գեներացվող ռեակտիվ հզորության վրա ազդող գործոնների վերլուծությունը:

Խնդրի դրվածքը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտադրական ձեռնարկություններում՝ որպես էլեկտրաբանեցման շարժիչներ օգտագործվում են բանցահայտ և ոչ բանցահայտ բևեռներով սինխրոն շարժիչներ, նկատի ունենալով, որ միատեսակ հզորության շարժիչների գեներացնող ռեակտիվ հզորությունները տարբեր են սույն աշխատանքում դիտարկվել են ինչպես բանցահայտ, այնպես էլ ոչ բանցահայտ բևեռներով սինխրոն շարժիչների վրա ազդող գործոնները:

Ռեակտիվ հզորության վրա ազդող գործոնների գնահատման ալգորիթմ: Բանցահայտ և ոչ բանցահայտ բևեռներով սինխրոն շարժիչների կողմից գեներացվող ռեակտիվ հզորությունները համապատասխանաբար որոշվում են հետևյալ կերպ [4]

$$Q_B = 3 \left[\frac{U_c E_f}{x_d} \cos \theta + \frac{U_c^2}{2} \left(\frac{1}{x_q} - \frac{1}{x_d} \right) \cos 2\theta \right], \quad (1)$$

$$Q_{NB} = 3 \left[\frac{U_c E_f}{x_d} \cos \theta - \frac{U_c^2}{2} \left(\frac{1}{x_q} + \frac{1}{x_d} \right) \right], \quad (2)$$

իսկ հարաբերական միավորներով [4]՝

$$K_{QB} = \frac{Q}{S_H} = 3 \left[\frac{K_u K_{fE}}{x_d} \cos \theta + \frac{K_u^2}{2} \left(\frac{1}{x_q} - \frac{1}{x_d} \right) \cos 2\theta \right], \quad (3)$$

$$K_{QNB} = 3 \left[\frac{K_u K_{fE}}{x_d} \cos \theta - \frac{K_u^2}{2} \left(\frac{1}{x_q} + \frac{1}{x_d} \right) \right], \quad (4)$$

որտեղ U_c -ն U_H -ը համապատասխանաբար՝ ստատորի փաթույթին տրվող փաստացի և անվանական լարումներն են, E_f -ը, E_{fH} -ը գրգռման փաստացի և անվանական էլեկտրաշարժ ուժերն են, θ -ն շարժիչի հիմնական էլշու-ի և ցանցի լարման միջև ներքին անկյունն է, x_d, x_q - ն՝ խարսխի փաթույթի ինդուկտիվ դիմադրությունները՝ ըստ երկայնական և լայնական առանցքների:

Օգտագործվել են հետևյալ նշանակումները՝


$$K_u = \frac{U_c}{U_H}, \quad K_{fE} = \frac{E_f}{E_{fH}}:$$

θ անկյունը արտահայտելով $\cos \varphi$ հզորության գործակցով՝ (1) և (2) արտահայտությունները համապատասխանաբար կընդունեն հետևյալ տեսքը [5]՝


$$K_{QB} = 3 \left[\frac{K_u K_{fE}}{x_d} \cos \left(\arctg \frac{K_I \cos \varphi}{\frac{K_u}{x_q} + K_I \cos \varphi} \right) + \frac{K_u^2}{2} \left(\frac{1}{x_q} - \frac{1}{x_d} \right) \cos \left(2 \arctg \frac{K_I \cos \varphi}{\frac{K_u}{x_q} + K_I \cos \varphi} \right) \right], \quad (5)$$

$$K_{QBN} = 3 \left[\frac{K_u K_{fE}}{x_d} \cos \left(\arctg \frac{K_I \cos \varphi}{\frac{K_u}{x_q} + K_I \cos \varphi} \right) - \frac{K_u^2}{2} \left(\frac{1}{x_q} + \frac{1}{x_d} \right) \right], \quad (6)$$

որտեղ $K_I = I/I_H$; I -ն, I_H -ը համապատասխանաբար՝ ստատորի փաթույթի փաստացի և անվանական հոսանքներն են:




Նկ. 1. Բացահայտ բևեռներով սինխրոն շարժիչի ռեակտիվ հզորության հարաբերական մեծության կախումը լարման հարաբերական մեծությունից գրգռման հոսանքի տարբեր արժեքների դեպքում




Նկ. 2. Ոչ բացահայտ բևեռներով սինխրոն շարժիչի ռեակտիվ հզորության հարաբերական մեծության կախումը լարման հարաբերական մեծությունից գրգռման հոսանքի տարբեր արժեքների դեպքում


Նկ. 1-4 վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես բացահայտ, այնպես էլ ոչ բացահայտ բևեռներով սինխրոն շարժիչի կողմից գեներացվող ռեակտիվ հզորությունները սրընթաց աճում են սնման լարման աճին զուգընթաց: Միաժամանակ հարկ է նշել, որ շարժիչի գրգռման հոսանքի մեծացումն առաջացնում է շարժիչի գեներացնող ռեակտիվ հզորության աճ, ինչի արժեքը ոչ բացահայտ բևեռներով սինխրոն շարժիչի համար գերազանցում է բացահայտ բևեռով շարժիչի համար ստացվող ռեակտիվ հզորությանը:




Նկ. 3. Բացահայտ բևեռներով սինխրոն շարժիչի ռեակտիվ հզորության հարաբերական մեծության կախումը ստատորի հոսանքի հարաբերական մեծությունից սնման լարման տարբեր արժեքների դեպքում




Նկ. 4. Ոչ բացահայտ բևեռներով սինխրոն շարժիչի ռեակտիվ հզորության հարաբերական մեծության կախումը ստատորի հոսանքի հարաբերական մեծությունից սնման լարման տարբեր արժեքների դեպքում




Նկ. 5. Բացահայտ բևեռներով սինխրոն շարժիչի ռեակտիվ հզորության հարաբերական մեծության կախումը լարման հարաբերական մեծությունից X_d -ի տարբեր արժեքների դեպքում



Նկ. 6. Ոչ բացահայտ բևեռներով սինխրոն շարժիչի ռեակտիվ հզորության հարաբերական մեծության կախումը լարման հարաբերական մեծությունից X_d -ի տարբեր արժեքների դեպքում



Նկ. 7. Բացահայտ բևեռներով սինխրոն շարժիչի ռեակտիվ հզորության հարաբերական մեծության կախումը լարման հարաբերական մեծությունից X_q -ի տարբեր արժեքների դեպքում



Նկ. 8. Ոչ բացահայտ բևեռներով սինխրոն շարժիչի ռեակտիվ հզորության հարաբերական մեծության կախումը լարման հարաբերական մեծությունից X_q -ի տարբեր արժեքների դեպքում

Նկ. 5-8 վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես բացահայտ, այնպես էլ ոչ բացահայտ բևեռներով սինխրոն շարժիչների գեներացնող ռեակտիվ հզորություններն աճում են x_d -ի և x_q -ի մեծացման պարագայում, միաժամանակ բացահայտ բևեռներով սինխրոն շարժիչի դեպքում ռեակտիվ հզորության աճը գերազանցում է բացահայտին:

Եզրակացություն: Կախումների ստացված արդյունքները հնարավորություն են տալիս գնահատել բացահայտ և ոչ բացահայտ բևեռներով սինխրոն շարժիչների գեներացվող ռեակտիվ հզորության փոփոխությունը տարբեր գործոնների փոփոխման պայմաններում: Ստացված արդյունքները կարևորվում են սինխրոն շարժիչի կոմպեսացման հնարավորությունների կիրառման պարագայում:

Գրականություն

1. Вольдек А.И., Попов В.В. Электрические машины. Машины переменного тока. – СПб., 2010. – 352 с.
2. Кацман М.М. Справочник по электрическим машинам. - М.: Академия, 2005. - 480 с.
3. Çolak, Bayindir R., Bay Ö.F. Reactive power compensation using a fuzzy logic controlled synchronous motor // Energy Conversion and Management. – 2003. - Vol. 44, issue 13. - P. 2189-2204.
4. Вершинин П.П., Хашпер Л.Я. Применение синхронных двигателей в металлургии.- М.: Металлургия, 1974. - 272 с.
5. Багдасарян М.К., Аракелян Д.К. Исследование влияния отклонения напряжения на реактивную мощность синхронного двигателя // Вестник НПУА: Электротехника, энергетика. - 2016. - N1.- С.27-36.

10.02.2017.

Д.К. Аракелян

АНАЛИЗ ВОЗДЕЙСТВИЯ ФАКТОРОВ НА РЕАКТИВНУЮ МОЩНОСТЬ СИНХРОННОГО ДВИГАТЕЛЯ

Получены аналитические зависимости для исследования реактивной мощности генерируемых явнополюсного и неявнополюсного синхронных двигателей. Для относительной величины реактивной мощности исследована зависимость реактивной мощности от напряжения питающей сети, тока возбуждения, тока статора, а также индуктивного сопротивления обмотки якоря. Полученные зависимости можно использовать для оценки компенсирующей способности любого типа явнополюсного и неявнополюсного синхронных двигателей при разных рабочих режимах.

Ключевые слова: синхронный двигатель, реактивная мощность, оценка, ток возбуждения.

D.K. Arakelyan

ANALYZING THE FACTORS INFLUENCING THE SYNCHRONOUS MOTOR REACTIVE POWER

The analytic dependences of investigating the generating reactive power of synchronous motors with explicit and implicit poles are obtained. The dependence of the reactive power relative values on the supply voltage, the inductive resistances of excitation current, stator current, as well as the anchor winding is investigated. The obtained dependences can be applied for estimating the compensation possibilities of an explicit and implicit pole synchronous motor of any type, working in different operation modes.

Keywords: synchronous motor, reactive power, estimation, excitation current.

Առաքելյան Դավիթ Կարենի – ասպիրանտ (Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան)

ՀՏԴ 621.382: 621.383

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Ռ.Ռ. Վարդանյան, Հ.Ս. Պետրոսյան

ԱՐԵՎԱՅԻՆ ՀԱՐԹ ՊԱՆԵԼԱՅԻՆ ԵՎ ԿՈՆՑԵՆՏՐԱՏՈՐԱՅԻՆ ՖՈՏՈԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դիտարկվում են արևային հարթ պանելային և կոնցենտրատորային տիպի ֆոտոէլեկտրական փոխակերպիչների կառուցվածքը և բնութագրիչ հատկությունները: Կատարվում է նշված երկու տիպի արևային էներգիայի փոխակերպիչների համեմատական վերլուծություն:

Առանցքային բառեր. արևային, ֆոտոէլեկտրական փոխակերպիչներ, պանելային, կոնցենտրատորային, վերլուծություն:

Ներածություն: Վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը կարևորագույն խնդիր է մարդկության համար: Այդպիսի աղբյուրներ են՝ արևի և քամու էներգիաները, կենսազանգվածը, Երկրի ընդերքի, ծովերի և օվկիանոսների էներգիաները և այլն: Այս էներգիայի աղբյուրներից ամենահզորը Արևն է: Այն էներգիայի ճառագայթման տեսանկյունից մի հազվագյուտ կայուն ջերմամիջուկային գեներատոր է, որի էներգիան գործնականորեն անսպառ է:


Արևային էներգիան հիմնականում օգտագործվում է երկու ձևով՝ ջերմային և էլեկտրական էներգիաների փոխակերպման միջոցով: Էլեկտրական փոխակերպումը կատարվում է կիսահաղորդչային ֆոտոէլեկտրական փոխակերպիչներով: Վերջիններս ապահովում են արևային էներգիայի ուղիղ փոխակերպումը էլեկտրականի [1]: Արևային էներգիայի ֆոտոէլեկտրական փոխակերպիչները էկոլոգիապես մաքուր են, անաղմուկ, չեն պահանջում շահագործման մեծ ծախսեր, օգտագործվում են երկար տարիներ:

Ֆոտոէլեկտրական փոխակերպիչներն իրենց հերթին լինում են հիմնականում հարթ պանելային և կոնցենտրատորային տիպերի: Ներկայումս լայն տարածում են ստացել հարթ պանելային տիպի ֆոտոէլեկտրական փոխակերպիչները: Դա բացատրվում է վերջին տարիներին այդ ոլորտի գիտատեխնիկական մեծ ձեռքբերումներով և հարթ պանելային փոխակերպիչների արտադրության նորագույն տեխնոլոգիաների կիրառությամբ:


Կատարվում են նաև մեծածավալ աշխատանքներ արևային կոնցենտրատորային ֆոտոէլեկտրական փոխակերպիչների մշակման և էներգետիկ կայանների կառուցման ուղղությամբ: Այս մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ կոնցենտրատորային ֆոտոէլեկտրական փոխակերպիչների արդյունավետությունը բավականին բարձր է, որը հնարավորություն է տալիս միավոր մակերեսից ստանալ ավելի շատ էներգիա, քան հարթ պանելների կիրառության դեպքում: Այսպես, կոնցենտրատորային ֆոտոէլեկտրական մոդուլի արդյունավետությունը ներկայումս կազմում է 43,4% [2], այն դեպքում, երբ հարթ պանելային մոդուլի արդյունավետությունը մոտավորապես 15% է: Սակայն կոնցենտրատորային ֆոտոէլեկտրական փոխակերպիչների կիրառության դեպքում առաջ են գալիս այլ խնդիրներ, օրինակ, ճշգրիտ կերպով արևի ընթացքին հետևելու կամ ֆոտոէլեկտրական փոխակերպիչների հովացման խնդիրը:

Այսպիսով, արևային հարթ պանելային և կոնցենտրատորային ֆոտոէլեկտրական փոխակերպիչներն ունեն իրենց դրական և բացասական հատկանիշները: Հետևաբար, հետագա հետազոտական և կիրառական բնույթի աշխատանքների իրականացման նպատակներով խիստ կարևոր է ուսումնասիրել նշված երկու տիպի փոխակերպիչների բնութագրերը և կատարել դրանց համեմատական վերլուծություն, ինչին էլ նվիրված է տվյալ աշխատանքը:

1. **Արևային հարթ պանելային և կոնցենտրատորային ֆոտոէլեկտրական փոխակերպիչների կառուցվածքը:** Արևային էներգիայի հարթ պանելային ֆոտոէլեկտրական փոխակերպիչները կազմված են արևային մարտկոցներից, որոնք մոտավորապես 0,5մմ հաստությամբ կիսահաղորդչային թիթեղներ են՝ պատրաստված հիմնականում սիլիցիումից: Արևի ճառագայթները (ֆոտոնները), ընկնելով արևային մարտկոցի մակերեսին և կլանվելով վերջինիս ծավալում, ստեղծում են նոր լրացուցիչ լիցքակիրներ՝ էլեկտրոններ և խոռոչներ: Ներքին էլեկտրական դաշտի ազդեցության շնորհիվ էլեկտրոնները ք տիրույթից տեղափոխվում են դեպի n տիրույթ, իսկ խոռոչները՝ n-ից դեպի p տիրույթ (նկ.1): Այսպիսով՝ արևային մարտկոցի վերևի և ներքևի մակերեսներին պատրաստված մետաղական էլեկտրոդների վրա առաջանում է պոտենցիալների տարբերություն և արտաքին շղթայով՝ բեռի դիմադրության միջոցով, անցնում է էլեկտրական հոսանք [1]:




Նկ. 1. Արևային մարտկոցի կառուցվածքը




Նկ. 2. Արևային մարտկոցի և արևային պանելի տեսքերը

Արևային մարտկոցները միացվում են հաջորդաբար և լամինացիայի միջոցով տեղադրվում են պաշտպանիչ ապակու տակ: Այնումիևից պատրաստված շրջանակի մեջ տեղադրելուց և կոնտակտները միացնելուց հետո ստացվում է արևային հարթ պանել (նկ.2): Որքան մեծ ելքային հզորություն պահանջվի, այնքան մեծ թվով արևային պանելներ պետք կլինի օգտագործել՝ միացնելով դրանք հաջորդաբար կամ զուգահեռաբար՝ կախված պահանջվող ելքային լարման և հոսանքի արժեքներից:

Կոնցենտրատորային ֆոտոէլեկտրական փոխակերպիչները կազմված են արևի ճառագայթները կոնցենտրացնող օպտիկական սարքերից և ֆոկոսում տեղադրված կիսահաղորդչային արևային մարտկոցներից: Կոնցենտրացնող սարքերը լինում են հիմնականում երկու տիպի՝ ուսպնյակային բեկող (նկ.3) կամ հայելային անդրադարձնող (նկ.4): Այս սարքերը կարող են լինել կետային կամ գծային ֆոկուսացումով:



Նկ. 3. Ֆրենելային ուսպնյակային կոնցենտրատոր



Նկ. 4. Պարաբոլային հայելային կոնցենտրատոր

Կոնցենտրացնող համակարգերում օգտագործվող արևային մարտկոցները որպես կանոն կազմված են մի քանի p – n անցումներից և ունեն բավականին բարձր ՕԳԳ (ավելի քան 40%): Այսպիսով, կոնցենտրատորային ֆոտոէլեկտրական փոխակերպիչները հնարավորություն են տալիս էապես նվազեցնել օգտագործվող կիսահաղորդչային նյութերի քանակը, դրանով՝ իսկ նվազեցնել համակարգի արժեքը: Սակայն այստեղ առաջ է գալիս արևի ընթացքին մեկ կամ երկու կոորդինատներով հետևող սարքերի կիրառության անհրաժեշտությունը, ինչը հանգեցնում է լրացուցիչ ծախսերի:

2. Հարթ պանելային և կոնցենտրատորային արևային ֆոտոէլեկտրական փոխակերպիչների համեմատական վերլուծություն: Հարթ պանելային արևային ֆոտոէլեկտրական փոխակերպիչների (նկ.5) առավելությունները հետևյալն են.

- բավականին ցածր ինքնարժեք (ներկայումս այն մոտավորապես 0,5 ԱՄՆ դոլար է մեկ Վտ հզորության համար),
- լավ մշակված և դյուրին արտադրական գործընթացի առկայություն, մշակված տեխնոլոգիա (ցածր ռիսկայնություն),
- հուսալի և երկարաժամկետ ծառայության հնարավորություն,
$$g(x) = (x + \alpha)(x + \alpha^2)(x + \alpha^3)(x + \alpha^4) = \alpha^3 + \alpha x + x^2 + \alpha^3 x^3 + x^4,$$

т.е. получили код $RS(7, 3)$ с $8^3 = 512$ кодовыми словами. При $\nu = 3$ имеем короткий, непрактичный код $RS(7, 1)$ всего с 8 кодовыми словами.

Рассмотрим этот же код $RS(7, k)$, но для другого примитивного полинома, $p_2(x) = 1 + x^2 + x^3$. Элементы поля находим из условия $1 + \alpha^2 + \alpha^3 = 0$ или $\alpha^3 = 1 + \alpha^2$. Тогда $\alpha^1 = \alpha; \alpha^2 = \alpha^2; \alpha^3 = 1 + \alpha^2; \alpha^4 = \alpha \cdot \alpha^3 = \alpha + \alpha^3 = 1 + \alpha + \alpha^2; \alpha^5 = \alpha \cdot \alpha^4 = 1 + \alpha; \alpha^6 = \alpha \cdot \alpha^5 = \alpha + \alpha^2; \alpha^7 = \alpha \cdot \alpha^6 = 1 = \alpha^0$. Полином $p_2(x)$ - примитивный, т.к. он делит $x^n + 1$ при $n = 2^m - 1 = 7$ [5].

Пусть опять $\nu = 1$ и $r = 2$. Тогда

$$g(x) = (x + \alpha)(x + \alpha^2) = \alpha^3 + \alpha^6 x + x^2.$$

При $\nu = 2$ и $r = 4$ имеем

$$g(x) = (x + \alpha)(x + \alpha^2)(x + \alpha^3)(x + \alpha^4) = \alpha^{10} + x + \alpha^3 x^2 + \alpha^2 x^3 + x^4.$$

Естественно, что получены другие генераторные полиномы, хотя код тот же - $RS(7, k)$, т.к. *примитивные полиномы и корректирующие способности разные!*

Рассмотрим теперь 5-ричный код РС, т.е. $p = 5$, $m = 1$. Тогда $n = p^m - 1 = 4$, т.е. имеем конечное поле $GF(5)$ с элементами 0, 1, 2, 3, 4. Примитивными элементами этого поля являются 2 и 3 [7]. Для построения кода $RS(4, k)$ используем, например, примитивный элемент $\alpha = 3$.

Вычислим генераторный полином для случая $v = 1$. Тогда $r = 2$ и из (18) имеем

$$g(x) = (x + \alpha)(x + \alpha^2),$$

где $\alpha = 3$; $\alpha^2 = 3^2 = 9 \equiv 4 \pmod{5}$.

Окончательно имеем

$$g(x) = (x + 3)(x + 4) = x^2 + 3x + 4x + 12 = x^2 + 7x + 12 \equiv x^2 + 2x + 2 \pmod{5}.$$

Итак, получили код $RS(4,2)$ с исправлением одной ошибки. Количество кодовых слов в этом коде равно $5^2 = 25$.

Из рассмотренных примеров видно, что количество кодовых слов увеличивается с ростом длины кода и числа информационных символов. Например, для кода $RS(31,27)$ имеем $32^{27} = 4,35561 \cdot 10^{40}$ кодовых комбинаций.

Заключение. Таким образом, можно сделать некоторые обобщения. Во-первых, в генераторном полиноме кода РС всегда присутствуют все его члены. Поэтому структурная схема кодера РС должна содержать все коэффициенты полинома $g(x)$, т.е. $g_0, g_1, g_2, \dots, g_r$, причем всегда $g_r = 1$. Во-вторых, степень генераторного полинома всегда равна r . В-третьих, всегда присутствует свободный член g_0 генераторного полинома. Конечно, все это усложняет аппаратуру кодера, но зато, по-видимому, обеспечивает более высокую корректирующую способность по сравнению с другими циклическими кодами.

Литература

1. Блейхут Р. Теория и практика кодов, контролирующих ошибки / Пер с англ.; Под ред. К.Ш. Зигангирова. – М.: Мир, 1986.- 576 с.
2. Reed-Solomon Codes and Their Applications / S.B. Wicker and V.K. Bhargava (eds.).- N.Y.: IEEE Press, 1994.-321 p.
3. Rhee M.Y. Error Correcting Coding Theory. - N.Y.: McGraw-Hill, 1989.- 461 p.
4. Wicker S.B. Error Control Systems for Digital Communication and Storage.- N.J.: Prentice-Hall, 1994.- 503 p.
5. Скляр Б. Цифровая связь. Теоретические основы и практическое применение. 2-е изд. / Пер. с англ.- М.: Издательский дом "Вильямс", 2003.- 1104 с.
6. Золотарев В.В., Овечкин Г.В. Помехоустойчивое кодирование. Методы и алгоритмы: Справочник/ Под ред. чл.-кор. РАН Ю.Б. Зубарева.-М.: Горячая линия - Телеком, 2004.-126 с.
7. Морелос-Сарагоса Р. Искусство помехоустойчивого кодирования. Методы, алгоритмы, применение / Пер. с англ. В.Б. Афанасьева.- М.: Техносфера, 2005.- 320 с.
8. Гомцяц О.А. Методы формирования блочных циклических кодов // Вестник НПУА: Информационные технологии, электроника, радиотехника.- 2016.- №1.- С.85-93.

27.01.2017.

Հ.Ա. Գոմցյան, Ա.Գ. Ղուլյան, Բ.Ֆ. Բադալյան

ԲՈՒԽ-ՉՈՒԽԻՍՈՒՐԻ-ՀՈԿՎԻՆԳԵՄԻ ԵՎ ՌԻԴ-ՍՈԼՈՄՈՆԻ ԿՈԴԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Դիտարկված են Բոուգ-Չոուդհուրի-Հոկվինգեմի և Ռիդ-Սոլոմոնի կոդերի հիմնական պարամետրերը, կառուցման մեթոդիկան և օրինակները: Մեթոդիկայի հիմքում ընկած է համապատասխան գեներատորային բազմանդամի ձևավորումը, որն էլ սահմանում է կոդի կառուցվածքը և բնութագրերը: Բերված է սխեմատիկ և ոչ սխեմատիկ կոդերի մաթեմատիկական նկարագրությունը, դիտարկված են կիրառման ոլորտները:

Առանցքային բառեր. խանգարումակայուն կոդավորում, վերջավոր դաշտեր, Բոուգ-Չոուդհուրի-Հոկվինգեմի և Ռիդ-Սոլոմոնի կոդեր, սխեմների փաթեթներ:

H.A. Gomtsyan, A.G. Ghulyan, B.F. Badalyan

BOSE-CHAUDHURI-HOCQUENGHEM AND REED-SOLOMON CODES CONSTRUCTION

The basic parameters, methods and examples of Bose-Chaudhuri-Hocquenghem (BCH) and Reed-Solomon (RS) codes construction are considered. The method is based on the formation of the corresponding generator polynomial, which determines the structure and characteristics of code. The mathematical description of systematic and non-systematic cyclic codes is given, the fields of application are considered.

Keywords: error-correction coding, finite fields, Bose-Chaudhuri-Hocquenghem and Reed-Solomon codes, packets of errors.

Гомцяц Оганес Авакович - кандидат технических наук, доцент (НПУА)

Гуляян Альберт Гарегинович - доктор физико-математических наук, академик НАН РА (ИРФиЭ)

Бадалян Бениамин Феликсович - кандидат технических наук, доцент (НПУА)

ՀՏԴ 62-50

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ, ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ
ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ


Տ.Ն. Հովհաննիսյան

ՓՈՔՐ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԹՈՉՈՂ ՍԱՐՔԻ Լ1 ԱԴԱՊՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիտարկված են որոշ հարցեր, որոնք առնչվում են թափանցիկ կառավարման և հենակետային աստղերի օգնությամբ եռառանցք կողմնորոշման համակարգով տիեզերական փոքր թռչող սարքի կայունությանը: Հիմնվելով դրական իրական փոխանցման մատրիցների հատկությունների վրա՝ ցույց է տրված, որ այդպիսի համակարգերը կայուն են աղապտացիայի գործակցի կամայական մեծ արժեքների, նույնիսկ աջակողմյան զրոներով համակարգերի դեպքում:

Առանցքային բառեր. տիեզերական թռչող սարք (ՏԹՍ), թափանցիկ կառավարման համակարգ, միատիպ համակարգ, աղապտիվ կառավարում, բնութագրիչ փոխանցման ֆունկցիա:

Ներածություն: Նկ. 1-ում դիտարկված է թափանցիկ կառավարման և հենակետային աստղերի օգնությամբ եռառանցք կողմնորոշման վերահսկողության համակարգերով տիեզերական փոքր թռչող սարքի կինեմատիկ սխեման [1]:



Նկ. 1. Երկու հենակետային աստղերի օգնությամբ տիեզերական փոքր թռչող սարքի հետևող համակարգի կինեմատիկ սխեման

Ինչպես ցույց է տրված նկ. 1-ում, աստղային տվիչներն ունեն միայն երկառանցք շարժման հնարավորություն և տեղադրված են թռչող սարքի լայնական հատույթում միմյանց ուղղահայաց ուղղությամբ: Աստղային տվիչների նման դասավորությունն ապահովում է համակարգի եռառանցք կողմնորոշում հենակետային աստղերի նկատմամբ [1]:


Այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են ավիատիեզերական ինժեներիան, քիմիական արդյունաբերությունը և այլն, շատ հաճախ, ի հայտ են գալիս այսպես կոչված *միատիպ* բազմաչափ կառավարման համակարգեր (ԲԱԿՀ) [2]: Վերոնշյալ տիեզերական թռչող սարքի հենակետային աստղերի օգնությամբ կողմնորոշման համակարգը նույնպես դասվում է նման ԲԱԿՀ-ի դասին: Հենակետային կոչվում են այն աստղերը, որոնք իրենց պայծառությամբ զգալիորեն առանձնանում են շրջապատող աստղերի ֆոնի վրա, այդ իսկ պատճառով կարող են օգտագործվել հետևելու համար: Նման համակարգերում չափման տարրերի՝ տվյալ դեպքում աստղային տվիչների զգայունության առանցքները չեն համընկնում ՏԹՍ-ի առանցքների հետ, որի արդյունքում առանձին կապուղիների միջև կոշտ (որոնց երբեմն անվանում են կինեմատիկ) փոխադարձ կապեր են առաջանում, որոնք կախված են հենակետային և ուսումնասիրվող աստղերի կազմած անկյուններից, ինչպես նաև

աստղային տվիչների տեղակայման եղանակից: Այդ կապերը հաստատուն են աստղերի կոնկրետ փոխադարձ դասավորության դեպքում և փոփոխվում են միայն այլ ուսումնասիրվող աստղի անցնելիս, որի համար սովորաբար ընտրվում է նոր, հարմար հենակետային աստղերի զույգ:

L1 ադապտիվ կառավարմամբ փոքր SԹՄ-ի կայունության վերլուծություն: Դիտարկվել է տիեզերական փոքր թռչող սարքի համակարգում L_1 բազմաչափ ադապտիվ կառավարումը [3]: Ի տարբերություն չափանմուշային կառավարման մոդելի (ՉՀԿՄ), որի դեպքում արագ ադապտացիայի պայմաններում տեղի էր ունենում համակարգի կայունության կորուստ, L_1 ադապտիվ կառավարումն ապահովում է համակարգի կայունությունը նույնիսկ ադապտացիայի բավականին մեծ արժեքների դեպքում [3]: Նկ. 2-ում տրված է SԹՄ-ի հետևման համակարգի բացված կառուցվածքային սխեման, երբ «հետևելն» իրականացվում է ըստ երեք լայնակի առանցքների: Կոշտ փոխադարձ կապերի $R = \{r_{ij}\}$ մատրիցն ունի հետևյալ տեսքը.

$$R = \begin{bmatrix} \cos \alpha_2 & \sin \alpha_1 \sin \alpha_2 & -\cos \alpha_1 \sin \alpha_2 \\ 0 & \cos \beta \cos \alpha_1 & \cos \beta \sin \alpha_1 \\ 0 & \sin \beta \cos \alpha_1 - \sin \varphi & \sin \beta \sin \alpha_1 + \cos \varphi \end{bmatrix} : \quad (1)$$

Միատիպ ԲԱԿՀ-ի առանձին կապուղիներն ունեն միևնույն $w(s)$ փոխանցման ֆունկցիան, իսկ կոշտ փոխադարձ կապերի մատրիցն իրական թվային մատրից է:



Նկ. 2. Փոքր SԹՄ-ի հենակետային աստղերի օգնությամբ կողմնորոշման միատիպ ԲԱԿՀ-ի մատրիցային (ա) և բացված կառուցվածքային սխեման (բ)

Միատիպ ԲԱԿ-ի փոխանցման $W(s) = \{r_{ij}w(s)\}$ մատրիցը կարող է նկարագրվել հետևյալ կերպ.

$$W(s) = w(s)R : \quad (2)$$

(2)-ից հետևում է, որ $w(s)$ փոխանցման ֆունկցիան լիովին կառավարելի և դիտարկելի է:

Որպես հաստատուն պարամետրերով գծային եռաչափ ($N = 3$) համակարգերի հիմնարար մոդել, դիտարկենք մի համակարգ, որը կարող է արտահայտվել ըստ վիճակների տարածության հետևյալ կերպ.

$$\begin{aligned} \dot{x}(t) &= Ax(t) + Bu(t), \\ y(t) &= Cx(t), \end{aligned} \quad (3)$$

որտեղ $x(t)$ -ն n_x չափողականություն ունեցող վիճակի վեկտորն է, $u(t)$ -ն և $y(t)$ -ն համապատասխանաբար՝ $N = 3$ չափողականության մուտքային և ելքային վեկտորներ են, իսկ A , B , C -ն համապատասխան չափողականության հաստատուն մատրիցներ են:

Միատիպ ԲԱԿ-ի փոխանցման $W(s)$ (2) մատրիցը կապված է (3)-ում նշված A , B , C մատրիցների հետ հետևյալ բանաձևով [4].

$$W(s) = C(sI - A)^{-1}B, \quad (4)$$

որտեղ I -ն միավոր մատրից է:

Հիմնվելով [5]-ում ստացված արդյունքների վրա՝ եռաչափ, խիստ կայուն միատիպ համակարգը վիճակների տարածությունում կարող է ներկայացվել հետևյալ հավասարումով (5), որը ներկայացնում է ինտեգրալային հետադարձ կապով գծային ԲԱԿ:


$$y(s) = w(s)q(s)Rk_g r(s) + w(s)R \left[I - q(s)[I + W_0(s)]^{-1}W_0(s) \right] \sigma(s), \quad (5)$$

որտեղ

$$W_0(s) = \frac{\Gamma}{s} W_B(s); \quad W_B(s) = B^T P(sI - A)^{-1}B : \quad (6)$$

Ինչպես երևում է (5) հավասարությունից, համակարգի ելքային ազդանշանը բաղկացած է երկու բաղադրիչից, որոնք ձևավորվել են համապատասխանաբար $r(t)$ հենակային ազդանշանից և $\sigma(t)$ վրդովմունքից:

Այժմ, հաշվի առնելով (5) հավասարությունը, կատարենք թափանցիկ կառավարման համակարգով հենակետային աստղերի օգնությամբ կողմնորոշվող փոքր ՏԹՄ-ի կայունության վերլուծություն: Ինչպես երևում է (5) հավասարության առաջին մասից՝ $w(s)$ և $q(s)$ փոխանցման ֆունկցիաների կայուն լինելու դեպքում մուտքային $r(t)$ -ով պայմանավորված գծային բաց միատիպ ԲԱԿ-ն կլինի կայուն, որը կախված չէ ադապտացիայի Γ գործակցից:



Նկ.3. $\sigma(t)$ վրդովմունքով պայմանավորված ադապտիվ համակարգի համարժեք կառուցվածքային սխեման

Ինչ վերաբերվում է (5)-ի երկրորդ մասին, որի կառուցվածքային սխեման պատկերված է նկ. 3-ում, այն պարունակում է բացասական հետադարձ օղակ բաց համակարգի $W_0(s)$ փոխանցման մատրիցով (6) և հետևյալ փակ համակարգի փոխանցման մատրիցով.

$$F_z(s) = [I + W_0(s)]^{-1}W_0(s), \quad (7)$$

իսկ բնութագրիչ հավասարման արմատները որոշվում են հետևյալ հավասարմամբ.

$$\det[I + W_0(s)] = \det\left[I + \frac{\Gamma}{s} W_B(s)\right] = 0 : \quad (8)$$

(7,8)-ից ակնհայտ է, որ աղապտիվ համակարգի բևեռները կախված են աղապտացիայի Γ գործակցից: Ինչպես երևում է, (6)-ում դիտարկված $N \times N$ ($N=3$) չափողականության $W_B(s)$ փոխանցման մատրիցը պատկանում է այսպես կոչված իրական դրական (ԻԴ) մատրիցների դասին [6]:

Այլընտրանքային է նաև միատիպ համակարգերին բնորոշ հետևյալ հավասարումների վերլուծությունը.

$$\begin{aligned} \dot{x}_i(t) &= A_0 x_i(t) + b_0 \varphi_i(t), \\ \varphi_i(t) &= \sum_{j=1}^3 r_{ij} u_j(t), \quad y_i(t) = c_0^T x_i(t) \quad (i=1,2,3), \end{aligned} \quad (9)$$

որտեղ (A_0, b_0, c_0) եռյակը համապատասխանում է $w(s)$ փոխանցման մատրիցի վիճակների տարածությունում ներկայացմանը:

(6)-ում նկարագրված $W_0(s)$ փոխանցման մատրիցը անկյունագծային չէ, սակայն, պահպանում է միատիպ համակարգին բնորոշ կառուցվածքը.

$$W_0(s) = \frac{\Gamma}{s} w_0(s) R_0, \quad (10)$$

որտեղ $w_0(s)$ փոխանցման ֆունկցիան տրվում է հետևյալ կերպ.

$$w_0(s) = b_0^T P_0 (sI - A_0)^{-1} b_0, \quad (11)$$

իսկ փոխադարձ կապերի R_0 թվային մատրիցը դրական կոդմնորոշված սիմետրիկ մատրից է.

$$R_0 = R^T R : \quad (12)$$

Հավասարում (11)-ում տրված P_0 դրական կոդմնորոշված մատրիցը Լյապունովի հավասարման լուծումն է.

$$A_0^T P_0 + P_0 A_0 = -Q_0 : \quad (13)$$

Ինչպես երևում է (9) և (11) հավասարումներից $w_0(s)$ փոխանցման ֆունկցիան պատկանում է իրական դրական ֆունկցիաների դասին, որի հատկությունները մանրամասն քննարկվել են [7] աշխատություններում:

Հիմնվելով բնութագրիչ փոխանցման ֆունկցիաների (ԲՓՖ) մեթոդի վրա [7]՝ $W_0(s)$ փոխանցման (6) մատրիցը կարող է ներկայացվել հետևյալ կանոնական տեսքով.

$$W_0(s) = L \text{diag}\{q_i^0(s)\} L^{-1}; \quad q_i^0(s) = \lambda_i \frac{\Gamma}{s} w_0(s) \quad (i=1,2,3), \quad (14)$$

որտեղ $q_i^0(s)$ -երը կոչվում են $W_0(s)$ -ի բնութագրիչ փոխանցման ֆունկցիաներ, ունիտար մոդալ L մատրիցը կազմված է R_0 սիմետրիկ մատրիցի օրթոնորմալ l_i սեփական վեկտորների բազմությունից (12) և λ_i իրական դրական սեփական արժեքներից:

(8)-ում նկարագրված բնութագրիչ հավասարումը կունենա հետևյալ տեսքը.

$$\det[I + W_0(s)] = \prod_{i=1}^3 \left[1 + \lambda_i \frac{\Gamma}{s} w_0(s) \right] = 0, \quad (15)$$

իսկ նկ. 3-ում դիտարկված միատիպ աղապտիվ համակարգը կորոշվի $N=3$ բնութագրիչ հավասարումներով.

$$1 + \lambda_i \frac{\Gamma}{s} w_0(s) = 0 \quad (i=1,2,3): \quad (16)$$

Հաշվի առնելով [7]-ում ներկայացված արդյունքները՝ կարող ենք ասել, որ $q_i^0(s)$ ԲՓՖ-երը ունեն 1 կամ 2 հարաբերական աստիճան, նույնիսկ, (2)-ում տրված $w(s)$ փոխանցման ֆունկցիայի աջակողմյան զրոների դեպքում: Բացի այդ, $q_i^0(j\omega)$ -ի փուլերը միշտ $\leq \pm 180^\circ$, ինչից հետևում է, որ $q_i^0(j\omega)$ Նայքվիստի կորերը չեն կարող ընդգրկել $(-1, j0)$ սահմանային կետը, աղապտացիայի Γ

գործակցի ցանկացած արժեքների դեպքում: Ի վերջո, $q_i^0(s)$ ԲՓՖ-ի արմատային հոդորաֆը կձգտի անսահմանության, երբ $\Gamma \rightarrow \infty$, բացասական իրական կիսաառանցքի երկայնքով կամ կեղծ առանցքին զուգահեռ ափսոսաբանության երկայնքով, որոնք ընկած են ձախ կիսահարթությունում:

Եզրակացություն: Յույց է տրվել, որ նկ. 2-ում պատկերված ՏԹՄ-ի միատիպ բազմաչափ ադապտիվ համակարգը կայուն է ցանկացած $W(s)$ կայուն փոխանցման մատրիցի և ադապտացիայի ցանկացած Γ գործակցի դեպքում: Այդ պնդումը բխում է այն փաստից, որ նկ. 3-ում նկարագրված ԲԱԿՀ-ի (6)-ում տրված $W_B(s)$ փոխանցման մատրիցը պատկանում է իրական դրական մատրիցների դասին:

Գրականություն

1. **Wie B.** Space Vehicle Dynamics and Control, Reston, VA: American Institute of Aeronautics and Astronautics.- 2008. 2nd ed. - 966p.
2. **Gasparyan O.N.** Linear and Nonlinear Multivariable Feedback Control: A Classical Approach.-John Wiley & Sons, UK, 2008. -354p.
3. **Hovakimyan N. and Cao C.** L1 Adaptive Control Theory-Guaranteed Robustness with Fast Adaptation. -SIAM, Philadelphia, 2010. -340p.
4. **Skogestad S. and Postlethwaite I.** Multivariable Feedback Control. Analysis and Design.-John Wiley and Sons Ltd., Chichester, Sussex, UK, 2005. -595p.
5. On Application of L1 Adaptive Control to Multivariable Control Systems. Part I. General-Type Multivariable Systems / **T. Hovhannisyan, N. Vardanyan, O. Gasparyan, N. Hovakimyan**, et al // Известия НАН РА и ГИУА. Сер. ТН. – 2014. – Т.67, №4. – С. 434-445.
6. **Ioannou P. and J. Sun.** Robust Adaptive Control.- Prentice Hall, 1996. -834p.
7. On Application of L1 Adaptive Control to Multivariable Control Systems. Part 2. Uniform Systems / **T. Hovhannisyan, N. Vardanyan, O. Gasparyan, N. Hovakimyan**, et al // Известия НАН РА и ГИУА. Сер. ТН. – 2015. – Т.68, №2. – С. 238-249.

09.01.2017.

Т.Н. Оганесян

ОБ УСТОЙЧИВОСТИ L1 АДАПТИВНОЙ СИСТЕМЫ УПРАВЛЕНИЯ МАЛЫМ КОСМИЧЕСКИМ ЛЕТАТЕЛЬНЫМ АППАРАТОМ

Рассмотрены некоторые вопросы, связанные с устойчивостью многомерных систем управления малым космическим летательным аппаратом с трехосной ориентацией с помощью двух звездных датчиков. Основываясь на свойствах положительных действительных передаточных матриц, показано, что подобные системы устойчивы при произвольно больших значениях коэффициента адаптации, даже в случае систем с правосторонними нулями. Выявлены и объяснены некоторые специфические свойства однотипных адаптивных систем.

Ключевые слова: малый космический летательный аппарат, маховичная система управления, однотипная система, адаптивное управление, характеристическая передаточная функция.

T.N. Hovhannisyan

ON STABILITY OF L1 ADAPTIVE CONTROL SYSTEM OF SMALL SPACECRAFT

Some issues concerning the stability of small spacecrafts with the adaptive flywheel control and three-axis orientation via two star trackers are discussed. Based on the properties of positive real transfer matrices, it is shown that such systems are stable for arbitrary large values of the adaptation gain, even in the case of the systems with right half plane zeros.

Keywords: spacecraft, flywheel control system, uniform system, adaptive control, characteristic transfer function.

Հովհաննիսյան Տարոն Նվերի - հետազոտող, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (ՀԱՊՀ)

ՀՏԴ 62-50

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ, ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ
ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ

Լ.Գ.Կիրակոսյան

ՎԻՐՏՈՒԱԼԱՑՄԱՆ ԴԵՐՆ ԱՄՊԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՒՄ

Վերջին տարիներին արագ զարգանում են ամպային տեխնոլոգիաները, որոնք առաջարկում են շահեկան լուծում ծառայությունների, հիշողության և համակարգչային ռեսուրսների տրամադրման համար՝ առանց մեծ ներդրումների, ընթացիկ հսկողություն պահանջելու: Ծառայությունը մատուցող ընկերության տեսանկյունից ամպային տեխնոլոգիաները փոքրացնում են սարքավորումների գնման քանակն ու դրանց վերահսկողության ժամանակահատվածը: Հոդվածում ուսումնասիրվել է ամպային տեխնոլոգիաներում կիրառվող վիրտուալացման դերը դրա շահագործման և կառավարման մեջ, համակարգի ավտոմատացման հնարավորություններն ու Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում կիրառման առանձնահատկությունները:

Առանցքային բառեր. ամպ, ամպային տեխնոլոգիաներ, վիրտուալացում, կառավարում, VMware:

Ըստ Ազգային ստանդարտների և տեխնոլոգիաների ինստիտուտի սահմանման [1] ամպային տեխնոլոգիաները բաժանվում են երեք խմբի՝ Infrastructure as a service (IaaS), Platform as a service (PaaS) և Software as a service (SaaS): Ըստ տրամադրված ծառայությունների բաժանումից բացի, գոյություն ունի նաև դասակարգում ըստ տեղակայման մոդելի՝ հանրային ամպ, մասնավոր ամպ, հիբրիդային ամպ և համայնքային ամպ: Ամպային տեխնոլոգիան հիմնված է վիրտուալացման, ցանցային կարգավորումների և ծրագրային լուծումների վրա և, ելնելով այս ամենից, կարելի ասել, որ այն ոչ թե նոր տեխնոլոգիա է, այլ նոր հասկացություն, մոդել:

Օգտատիրոջ տեսանկյունից ամպը տեղափոխում է հաշվողական և տարածքային խնդիրները լոկալ սարքերից դեպի հեռադիր սերվերներ, որի շնորհիվ լոկալ համակարգչային թողունակության նկատմամբ պահանջները փոքրանում են: Ամպային ծառայություններին մուտք ունենալու համար օգտատերերը կիրառում են վեբ բրաուզեր [2]:

Հաճախ վիրտուալացումը համարում են արդեն իսկ մասնավոր ամպի շահագործում: Մակայն իրականում այդպես չէ: Վիրտուալացումը տեխնոլոգիա է, որտեղ ֆիզիկական սարքերը տարանջատվում են օպերացիոն համակարգերից և դրանց վրա տեղադրված ծրագրերից: Այս տեխնոլոգիան վերջին ժամանակների գույց և ամենակարևոր ներդրումներից է, որը հեղափոխեց տեղեկատվական ոլորտը: Վիրտուալացման ամենակարևոր հատկանիշներից մեկն այն է, որ հնարավորություն է տալիս կատարել հսկայական խնայողություններ սարքավորումների շահագործման ոլորտում: Մինչ վիրտուալացման հասանելիությունը սերվերների շահագործման օգտակար գործողության գործակիցը շատ ավելի ցածր էր, որը նախապես պայմանավորված էր նրանով, որ յուրաքանչյուր սերվերի վրա տեղադրված էր լինում մեկ օպերացիոն համակարգ: Ստացվում էր, որ յուրաքանչյուր նոր համակարգի համար գնվում էր նոր սերվեր: Բացի նոր տեխնիկայի գնման վրա ծախսված գումարների, այս լուծումն ավելի անարդյունավետ է դառնում, երբ հաշվին առնվում էներգիայի օգտագործման ծախսերը յուրաքանչյուր նոր սերվերի շահագործման ժամանակ:

Վիրտուալացումը հիմնովին հեղափոխեց այս խնդիրների լուծման ուղիները: Ապահովելով ֆիզիկական սերվերների օպտիմալացում՝ այն հնարավորություն է տալիս մեկից ավել օպերացիոն համակարգերի շահագործում մեկ ֆիզիկական սարքի վրա: Վիրտուալացման միջոցով սերվերի վրա ստեղծվում են վիրտուալ մեքենաներ, որոնք իրականում ծրագրային միջավայր են օպերացիոն համակարգի շահագործման համար: Բոլոր վիրտուալ մեքենաներն աշխատում են իրարից առանձնացված միջավայրերում:

Ավանդական լուծումների ժամանակ սերվերի վրա տեղադրվում էր մեկ օպերացիոն համակարգ, որն էլ շահագործվում էր: Եթե օգտագործվող սերվերի հիշողությունն ամբողջությամբ օգտագործված էր լինում, ապա այն պետք է փոխարինվեր նոր սերվերով կամ դրան կցվեր նորը [3]:

Ավանդական լուծումով սերվերներն ունեն հետևյալ առավելությունները՝

- համակարգերի հեշտ տեղադրում,
- վերականգնման պարզ տարբերակ:

Թերություններն են՝


- ֆիզիկական մակարդակի ղեկավարման ֆինանսականանշահավետություն,
- դուպլիկացիայի խնդիրներ,
- ֆիզիկական մակարդակի թարմացման դժվարություն:

Այս խնդիրները մեծամասամբ լուծվում են վիրտուալացման կիրառման ժամանակ: Վիրտուալացման համակարգերն իրականացնում են ծրագրային մակարդակի ինկապտույացիա՝ բաժանելով այն ֆիզիկական մակարդակից: Այս լուծումը հնարավորություն է տալիս առաջիկայում, անհրաժեշտության պարագայում, տեղափոխել տեղադրված օպերացիոն համակարգը (տրամադրվող ծառայության հետ) մեկ այլ ֆիզիկական սերվերի վրա:

Տեխնոլոգիայի մեկ այլ առավելություննայն է [4], որ եթե շահագործման ընթացքում տրամադրված ռեսուրսները բավարար չլինեն, ապա առանց որևէ ապարատային կառուցվածքի փոփոխության, հնարավոր կլինի կատարել լրացուցիչ ռեսուրսների հավելում արդեն առկա վիճակին: Բացի այդ, եթե հաշվի առնենք, որ տարածքը հնարավոր է տրամադրել նաև այնպես, որ օգտատերն ինքնուրույն կարգավորումներ անի, ապա այս պարագայում ևս պարզ է դառնում, որ լուծումը միայն վիրտուալացմանկիրառումն է: Այս տեխնոլոգիան տրամադրում են մի շարք ընկերություններ՝ բաց և փակ կոդով տարբերակներով [5]: Բաց ծրագրային կոդով լուծումները հնարավորություն են տալիս փոքրացնել կատարվող ծախսերը: Ընդհանուր առմամբ վիրտուալացման կիրառումը տալիս է հետևյալ առավելությունները


- կիրառվող ֆիզիկական ռեսուրսների ՕԳԳ-ի բարձրացում,
- գնի նվազում՝ ելնելով ֆիզիկական սարքերի քանակի փոքրացումից,
- սպասարկման ծախսերի փոքրացում,
- վերականգնման ծախսերի փոքրացում,
- ադմինիստրատորման փոքրացում,
- ծրագրերի տեղադրման ժամանակի կրճատում,
- համատեղելիության խնդիրների կրճատում:

Որպես վիրտուալացման տեխնոլոգիա՝ ուսումնասիրենք VMware տեխնոլոգիան [6]՝ հաշվի առնելով տեխնոլոգիայի լայն ֆունկցիոնալն ու համատեղելիության բարձր ցուցանիշները: Վիրտուալացման համակարգը տեղադրվում է սերվերի վրա, որպես դրա հիմնական օպերացիոն համակարգ (նկ. 1): Առաջիկայում տեղադրվող օպերացիոն համակարգերը (ՕՇ) արդեն իսկ տեղադրված հիմնական օպերացիոն համակարգի «հյուր» ՕՇ-երեն: Համակարգը հնարավորություն է տալիս «հյուր» օպերացիոն համակարգերի տեղափոխություն (migration), կլոնավորում (cloning), առաջիկայում ռեսուրսների ավելացում, հիշողության տարածքի մեծացում և այլն [7]: Համակարգի առավելություններից է նաև CloudStack ամպային համակարգի հետ ինտեգրված լինելը [8]:



Նկ.1. Վիրտուալացման տեխնոլոգիայի կառուցվածքը [6]

Ամպային տեխնոլոգիաներում տարածք/հիշողությունը վիրտուալ կերպով տրամադրվում է օգտատերերին, որն էլ պահանջում է կենտրոնական սերվեր (պլատֆորմ), որտեղ հիպերվայզորը (ծրագիր, որն ուղիղ աշխատում է ֆիզիկական սարքերի հետ) աշխատում է (նկ.2):



Նկ.2 Հիմնական կառուցվածքը

Վիրտուալացման մոդելը կազմված է ամպային ծառայությունից օգտվող օգտատերերից, ծառայության մոդելից, վիրտուալացման մոդելից և ամբողջ ծառայությունը մատուցող ծրագրից, որն անմիջապես աշխատում է ֆիզիկական մակարդակի հետ: Վիրտուալացման տեխնոլոգիան հնարավորություն է տալիս մեկ սերվերի վրա շահագործել մեկից ավելի օպերացիոն համակարգեր՝ այդպիսով բարձրացնելով շահագործվող սերվերի արդյունավետությունը: Բացի այն, որ մեկ ֆիզիկական սերվերի վրա շահագործվում են մի քանի օպերացիոն համակարգեր, դրանք նաև օգտագործում են սերվերի հզորությունը միայն այն ժամանակ, երբ դրա կարիքն ունենում են: Այսինքն՝ եթե մեկ օպերացիոն համակարգը նշված պահին ավելի շատ պրոցեսորային թողունակության կարիք ունի, ապա վիրտուալացման համակարգն այդ պահին ՕՏ-ին տրամադրում է իր կողմից պահանջված թողունակության ծավալը: Այս առավելություններից բացի, ամպային տեխնոլոգիաներում վիրտուալացման առավելություններին ավելանում են նաև հետևյալ առավելությունները՝

- չկա ֆիզիկական սերվերներ ձեռք բերելու անհրաժեշտություն,
- ռեսուրսները վարձակալվում են ըստ կարիքների,
- ինքնուրույն վիրտուալ մեքենաների ստեղծման հնարավորություն:

Ելնելով վիրտուալացման առավելություններից և դրա շահագործման մեծ ծավալներից, այժմ ապարատային արտադրողներն ապահովում են վիրտուալացման շահագործումն իրենց կողմից արտադրված ֆիզիկական սարքավորումների վրա: Այսպես, «Ինթել» ընկերությունը առաջինն էր, որ ներկայացրեց Intel® VT տեխնոլոգիան: Intel® VT -ի աշխատանքային սկզբունքը պրոցեսորի վիրտուալացման ապահովումն է [9]: VMware ընկերությունը նույնպես ունի հատուկ լուծումներ տարբեր ընկերությունների կողմից արտադրված սերվերների համար՝ յուրաքանչյուրի համար իր իսկ դրայվերների ինտեգրումով:

Վիրտուալացումն ապահովում է մի շարք գործողությունների ավտոմատացում[6], որոնցից են՝

- վիրտուալ մեքենաների տրամադրում,
- վիրտուալ մեքենաների ռեսուրսների վերաբաշխում,
- համակարգերի աշխատանքի մասին տեղեկատվության տրամադրում:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում (ՀԱՊՀ) ստեղծվող ամպային լուծումների համար կարևորագույն դեր ունի վիրտուալացումը, որի վրա կառուցվում են բոլոր մյուս համակարգերը: Կիրառելով VMware ընկերության կողմից առաջարկվող լուծումները՝ հնարավոր է դառնում մեկ ֆիզիկական սերվերի վիրտուալացման շնորհիվ աշխատացնել 5 վիրտուալ կառավարման համակարգ, որոնց դերը ՀԱՊՀ ամպային լուծումների [3] անխափան և անվտանգ աշխատանքի

ապահովումն է: Բացի այդ, ներդրված ամպային ծառայությունները մատուցող համակարգը՝ Apache Cloudstack-ը նույնպես աշխատում է վիրտուալացման հիմունքներով [10]: Մինչդեռ ժամանակ, առկա խնդիրներին համապատասխան ծառայությունը մատուցող ծրագրային լուծումներն սրբելիս, ներդնելիս, պետք է հաշվի առնել համակարգի հետագա ընդլայնման ու անվտանգության խնդիրները, վերականգնման գործիքամիջոցների առկայությունը:

Գրականություն

1. <http://nvlpubs.nist.gov/nistpubs/Legacy/SP/nistspecialpublication800-145.pdf>
2. **Kirakosyan L.G., Nazaretyan Kh.A.** Cloud system deployment and management // ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ Տեղեկագիր. – 2016. - Հ.69, N4. – Էջ 439-446:
3. **Vouk M.A.** Cloud Computing Issues Research and Implementations // Journal of Computing and Information Technology. – 2008. -16.- P. 235–246.
4. <https://software.intel.com/en-us/articles/the-advantages-of-using-virtualization-technology-in-the-enterprise>
5. <http://www.serverwatch.com/server-trends/slideshows/top-10-virtualization-technology-companies-for-2016.html>
6. <https://www.vmware.com/pdf/virtualization.pdf>
7. https://www.vmware.com/pdf/vi_architecture_wp.pdf
8. <http://docs.cloudstack.apache.org/projects/cloudstack-installation/en/4.9/hypervisor/vsphere.html>
9. <http://www.intel.com/content/www/us/en/virtualization/virtualization-technology/intel-virtualization-technology.html>
10. <https://cloudstack.apache.org/>

01.02.2017.

Л.Г. Киракосян

РОЛЬ ВИРТУАЛИЗАЦИИ В ОБЛАЧНЫХ ТЕХНОЛОГИЯХ

В последние годы облачные технологии получили большое развитие. Они предлагают экономичное решение для таких услуг, как хранение данных и вычислительных ресурсов, без необходимости сложных реализаций или постоянного наблюдения. С точки зрения провайдера, реализация облачных технологий уменьшает количество аппаратных средств и программного обеспечения, необходимого для поддержки упомянутых выше систем. Исследованы роль виртуализации в области облачных технологий, доступные методы автоматизации и особенности реализации облачной системы в Национальном политехническом университете Армении.

Ключевые слова: облако, облачные технологии, виртуализация, управление, VMware.

L.G. Kirakosyan

VIRTUALIZATION'S ROLE IN CLOUD TECHNOLOGIES

Cloud computings have had a fast grow in recent years. They offer cost-effective solution for such services as data storage and computing resources, without the need of complicated implementations or ongoing monitoring. From the provider's perspective cloud computing implementation reduces the amount of hardware and software needed to support above mentioned systems. The research of virtualization's role in cloud computing, available automation methods and system's role in cloud implementation at National Polytechnic University of Armenia are studied.

Keywords: cloud, cloud technology, virtualization, management, VMware.

Կիրակոսյան Լևոն Գասպարի - ՀԱՊՀ ասպիրանտ, ՀԱՊՀ Տեղեկատվական համակարգերի և ցանցերի սպասարկման բաժնի պետ

ՀՏԴ 621.3.049.77

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ, ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ
ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ


Դ.Ռ. Բաբայան

ԲԱՐՁՐ ՀԱՃԱԽԱԿԱՆԱՅԻՆ ՑԱԾՐ ԷՆԵՐԳԱՍՊԱՌՄԱՄԲ ԼԱՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՓՈԽԱԿԵՐՊԻՉ

Առաջարկվում են սխեմատեխնիկական մոտեցումներ ցածրից բարձր մակարդակի փոխակերպիչի համար, որոնց հիմնական նպատակն է ապահովել ցածր էներգասպառում և ճշգրիտ մեկի/զրոյի տևողությունների հավասարություն (լցման գործակից): Առաջարկվող սխեմատեխնիկական եղանակները իրենց մեջ ինտեգրում են ուժեղ զրո ապահովող տրանզիստորների հանգույց և վիճակը պահպանող/վերականգնող հանգույց: Բերված համակարգի առավելությունները առավել հստակ են երևում 0,5 ԳՀց-ից բարձր հաճախությունների դեպքում՝ ապահովելով զգալի էներգախնայում՝ մինչև ժամանակ ունենալով մակերեսի մեծացում:

Առանցքային բառեր. մակարդակի փոխակերպիչ, ցածր էներգասպառում, վիճակը պահպանող/վերականգնող հանգույց:

Ներածություն: Հայտնի է, որ էներգասպառումը ինտեգրալ սխեմաներում կարևորագույն խնդիր է [1]: Նույնը նաև ապացուցում են ճարտարագետների շրջանում անցկացված հարցման արդյունքները (նկ. 1):




Նկ. 1. Ճարտարագետների շրջանում կատարված հարցման արդյունքները

Կան էներգասպառման նվազեցման մի շարք մեթոդներ [2] (ԷՆՄ), որոնցից երկուսում կիրառելի են լարման մակարդակի փոխակերպիչները.

- բազմակի սնման լարումներով նախագծման մեթոդ,
- հզորության շրջափակման մեթոդ:

Լարման փոխակերպիչները երկու տեսակի են՝ բարձրից ցածր և ցածրից բարձր. երբ ազդանշանը փոխանցվում է տարբեր լարումներով աշխատող տիրույթների, անհրաժեշտ են լարման մակարդակի փոխակերպիչներ: Դրանք բաշխվում են ամբողջ սխեմայով և գրավում բավականին մեծ մակերես, ունենալով մեծ էներգասպառում, ուստի շատ կարևոր է լարման փոխակերպիչների էներգախնայող լինելը [3]: Ցածրից բարձր լարման մակարդակի փոխակերպիչներում ենթակառավարող ազդանշանը ավելացնում է հապաղումը մուտքերում, որն իր հերթին կարող է հանգեցնել փոխանջատման հոսանքի

մեծացման և աղմուկների: Դանդաղ անցման ժամանակը նշանակում է, որ ազդանշանը ծախսում է ավելի շատ ժամանակ շեմային լարման վրա, որի արդյունքում կարճ միացման հոսանքը ավելի երկար կհոսի [4]: Այսպիսի մակարդակի փոխակերպիչի օրինակ է ցույց տրված նկ. 2-ում:



Նկ.2. Ցածրից բարձր մակարդակի դասական փոխակերպիչ

Այս կառուցվածքն ունի տրամաբանական կրկնիչներ և շրջված ցածր լարման փոխակերպիչ: Դեպի վեր մակարդակի փոխակերպումը պահանջում է երկու սնման գիծ և սովորաբար կիսում՝ ընդհանուր հողանցումը [5]: Ցածրից բարձր մակարդակի փոխակերպիչներն ունեն գզալի մեծ հապաղում՝ բարձրից ցածր մակարդակի փոխակերպիչների համեմատ: Բերված ցածրից բարձր մակարդակի փոխակերպիչն ունի հետևյալ թերությունները՝ առաջին. բարձր հաճախականային տիրույթներում աշխատելու ժամանակ առաջանում է բավականին մեծ չափի N-ՄՕԿ տրանզիստորներ ունենալու անհրաժեշտություն (4...5 անգամ մեծ քան հաջորդաբար միացված վերին մասում տեղակայված P-ՄՕԿ տրանզիստորները): Երկրորդ թերությունն այն է, որ դրական հետադարձ կապի արագության ոչ բավարար լինելու պատճառով ավելի շատ ժամանակ է անհրաժեշտ, որպեսզի մակարդակի փոխակերպիչի տրանզիստորները գան հաստատուն վիճակի, ինչը ավելորդ փոխանջատման հոսանքի սպառման պատճառ է դառնում: Երրորդ՝ նշված տիպի մակարդակի փոխակերպիչներում բարձր հաճախությունների դեպքում բավականաչափ բարդ է ապահովել փոխանջատման խնդիրը՝ թույլ դրական հետադարձ կապի շնորհիվ [6]:


Առաջարկվող լարման մակարդակի փոխակերպիչների կառուցվածքները: Առաջարկվող կառուցվածքում օգտագործվել է լրացուցիչ տրանզիստորների հանգույց, որը հնարավորություն է ընձեռում զուգահեռ ճյուղով ապահովել լիցքաթափում, ունենալ ուժեղ զրո: Ապահովելով զուգահեռ տրանզիստորային միացում՝ զումարային դիմադրությունն իջնում է, ինչը հնարավորություն է ընձեռում ստանալ ավելի արագ անցում դեպի զրո մակարդակ՝ միաժամանակ կրճատելով անցումային երևույթների տևողությունը և այդ ժամանակահատվածում սպառված դինամիկ հզորությունը (նկ. 3):

Նոր մոտեցման շնորհիվ համակարգը դառնում է ավելի արագագործ, կայուն՝ ապահովելով հուսալի փոխանջատում, ինչը նպաստում է մետաստաբիլ անկայուն վիճակ ընկնելու հավանականության նվազմանը:

Հաճախ գերմեծ ինտեգրալ սխեմաներում կիրառվում է էներգախնայող վիճակ, որն առավել հայտնի է որպես ստատիկ քնի վիճակ [6]: Այդ ռեժիմում համակարգում ազդանշանի փոխանցում, ընդունում կամ մշակում տեղի չի ունենում, այդ իսկ պատճառով շատ հաճախ սխեման ընկնում է պասիվ վիճակ: Պասիվը այն վիճակն է, երբ համակարգի սնուցումը ակտիվ է, բայց շղթայի ճյուղերը անջատված են սնուցման դողից բանալի տրանզիստորների միջոցով: Միևնույն ժամանակ բանալի տրանզիստորների մեծ կորստյան հզորության պատճառով, (պայմանավորված նաև տրանզիստորների քանակով, ճյուղավորման գործակցով) ստացվում է գզալի էներգասպառում [5]: Այդ էներգասպառումը կանխելու ընդունված եղանակներից է սնուցման լարման իջեցումը կիսով չափ


The top diagram shows a 1T1C1D1S SR latch. It consists of two cross-coupled inverters. The left inverter has a PMOS transistor P10 and an NMOS transistor N2. The right inverter has a PMOS transistor P8 and an NMOS transistor N7. The inputs are IN and IN!. The outputs are connected to the gates of the transistors. The bottom diagram shows the CMOS implementation of the latch. It features two PMOS transistors P11 and P9 connected to VDDH, and two NMOS transistors N3 and N4 connected to Gnd. The inputs IN and IN! are connected to the gates of P10 and N2, respectively. The outputs are connected to the gates of P8 and N7, respectively. The bottom diagram also shows a CMOS implementation of the latch using two inverters and a cross-coupled structure, with inputs IN1 and IN! and outputs IN and Gnd.

Առաջարկվող տարբերակում ներդրված են հետադարձ կապով իրար միացված երկու տրամաբանական ՈՉ տարրեր՝ վիճակը պահպանելու և այնուհետև վերականգնելու համար։ Առաջարկվող կառուցվածքում գրեթե չկա մետաստաբիլ վիճակ ընկնելու հավանականություն, քանի որ զուգահեռ միացված N-UOU (N18 և N19) և հաջորդաբար միացված P-UOU (P23 և P25) տրանզիստորները սխեմատիկական միացմամբ կապված են դրական հետադարձ կապին՝ սխեմային գերծ պահելով սկզբնական անկայուն վիճակ ընկնելու հավանականությունից։ Այսպիսով, տվյալ մակարդակի փոխակերպիչն ապահովում է երկու հիմնական գործառույթ՝ տվյալների փոխանցում մակարդակի փոփոխությամբ և վիճակի պահպանում՝ անհրաժեշտության դեպքում, ապահովելով բարձր կայունություն և ցածր էներգասպառում (նկ. 4)։



Նկ.4. Ցածրից բարձր մակարդակի փոխակերպիչ, առաջարկվող էներգախնայող սխեմատիկական կառուցվածք

Ստացված արդյունքների ամփոփում: Կատարվել է երեք նախագիծ՝ բոլորի համար հիմք ընդունելով մուտքային նույն պայմանները: Մուտքային լարման մակարդակը 0,95Վ է, ելքային լարման մակարդակը փոխակերպումից հետո՝ 1,8Վ: Մուտքային ազդանշանի հաճախությունը 1 ԳՀց է:



Նկ.5. Ժամանակային վարքագծի բնութագրերը (նկ. 4) –ում պատկերված առաջարկվող սխեմատիկական հանգույցի համար

Պատկերված գրաֆիկում (նկ. 5) ներկայացված է լցման գործակցի, պարբերության, հաճախության, աճի և նվազման տևողությունների կախվածությունը ժամանակից, մուտքային և ելքային ազդանշանները և դրանց կախվածությունը ժամանակից՝ կատարված նկ. 4 –ում պատկերված սխեմատիկական հանգույցի համար:

Ստացվել է մոտ 48,5% լցման գործակից, անփոփոխ միջին հաճախություն/պարբերություն 1 ԳՀց/ 1 նվ, 200 նվ/ մոդելավորման ընթացքում: Աճի և նվազման ժամանակների տարբերությունները բնութագրում են համակարգի հավասարակշռությունը լիցքավորման և լիցքաթափման ժամանակ, որը նույնպես ստացվել է տեխնիկական առաջադրանքին համապատասխան և հաշվարկվել է հետևյալ բանաձևով (1):

$$Trfdiff = \frac{Tr - Tf}{Tf} \cdot 100\% : \quad (1)$$

Առաջարկվող մակարդակի փոխակերպիչը ունի երկու աշխատանքային վիճակ առաջին՝ տվյալների փոխանցման և փոխակերպման ռեժիմ, երկրորդ՝ վիճակի պահպանման և վերականգնման ռեժիմ: Վիճակի պահպանման և վերականգնման ռեժիմ ընկնելու ազդանշանների դասակարգումը հետևյալն է. ինչպես արտացոլված է սխեմայում RE ազդանշանի 1 ակտիվացնելուն պես BA և NA ազդանշանները դառնում են տրամաբանական 0՝ փակելով N-UOU տրանզիստորները (N10 և N20): Միաժամանակ բացվում են P-UOU տրանզիստորները (P23 և P25, P26 և P27)՝ ապահովելով սնուցման լարման անկում ինտեգրված հիշող սխեմայի վրա՝ պահպանելով նախորդ վիճակը՝ հնարավորություն ընձեռելով սնուցման լարումը իջեցնել 0,95-ից մինչև 0,45 ընտրված հանգույցում: Տվյալների փոխանցման և փոխակերպման ռեժիմ ընկնելու ազդանշանների դասակարգումը հետևյալն է. RE ազդանշանը ստանում է տրամաբանական 0 մակարդակ և որոշ ժամանակ սպասելուց հետո միայն հնարավոր է ազդանշանի սնման լարումը 0,45-ից աճեցնել մինչև 0,95: Այնուհետև կարող է կատարվել տվյալների փոխանցում: Որպես օրինակ պատկերված “ԿԱՄ” հանգույցը կարող է կրկին ապահովել տրամաբանական կայուն 1 “0.95Վ” ազդանշանը միայն այն դեպքում, երբ սնման լարումը ամբողջությամբ վերականգնվել է: Ժամանակի, մակերեսի, հզորության վերլուծությունները կատարվել են դասական տարբերակի համար նկ.3-ում և 4-ում պատկերված սխեմատեխնիկական հանգույցների համար՝ պատկերված սխեմատեխնիկական հանգույցի համար: Ստացված բոլոր արդյունքները բերված են ստորև ներկայացված աղյուսակում:


Աղյուսակ

Նախագծված Մ. Փ-ների բնութագրերի համեմատությունը 3 տարբերակի համար

#Ելքային տվյալներ#	Դասական (Մ. Փ.)	Առաջարկվող (նկ. 3)-ի (Մ. Փ.)	Առաջարկվող (նկ. 4)-ի (Մ. Փ.)
Լցման գործակից (%)	40,8	46,8	48,4
Մուտքի/Ելքի փոխ. (նվ)	3,65	1,8	2,1
Հզորություն (մկՎտ)	15,65	6,9	3,4/0,12
Մակերես (մկմ ²)	8,415	9,18	10,94
#Մուտքի տվյալներ#			
Հաճախություն (ԳՀց)	1	1	1
Տեխնոլոգիական գոր. (նմ)	16	16	16
Մոդելավորման ժամ. (նվ)	200	200	200

Եզրակացություն: Առաջարկվել է նոր մոտեցումներով մակարդակի փոխակերպման հանգույց: Առաջարկվող սխեմատեխնիկական կառուցվածքները ապահովում են ելքային ազդանշանի 0,5...1,5 ԳՀց հաճախականային միջակայք: Նկ.3-ում պատկերված սխեմատեխնիկական հանգույցի տարբերակում ապահովվել է մակարդակի փոխակերպիչի արագագործությունը, հաստատուն լցման գործակիցի ստացումը: Նկ.4-ում պատկերված սխեմատեխնիկական հանգույցը ներառում է առաջին մոտեցման բոլոր հատկությունները և առավելությունները, դրա հետ մեկտեղ ունի վիճակի պահպանման առանձնահատկություն՝ ներդրված մոտեցման շնորհիվ ապահովելով համակարգի կայունությունը, զերծ պահելով մետաստաբիլ վիճակ ընկնելու հավանականությունից: Իր վիճակը պահպանելու հնարավորության շնորհիվ այն կարող է օգտագործվել բոլոր այն ինտեգրալ սխեմաներում, որոնք ունեն հանգստի ռեժիմ, ցածր էներգասպառման տիրույթ: Տվյալ սխեման լուծում է շատ հայտնի խնդիր, երբ անհրաժեշտություն է առաջանում կատարել ազդանշանի արագ վերականգնում և փոխանցում, որը հնարավոր չէր նախորդ մակարդակի փոխակերպիչներում, քանի որ վիճակը չէր պահպանվում: Հաշվի առնելով ստացված արդյունքները՝ առաջարկված սխեմատեխնիկական հանգույցը (նկ. 4) ունի էներգասպառման արդյունավետություն 79,9% (իջեցում համեմատած դասական կառուցվածքի) (նկ. 6) և լցման բարձր գործակից՝ 48,4%, միջին փոխանջատման տևողություն (2,1 նվ): Մոդելավորելով նաև ստատիկ քնի ռեժիմը, ստացվել է նաև էներգասպառումը այդ ռեժիմում, որը կազմել է 0,12 մկՎտ: Ապահովելով կայունության բարձր գործակից, դասական կառուցվածքի և նկ.3-ում պատկերված սխեմատեխնիկական հանգույցի համեմատ, կարող ենք գալ հետևյալ եզրահանգման, որ առաջարկված սխեմատեխնիկական հանգույցը (նկ.4) լավագույնն էր քննարկվող տարբերակներում անգամ այն պարագայում, երբ ստացվել էր մակերեսի մեծացում:

Էներգասպառման համեմատում



Նկ. 6. Մոդելավորված երեք տարրերակի համար էներգասպառման համեմատման դիագրամ

Գրականություն

1. **Rabaey J.** Low Power Design Essentials. -2009.- 457 p.
2. **Babayan D.** Power optimization approach of ORCA processor for 32/28nm technology node // Computer Science and Information Technologies (CSIT, 2015).-Yerevan, Armenia, 2015.- P. 231-233.
3. **Baker J.** CMOS Circuit Design, Layout and Simulation. -2010. - 1152 p.
4. **Jd Alioto M.** Ultra-low power VLSI circuit design demystified and explained // A tutorial IEEE Trans. Circuits Syst. I, Reg. Papers. - Jan. 2012. - Vol. 59, and the M.S. degree in electrical engineering from no. 1. - P. 8-25.
5. **Lanuzza M., Crupi F.** An Ultralow-Voltage Energy-Efficient Level Shifter // Journal of Semiconductors. IEEE Transactions on Circuits and Systems II: Express Briefs. - Vol. 99. - P. 1 – 3.
6. **Melikyan V., Babayan D.** 32/28 nm low power ORCA processor with multi-voltage supply // 10th International conference on semiconductor micro- & nanoelectronics (ICSMN-2015).- Yerevan, Armenia, 2015.- P. 1-4.

20.01.2017.

Д.Р. Бабаян

ВЫСОКОЧАСТОТНЫЙ КОНВЕРТЕР НАПРЯЖЕНИЯ С НИЗКИМ УРОВНЕМ ЭНЕРГОПОТРЕБЛЕНИЯ

Предлагаются схематические решения для конвертера напряжения с низкого до высокого уровня. Первое схематическое решение дает возможность работать в разных частотных полосах с низкого до высокого уровня. Схематическая особенность в том, что использовались дополнительные транзисторы, обеспечивающие сильный ноль, влияние которых видно при высоких частотах, начиная с 0,5 ГГц. Предлагаемое 2-е схематическое решение представляет собой конвертер со структурой, которая интегрирует в себе схематическую петлю, сберегающую и восстанавливающую состояние, в то же время содержит предлагаемые привилегии 1-го схематического решения. Частота исходящего сигнала разработанных схем составляет 1 ГГц. Проекты были реализованы с 16 нм технологическим процессом. Предлагаемые схемы, по сравнению с другими в литературе популярными решениями, имеют более низкое энергопотребление, в то же время обеспечивая высокоточное равенство длительностей единицы и нуля (коэффициент заполнения).

Ключевые слова: низкое энергопотребление, конвертер напряжения, петля, сберегающая и восстанавливающая состояние.

D.R. Babayan

LOW POWER LEVEL SHIFTER WITH WIDE FREQUENCY BANDWIDTH

Schematic structures of up level shifter are proposed, to implement high frequency and low power perspectives. Operating frequency range toggle between 0.5-1.5 Ghz. The first schematic contains solution for providing strong zero, for feedback system, which will allow system to be faster, power efficient and to provide high percentage of duty cycle. The second suggested schematic inherits advantages of the first proposed scheme and contains schematic solution for integration of save and restore option in to LSU, to be able to switch off power by half during sleep mode, proposed LSU excludes possibility of metastability, has small propagation delay with minimum difference of rise and fall times and provides low power consumption.

Keywords: low power, level shifter, retention node.

Բաբայան Դավիթ Ռոբերտի – ասպիրանտ (Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան)

ՀՏԴ 621.3.049.77

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ, ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ
ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ


Դ.Ս. Տրդատյան

ՀԱՏՈՒԿ ՄՈՒՏՔ/ԵԼՔ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ ԷԼԵԿՐԱՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ԼԱՐՄԱՆ
ԱՆԿՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՇՏԿՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ներկայացված են էլեկտրամիգրացիայի և լարման անկման երևույթների ուղղման մեթոդները: Ժամանակակից ինտեգրալ սխեմաներում էլեկտրամիգրացիայի և լարման անկման տեխնոլոգիական պահանջներին բավարարելուն զուգընթաց անհրաժեշտ է ապահովել փոքր ունակություն և դիմադրություն: Ներկայացված մեթոդներով հնարավոր է ուղղել էլեկտրամիգրացիայի և լարման անկման երևույթները՝ խուսափելով համակարգի աշխատանքային պարամետրական փոփոխություններից, անկախ տեխնոլոգիական շեղումներից, լարման և ջերմաստիճանի փոփոխություններից: Ներկայացված մեթոդը կարող է կիրառվել հատուկ մուտք/ելք տարրերում, ինչպիսիք են՝ Double Data Rate(DDR), Universal Serial Bus(USB), Peripheral Component Interconnect (PCI):

Առանցքային բառեր. էլեկտրամիգրացիա, լարման անկում, մուտք/ելք հանգույցներ:

Ներածություն: Ինտեգրալ սխեմաներում (ԻՄ) օգտագործվող տարրերի տեխնոլոգիական պարամետրերի փոքրացման հետևանքով մուտք/ելք հանգույցներում առաջ են գալիս էլեկտրամիգրացիայի և լարման անկման երևույթներ, որոնք հիմնականում կապված են օգտագործվող մետաղական միջմիացումների չափերի փոքրացման հետ [1]: Մետաղական միջմիացումների չափերի փոքրացման հետևանքով հոսանքի թողունակությունը մետաղներում փոքրացել է, սակայն ԻՄ-երում ընդհանուր հոսանքի արժեքները չեն փոքրանում, անգամ որոշ դեպքերում մեծանում են: Դա հանգեցնում է էլեկտրամիգրացիայի և լարման անկման երևույթների առաջացմանը [2]:




Նկ. 1. էլեկտրամիգրացիայի ենթարկված հաղորդալարեր

Նկ.1-ում պատկերված են էլեկտրամիգրացիայի ենթարկված հաղորդալարեր: Մի դեպքում էլեկտրամիգրացիայի ենթարկված լարերը կարող են բարակել և կտրվել (նկ.1 ա) մյուս դեպքում հնարավոր է հաղորդալարերից մեկի հալվելու հետևանքով կարճ միացվի հարևան հաղորդալարի հետ (նկ.1 բ):

Էլեկտրամիգրացիայի հիմնական առաջացման պատճառը ԻՄ-երում բարակ հաղորդալարերն են, որոնք չեն կարողանում ապահովել տվյալ շղթայում հոսանքի թողունակությունը, ինչը հանգեցնում է հաղորդալարերի տաքացմանը [3]: Տաքացումն առաջանում է էլեկտրոնների բախումից, որոնք բախվելով միմյանց՝ պոկվում են մետաղից: Դրա հետևանքով մետաղի հաստությունը փոքրանում է, և հնարավոր է մետաղի հալում կամ միջմիացման խզում:

Լարման անկման հետևանքով ԻՄ-երում առաջին մետաղական շերտի լարումը, որն անմիջական միացված է տրանզիստորներին և ապահովում է տրագիստորին անհրաժեշտ սնուցման լարումը, փոքրանում է: Այդ երևույթի հետևանքով հնարավոր է համակարգի ֆունկցիոնալ սխալանք: ԻՄ-երում լարման անկումը առաջանում է սնուցման դղերից մինչև սնուցվող տարրեր միջմիացումների բարձր դիմադրության հետևանքով: Այդ պատճառով ժամանակակից ԻՄ-երում էլեկտրամիգրացիայի և լարման անկման երևույթները չի կարելի անտեսել [4]:




Նկ. 2. Լարման անկման օրինակ

ԻՄ-ի սնման լարման անկման թույլատրելի արժեքի գերազանցման դեպքում (նկ. 2) առաջանում է տրամաբանական սխալանք, որը շղթային տարածվելու հետևանքով բերում է սխեմայի ֆունկցիոնալ խափանման: Փոքր չափերի տեխնոլոգիաներում էլեկտրամիգրացիայի և լարման անկման երևույթների դասական ուղղման մեթոդները կիրառելի չեն, քանի որ դրանք հանգեցնում են ԻՄ-երի աշխատանքային պարամետրերի վատթարացմանը: Առաջարկվող մեթոդները հնարավորություն են տալիս խուսափել այդ երևույթներից տեխնիկական առաջադրանքից չչեղվելու պարագայում [5]:

Էլեկտրամիգրացիայի երևույթի՝ առաջարկվող ուղղման մեթոդները: Ժամանակակից ԻՄ-երում մետաղական միջմիացումներում էլեկտրամիգրացիայի երևույթի առկայության դեպքում անհրաժեշտ է փոքրացնել դիմադրությունը՝ մեծացնելով մետաղի լայնությունը: Յուրաքանչյուր տեխնոլոգիա ունի յուրահատուկ բանաձևային կապ բոլոր մետաղներով անցնող թույլատրելի հոսանքի կախվածության մետաղների երկրաչափական չափերից:

Օրինակ՝, եթե հաղորդալարի 0,5 մկմ լայնությամբ անցնող հոսանքը 900 մկԱ է, իսկ թույլատրելի հոսանքը՝ 450 մկԱ, ապա էլեկտրամիգրացիայից խուսափելու համար անհրաժեշտ է մետաղի լայնությունը մեծացնել մոտավորապես 2 անգամ (նկ. 3):




Նկ. 3. Տարբեր լայնությամբ մետաղներ

Սակայն որոշ դեպքերում մետաղի լայնությունը անհրաժեշտ է լինում մեծացնել մի քանի անգամ, որը կարող է հնարվոր չլինի իրականացնել տեխնոլոգիական սահմանափակումների պատճառով կամ կարող է հանգեցնել պարագիտային ունակությունների և դիմադրությունների արժեքների մի քանի անգամ մեծացմանը: Արագագործ մուտք/ելք հանգույցներում պարագիտային ունակությունների և դիմադրությունների մի քանի անգամ մեծացումը կարող է հանգեցնել մուտք/ելք հանգույցների պարամետրերի վատթարացմանը: Այդ դեպքերում առաջարկվում է կիրառել հոսանքի ճանապարհի փոփոխության մեթոդ, որը ենթադրում է հաղորդալարերի զուգահեռ միացումների ավելացում: Առաջարկվող մեթոդով հնարավոր է լինում խուսափել պարագիտային ունակությունների և դիմադրությունների արժեքների մի քանի անգամ մեծացումից՝ միաժամանակ ապահովելով էլեկտրամիգրացիայի բոլոր պահանջները:

Նկ. 4-ում բերված օրինակում երևում են ուղղահայաց և զուգահեռ միացումները, որոնք տվյալ հանգույցում ապահովում են էլեկտրամիգրացիայի բոլոր պայմանները: Այս մեթոդի էությունն այն է, որ հոսանքի ճանապարհը բաժանելով 4 զուգահեռ մասի, հնարավոր է լինում ավելի փոքր լայնությամբ մետաղներով ապահովել էլեկտրամիգրացիայի բոլոր պայմանները:


Մեծ էներգիա սպառող սխեմաներում էլեկտրամիգրացիայից խուսափելու համար ցանկալի է ֆիզիկական նախագծման փուլում տրանզիստորները նախագծել իրարից անկախ (օրինակ՝ չմիացնել իրար դիֆուզիայով):




Նկ. 4. Չուգահեռ միացումների օգտագործում

Լարման անկման երևույթի՝ առաջարկվող ուղղման մեթոդները: ԻՄ-երում սնուցման դողերի ոչ օպտիմալ տեղաբաշխման և միացման հետևանքով դրանցում առաջանում է լարման անկում: Ժամանակակից ԻՄ-երում օգտագործվում են 10...13 մետաղական դիմակներ: Սնուցման լարումը անհրաժեշտ է հասցնել ամենաբարձր մետաղական շերտից մինչև տրանզիստորի ակունքը առանց լարման անկման: Քանի որ բոլոր մետաղական շերտերն օժտված են դիմադրությամբ, որը պայմանավորված է դրանց ֆիզիկական չափերով՝ երկարությամբ, լայնությամբ, հաստությամբ, առանց կորստի հնարավոր չի լինում ստանալ նույն պոտենցիալը տրանզիստորի ակունքում: Լարման անկման երևույթը կարող է հանգեցնել ԻՄ-երի աշխատանքի խափանմանը: Այդ պատճառով կարևոր է ապահովել սնուցման դողերի ավելի հուսալի և փոքր դիմադրությամբ միացումներ:

Եթե սնման դողերի նվազագույն լայնությունը նշանակվի X , ապա առաջին դեպքում սնման դողերի լայնությունը կդիտարկվի $10X$: Այստեղից հետևում է, որ տվյալ մակերեսում հնարավոր կլինի օգտագործել քիչ քանակությամբ, սակայն լայն սնման դողեր: Դա կապահովի մեծ քառակուսային և ակնթարթային հոսանք: Սակայն տարրի և սնման դողի հեռավորությունից կախված՝ ավելի բարդ է լինում խուսափել լարման անկման երևույթից:



Նկ. 5. Մ/Ե հանգույցի սնման դողերի և տրանզիստորի դասավորության օրինակ



Նկ. 6. Մ/Ե հանգույցի սնման դողերի և տրանզիստորի դասավորության օրինակ 2

Ըստ նկ. 5-ում բերված օրինակի, կարելի է հետևություն անել, որ տրանզիստորի վրա լարման անկումը մեծ է լինելու, քանի որ այն գտնվում է սնման դողից բավական մեծ հեռավորության վրա:

Նկ. 6-ում պատկերված սնման դողերի և տրանզիստորի դասավորությամբ հնարավոր է սնման դողերի համեմատաբար բարակ $2X$ լայնությամբ ցանց կառուցելով՝ ապահովել հուսալի կապ տրան-

զիստորի և սնման դողերի միջև: Փոքր դիմադրությամբ միացումները հնարավորություն են տալիս խուսափել լարման անկման երևույթից, սակայն քանի որ լարերի լայնությունը փոքր է, հնարավոր է սնման դողերում էլեկտրամիգրացիայի երևույթի առաջացումը, որը հեշտությամբ կարելի է ողղել վերը նշված մեթոդներով:

